



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1627

9(38)

Y-57



2112

Ա.

ՄԵԾՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ՎԻԼԵՐԻ

Առասելէնից քորզմանեց
ՎՐԹԱՆԷՍ ՔՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Վ.Վ.Վ.ՌՃԱ.Պ.Ա.Տ

Տպարան Մայր Արքույթ Ս. Էջմիածնի

1903

30 MAY 2011
2 SEP 2006

ՄԵԾՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ

9(38)

4-57

ԿԿ



ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ՎԻԼԵՐԻ



Ուսուելէնից քարզմանեց

ԿՐԹԱՆԷՍ ՔՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՎԱԴԱՐՃԱՊԱՏ

Տպարան Մայր Արոռոյ Ս. Էջմիածնի

1903

12.08.2013

162X

ԱՅԱ ՏԵ

Дозволено цензурою 1 марта 1903 г. г. Тифлисъ

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ

3/2

Որի հովանու տակ դասիարակուել եմ

ՆՐԱ 1600-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Որդիական երախտագիտութեամբ

ՆՈՒԻԻՐՈՒՄ ԵՄ

ԻՄ ԱՅՍ ԱՐԱՉՆԱՊՏՈՒԴ ԵՐԱԽԱՅՐԻՔԸ



ՄԵԾՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ

Ա.

Մանկութիւն եւ պատանեկութիւն

Ոչ մի պատմական անձնաւորութիւն նոր աշխարհ վերակազմելու գործի մէջ չէ մատուցել այնքան ծառայութիւն, որքան Աղեքսանդր Մեծը Նրա շրջանի պատմութեան մէջ իսկապէս միաձուլում են կենսագրութիւնն ու պատմութիւնն Բոլոր անցքերը գասաւորւում են Աղեքսանդրի առաջնորդող ոգու ազգեցութեան համաձայն. ամեն բան խոնարհութեամբ հնագանդւում է նրա մեծ ոյժի առաջն Ուստի պատմելով այդ մի մարդու կեանքի մասին միայն՝ կարելի է ճշտութեամբ պարզաբանել նոյն ժամանակի պատմութիւնն Պատմական հոսանք միայն այնտեղ էր նկատում, որտեղ գտնեում էր Աղեքսանդրը. իսկ նրա ներկայութիւնից դուրս կամ բոլորովին անյայտանում կամ թոյլ կերպով էր արտայայտում նշանակում է, ինչպէս սխալում են նրանք, որոնք ենթագրում են, թէ պատմութեան մէջ մարդկային կամքը երկրորդական դեր է խաղում, կամ ոչ մի նշանակութիւն չունի. Ընդհակառակն, Աղեքսանդր Մեծի շրջանը, այժմ շատ տարածուած անտեսական—նիւթապաշտական ուսման հակառակ, համոզում է, որ նոյն իսկ եղական կամքը կարող է ամենազօր լինել:

Պլուտարքոսի խօսքերով, Մակեդոնացւոց Փիլիպպոս թագաւորը Պոտիգենին տիրելուց յետոյ երեք բարի լուր

ստացաւ. «Նա խմացաւ, որ իւր Պարմենէսն զօրապետը յազթել է իլլիւրացիներին, որ իւր ձին Ողիմալիական խաղերի մէջ ստացել է մրցանակ, և որ իւր կինը որդի է ծնել Աղքասանդր անունով» Կայ մի զրոյց էլ, թէ նոյն այդ գիշերը մեծ դժբաղդութիւն է պատահել Ասիայում, այն է. այրուել է Եփեսոսում Դիանի տաճարը։ Այդ իսկ ժամանակ մարդկային պատմութեան մէջ սկսում էր մի նշանաւորագոյն վայրկեան, այն է. մեռնում էր Աթէնքից և Սպարտայից դրուած հին կարգը և ծնւում նորը՝ նոր մարդկանցով ու դաղավարներով։ Այն մանուկը, որին սահմանուած էր այդ նոր աշխարհին որոշ ձեւ տալը, հին պատմական աշխարհից գուրս ծնուեց, բայց լեզենդաների խօսքերով, նրա երակներում հոսում էր երկու յոյն հերոսների արիւն—Հերքուլէսի՝ հօր կողմից և Աքիլլէսի՝ մօր։

Աղքասանդրը ծնուեց Պելլա քաղաքում, որ նրա հայր Փիլապոսը Մակեդոնիայի մայրաքաղաք էր դարձրել հին Եգեի տեղ, ուր նրա նախորդները թագաւորել էին։ Ինքը Մակեդոնիան Յունաստանի հիւսիսային սահմանում դրսնուած մի փոքրիկ երկիր էր, ուր բնակում էին Պելազգացի, Թրակացի և Իլլիւրացի ծագումով ցեղեր։ Նրանք բնակութիւն էին հաստատել առաւելապէս դաշտավայրում, որ ամբողջ թագաւորութեան միջուկն էր. դրա կերպոնումն էր Պելլան, Լիդիա փոքրիկ գետի ավին։ Այդ տէրութիւնը գեղջուկների մի երկիր էր, ուր գոյութիւն չունէր ոչ դասակարգ և ոչ կաստա։ Արիստոտէլի խօսքերով, թագաւորական իշխանութիւնը այդ տեղ պահպանել էր իւր բոլոր սկզբնական իրաւունքները, նոյն իսկ Սպարտայից աւելի։ Թէև իշխանութիւնը մէկ սերնդի էր պատկանում, բայց գահաժառանդութեան մասին առանձին կանոն գոյութիւն չունէր, և սովորաբար թագաւոր էր դառնում ամենաարժանաւորը նրա ներկայացուցիչներից։ Խոշոր հողատէրերը՝ թագաւորի վասալներն էին ու զինակիցները, իսկ զօրքը կազմուած էր աղատ գիւղացիներից։ Վարձկանների մասին խօսք անգամ չըկար։ Թէև մակեդոնացիք ցեղով անկաս

կած յօյն էին, բայց, անջատուած Յունաստանից՝ նրանք պահպանել էին անարատութեամբ իրանց սկզբնական, հիւսաւոյին շիկահեր, խաժակն տիպը. խօսում էին տեղական կոպիտ բարբառով, որը երբէք չէր ունեցել գրաւոր և մատենագրական ձև։ Զընայելով, որ Մակեդոնիան օտարացած էր Յունաստանի քաղաքակրթութիւնից և դեղարուեստական առաջադիմութիւնից, սակայն Արդողիգից սերուած նրա թագաւորները միշտ յօյներ էին համարւում, և նրանց մէկը Ե. դարում Ք. ծ. ա. թոյլտուութիւն ստացաւ Ոլիմպիական խաղերին մասնակցելու, որտեղ ստացաւ առաջին մրցանակը։ Այդ ժամանակից սկսած Ատտիկէի լիզուն ախրապետեց մակեդոնական արքունիքում, և թագաւորներն ամեն կերպ աշխատում էին մակեդոնական հասարակութեան մէջ յունական կուլտուրա տարածել, որի համար իրանց մօտ էին հրաւիրում նշանաւոր յօյներ։ Յիրաւի, Սոֆոկլէսն ու Սոկրատէսը հրաժարուեցին այդպատուից, բայց Հիոլպոկրատէսը գնաց Մակեդոնիա, իսկ Եւրիպիդէսն այնտեղ անցկացրեց իւր վերջին տարիները։ Փիլիպոսի մօտաւորագոյն նախորդների մշտական ձգտումները՝ Մակեդոնիան յունական տէրութիւն դարձնելու և յունական գործերի ու Արևելքի հետ կոռու մէջ մասնակցելու — գտան եռանդուն կողմանակից Աղքասանդրի հօր մէջ։

Ահա թէ ինչ հանգամանիքում ծնուեց ապագայ համաշխարհային հերոսուր։ Նա իւր ամբողջ կեանքի ընթացքը մօտ հաւատարիմ մնաց իւր ծագմանը և իւր թարմ, անազարտ ու կարող զօրութեամբ Մակեդոնիայի կատարեալ որդին եղաւ։ Իւր ծնողների վերաբերութեամբ՝ նա հօր կողմից ժառանգել էր խոհեմութիւն և կազմակերպող տաղանդ, իսկ մօր-Ոլիմպիայի կողմից՝ վառ դաղավարականութիւն։ Ոլիմպիան կպիրի թագաւորի գուստըն էր և իւր ամուսնուն վճռական, եռանգոստ ու ինքնասէր բնաւորութիւն ունէր։ Այդ պատճառով էլ նրանց ամուսնութիւնը բաղդաւոր չէր, թէև Փիլիպոսը սիրահարուած էր պսակուել։ Նրանցից իւրաքանչիւրի ինքնասիրութիւնը բոլորովին տար-

քեր էր։ Փիլիպպոսը ստունարիւն էր, խոհեմ՝ ու խորամանկ հաշուագէտ, իսկ Ոլիմպիան՝ դիւրագրգիռ, կրքոս և դիւրաբորբոք. անձնատուր ոգեսորութեան և վերայական իդէալականութեան։ Աղէքսանդրը մօրից ժառանգել էր իւր տաք բնաւորութիւնը, որը արտայայտում էր ոչ միայն վայրենի զայրացկոտ վարմունքով, այլև դէպի ընկերաները՝ վիպական խանդաղատութեամբ, դէպի թոյլերը՝ քնքոյշ կարեկցութեամբ և աղնիւ մեծահոգութեամբ, որով դէպի ինքն էր դրաւում ամենքին, և կրօնական խորին զդացմունքով՝ որն ստիպում էր նրան յարդանքով կանդառնել իւրաքանչիւր տաճարի և պատգամախօսի առաջ, Երկիւղածութեամբ երկրպագութիւն մատուցանելու անտեսանելի ուժերին։ Ընդհակառակն, խոհեմ, մարդոց և դէպքերի վերայ ունեցած իւր գործնական հայեացքով, նոյնպէս և միշտ իւր ժամանակին ու վճռականապէս գործելու փայլուն ընդունակութեամբ՝ նա պարտական էր իւր հօրը։

Թէ Աղէքսանդրը որքան իւր ծնողների խակական զաւակն էր, ցոյց կըտայ, նոյնինքն և նրա կեանքի պատմութիւնը։ Մեծ զօրութեամբ, բարձր ձգտումներով և աղնիւ, ու դէպի պարտականութիւնն ունեցած գաղափարական գիտակցութեամբ, որոնցով գերպանցեց իւր ծնողներից, նա պարտական էր, որոշ չափով, իւր գեղեցիկ կրթութեանը։ Փիլիպպոսը հապարտանում էր, որ ինքնուս էր, և ամեն բան իրան էր պարտական, բայց նա որոշեց, որ իւր որդին և ժառանգը ստանայ մի այնպիսի գաստիարակութիւնն, որով կարողանար պարծենալ ամեն մի յոյն։ Որքան յայանի է, Աղէքսանդրը հին պատմութեան մէջ ամենալաւ օրինակն է հանդիսանում, թէ ինչ կարող է անել մարդու համար կանոնաւոր մտաւոր զարդացումը։

Մինչեւ վեց տարեկան հասակը նա կանանց բաժնում մեծացաւ և նանի ըալա էր (մամենքին ընոմъ) այն մտքով, որ նա բոլորովին մօր ազգեցութեան տակ էր դտնւում։ մօրը հօրից աւելի էր սիրում, և իւրացնում

էր մօր բարոյական բնաւորութեան գլխաւոր գծերը։ Ամենից աւելի նրան խնամում էր նրա կանիկ անունով ծծմայրը, որին Աղէքսանդրը սիրում էր ոչ միայն իւր մանկութեան հասակում, այլ և իւր ամբողջ կեանքի ընթացքում։ Մի հին մատենագրի խօսքերով, նա տածում էր դէպի այդ ծծմայրը «իսկական որդիական սէր»։ Կանիկի որդիներից Պրոտէ անունով մէկը, որը Աղէքսանդրի հասակակից էր, կրթուեց վերջինիս հետ միասին և նրա մօտ էլ մնաց, իբրև նրա մշտական գործակիցներից մէկը։

Եօթ տարեկան հասակում մակեդոնացոց ապագայ հերոսը այր մարդոց ձեռքն անցաւ։ Նրա համար նշանակեցին գայեակ՝ անշնորհ, միջակ ընդունակութեան տէր Լիսիմախին, և դաստիարակ՝ Ոլիմպիայի ազգական Լէոնիդէսին։ Խիոտ, դաժան բնաւորութեան տէր Լէոնիդէսը գլխաւորապէս հոգում էր իւր սանիկի կարդապահութեան մասին։ Նա ամենից աւելի ուշադրութիւն էր դարձնում նրա բնական զարդացման վերայ և այսատում էր վարժեցնել, որպէս զի նա կարողանար տանել ամեն տեսակ գժուարութիւններ ու զրկանք, նոյնպէս և ատել շոայլութիւնը։ Աղէքսանդրի իսկ խօսքով Լիոնիդէսը միշտ քրքրում էր նրա իրերը, իմանալու թէ չէ բերել արդեօք մայրը երեխայի համար որևէ է քաղցրաւենիք կտմ շոայլութեան առարկայ։ Լէոնիդէսի մանկավարժական սիստէմի վերաբերութեամբ երկու հետաքրքիր անեկդոտներ կան Պրոտարքոսի մէջ։ Մի անգամ Աղէքսանդրի արշաւանքների ժամանակ Կարիայի թագուհին ուղարկում է նրա համար իւր ճարած ամենալաւ խոհարարներ։ Բայց Աղէքսանդրն ասում է, որ խոհարարների պէտք չունի, որովհետեւ իւր ծերունի դաստիարակ Լէոնիդէսը վազուց արդէն տուել է նրան երկու հիանալի խոհարարներ և դրանք են։ Նախաճաշի համար՝ առաւօտեան արշալոյսին զրօսանք, իսկ ճաշի համար՝ թեթև նախաճաշ։ Միւս անեկդոտը վերաբերում է այն խիստ տնտեսութեան, որը Լէոնիդէսը ներշնչել էր իւր աշա-

կերտին։ Մի անդամ Աղեքսանդրը զոհաբերութեան ներկայ գտնուելով, երկու ափ խունկ վերցրեց և ձգեց կրակի վերայ։ Բայց Լէսնիդէոր մի կողմ քաշեց Աղեքսանդրին և ասաց. «Երբ թագաւոր լինես այնպիսի երկրի վերայ, ուր խնկենի կը բռունի, այն ժամանակ կը ձգես խունկ, որքան կը կամենաս, իսկ այժմ, անտես եղիր»։ Յետոյ, Գաղա քաղաքը մեծ աւարով երբ առաւ՝ Մակեդոնիա աղգականներին, բարեկամներին ու ընկերներին ընծանեք ուղարկելիս՝ Աղեքսանդրը յիշեց Լէսնիդէուն էլ և ուղարկեց նրան մեծ քանակութեամբ խունկ հետեւեալ մակագրութեամբ։ «Այժմ դու՝ խնայողութեան համար կարող ես չը վիրաւորել աստուածներին»։

Իւր սէրը գէպի իւր վերակացու Լիսիմախին արաւայայտեց աւելի պարզ կերպով երբ նա արգէն թագաւոր էր և պաշարել էր Տիւրուրը Սնձնազո՞ւ ծերունին մինչեւ այդ ժամանակ միշտ իւր տշակերտի հետ էր, և ուղեկցում էր նրան բոլոր արշաւանքների մէջ։ Մի անդամ Աղեքսանդրը մի փաքը դնդով ուղեսրուեց Սնդիլիբանանի ստորոտները զօրին և նրանց ձիերի համար խոտ և ուրիշ ուտելեղէններ պատրաստելու նպատակով։ Լիսիմախը հետեւեց նրան և այդ արշաւանքում, բայց երբ նրանք ստիպուած եղան ձիերից իջնել ու լեռնային նեղ անցքով վեր բարձրանալ՝ ծերունին սկսեց յետ մնալ և, վերջապէս, յոդնածութիւնից էլ բոլորովին չէր կարողանում գնալ։ Աղեքսանդրը մնաց նրա հետ մի քանի զինուորներով, իսկ դունդը ոչինչ չը նկատելով, շարունակեց իւր ճանապարհը։ Սակայն, վրայ տուեց ցուրտ գիշերը, և, ինչպէս ցոյց էին տալիս պահնորդների կրակները, շուտով երեաց՝ որ թշնամին մօտիկ է։ Աղեքսանդրը մէն մինակ համարձակ կերպով յարձակուեց մօտագոյն կրակի վերայ, սպանեց կրակի մօտ տաքացող թշնամական զինուորներից երկուսին և վառուող փայտը ձեռին վերադարձաւ իւր ընկերների մօտ։ Նրանք իսկոյն մի մեծ կրակ արին և թրշնամին, հեռուից տեսնելով մեծ բոցը, կարծեց թէ շրջա-

պատուած է ահազին բանակով, ուստի և փախաւ։ Հանգիստ գիշերելով, միւս առաւուը Աղեքսանդրը յաջողութեամբ բանտկ հասցեց իւր ծերունի դայեակին։

Աղեքսանդրի մանկութեան մասին քիչ տեղեկութիւններ է պահպանուել, միայն յայտնի է, որ նա մեծացել էր որպէս համարձակ, քաջ, եռանդոտ, ինքնակամ և անհանդիս մի երեխայ։ Բուցեալի պատմութիւնը, որի ճշմարտութեան մասին կասկած չըկայ, ծառայում է նրամանկութիւնը ամենալաւ բնորոշով գիծ։ Այդ էպիզոդի (գէպէրի) ժամանակ նա 12 տարեկան էր. ահա թէ ինչպէս է պատմում Պլուտարքոսը գրա մտուին։ Ֆէլոնիկ Թեսաղացին Փիլիպոսին առաջարկեց գնել իւր «Բուցեալ» ձին տասներեք տաղանդիւ։ Բոլորը գաշտ գուրս եկան, որպէս զի փորձեն ձին, բայց ձին չափազանց խոշոր և անօգուտ երեաց։ Զին ոչ ոքի չէր թոյլ տալիս մօտենալ իրան, և Փիլիպոսի ծառաներից ոչ ոք չէր կարողանում նրա վերայ թռչել։ Թագաւորը զզուանքով հրամայեց ձին, որպէս մի վայրենի կենդանի յետ տանել։ Բայց Աղեքսանդրը, այդտեղ ներկայ գտնուելով, ասաց. «Այդ ձին չափազանց լաւն է, գոյա հետ այդպէս կողիտ վարուել չէ կարելի»։ Փիլիպոսն սկզբում ուշադրութիւն չէր գարձնում երեխայի խօսքերի վերայ, բայց երբ նա շարունակեց թախանձել, յուղուել, այն ժամանակ հայրը ասաց. «Ի՞նչ ես քեզնից մեծերին քննադատում, կարծես նրանցից լաւ գիտես, թէ ինչպէս պէտք է ձիու հետ վարուել»։ Դրա գէմ երեխան առարկեց. «Յամենայն գէպս, ես այդ ձիու հետ նրանցից աւելի լաւ կը վարուէի»։ — Ի՞նչ կը տաս ինձ, եթէ այդ քեզ չը յաջողուի։ — Իւպիտերը վկայ, ես կը վճարեմ ձիու գինը, — աղաղակեց Աղեքսանդրը։ Հայրը ձիեաղեց, իսկ երեխան ուղիղ ձիուն մօտեցաւ, բոնեց նրա սանձը ու ձիու գլուխը արեգակին դարձրեց։ Նա այդպէս արեց, որովհետեւ ձին խրանում էր իւր ստուերից։ Ապա նա վաղեց ձիու մի քանի քայլր շոյելով նրան և փաղաքական խօսքեր ասելով. իսկ երբ

ձին մի քիչ հանդարտեց, Աղեքսանդրը թուաւ նրա վերայց նա երկար ժամանակ պահում էր ձիու սանձը, բայց չէր քաշում ու ծեծում։ Սակայն, երբ նա համողուեց, որ ձին դադարել է այլ ևս նեարդային լինելուց և խիստ ցանկանում է արշաւել, թոյլ տուեց վազելու, դրդելով ու կողերին խթելով։ Փիլիպպուը և նրան շրջապատող բոլոր անձինք անհանդութեամբ նայում էին այդ տեսարանին. բայց երեխան երբ արշաւասոյր վերադարձաւ ուրախութիւնից և հպարտութիւնից շառագունած՝ բոլորն էլ ողջունեցին նրան հիացմամբ։ Փիլիպպուն ուրախութիւնից արտասուեց, իսկ երբ երեխան ձիուց վայր իջաւ, դրկեց նրան ու ասաց. «Զաւակո, վնառուիր քեզ թագաւորութիւն՝ քո ընդունակութիւններին համաձայն. Մակեդոնիան քո համար շատ փոքր է»։

Այդ ժամանակից սկսած Բուցեալը դարձաւ Աղեքսանդրի սեպհականութիւնն ու անանջատ ընկերը։ Դա մի ահիպարանոց սև նժոյգ էր, ահագին մեծութեամբ ու սպիտականիշ ճակատով։ Նա ուղեկցեց Աղեքսանդրին նրա բոլոր արշաւանքներում և մասնակից եղաւ նրա հետ բուլը կորուների վտանգներում։ Աղեքսանդրն այնպէս էր սիրում այդ նժոյգին, որ ոչ ոքի թոյլ չէր տալիս նրան հեծնել։ Կարելի է յիշել Աղեքսանդրի մանկութեան և երեք բնորոշիչ յատկութիւններն էլ։ Դեռ տղայ հասակում նա այնպէս էր փափադում դործունէութեան, որ երբ նրա հօր յազթութիւնների մասին լուրեր էին հասնում։ ասում էր իւր ընկերներին. «Հայրս ամեն բան կանի, բոլորին կը յազթի. ինձ ու ձեզ էլ բան չի մնայ կատարելու»։ Մանկական հասակից նա չափազանց հակումն ուներ դէպի քաղաքականութիւնը, և միայն այդ փառքն էր բարձր դասում։ Այնպէս որ, երբ ընկերները նրան հարցրին. կը կամենայ նա մասնակցել Ոլիմպիական խաղերին և արագավագութեան համար մրցանակ ստանալ. որովհետեւ, յիրաւի, լաւ վազող էր, — նա պատասխանեց. «Ի հարկէ կը կամենամ, եթէ միայն մրցակից»

ներս թագաւորներ լինին»։ Այդ խօսքերի մէջ, ինչ ասել կուղի, ոչ թէ գոռղողութիւն, որ նա երբէք չէր ունեցել. այլ երեսում էր ցանկութիւն՝ որ Ոլիմպիական խաղերումն էլ քաղաքական յազթութիւններ տանի։ Դեռ մանուկ հասակից թէ որքան էր հետաքրքրում նրան քաղաքականութիւնը, ցոյց է տալիս այն տարօրինակ ընդունելութիւնը, որ նա, հօր բացակայութեան ժամանակ, ցոյց տուեց Պարսից գեսպաններին։ Տասնամեայ երեխան վարուեց նրանց հետ զարմանալի քաղաքավարութեամբ ու շնորհըով։ իսկ հարցերը, որ նա տալիս էր գեսպաններին, նրանց ճանապարհորդութեան, երկրի հաղորդակցութեան միջոցների, Պարսից թագաւորի անձնաւորութեան, նրա զօրքի կազմակերպութեան և երկրի զօրութեան մասին — հիացըրին գեսպաններին։

Որքան Աղեքսանդրը մեծանում էր, Փիլիպպոսն այն քան աւելի համոզւում էր, որ նրան միայն խստութեամբ կրթել անկարելի է։ Ընդհակառակն, չափազանց խստութիւնից նա յամառ ու կոպիտ էր գառնում։ իսկ համոզւման միջոցով կարելի էր անել նրա հետ ինչ և կամենային։ Ուստի 13 տարեկան հասակում Աղեքսանդրի հայրը նրա յետագայ գաստիարակութեան շարունակութիւնը Արիստոտէլ մեծ փիլիսոփային յանձնեց. Աղեքսանդրի պէս աշակերտի համար գժուար էր գտնել նրանից աւելի լաւ ուսուցիչ։ Գերմանացի պատմաբան Յելլի խօսքերով. «Մէկը կոչուած էր ամբողջ աշխարհը նուածելու և նրան հրամայելու, իսկ միւսը՝ գտաւ և հնազանգեցրեց իրան մարդկային մտքի և մարդկային գիտութեան նոր աշխարհը»։ Արիստոտէլը Աղեքսանդրի գաստիարակութիւնը ստանձնելուց յետոյ, Պէլլի հարաւարեկմտեան կողմն գտնուած մակեդոնական կամաթիա գաւառուի նիէս քաղաքում դըպրոց հիմնեց։ Այդ գպրոցում Աղեքսանդրը ուսանում էր մի քանի յայտնի մարդկանց որդոց հետ։ Արիստոտէլը 8 տարի մնաց նիէսում և իւր աշակերտի գահ բարձրանալուց անմիջապէս յետոյ տեղափոխուեց Աթէնք, ուր

բաց արաւ իւր նշանաւոր դպրոցը Ալիքումում։ Բայց այն 8 տարիներից, որ նա անցկացրեց Մակեդոնիայում, միայն 4-ը ամբողջովին նուիրեցին Աղէքսանդրի մատառը զարգացմանը, որովհետև հետևեալ տարիները, թէև շարունակում էր զբաղուել նրանով, բայց ոչ միշտ, վասն զի թագաժառանգը այն ժամանակ մտել էր քաղաքական ու զինուորական ասպարէզը։

«Հօրս եմ պարտական դպրութեամբս, — ասում էր յետոյ Աղէքսանդրը, իսկ արժանաւոր կեանք վարելու դիմութեամբս՝ Արիստոտէլ ուսուցչիս։ Բատ երեսյթին՝ Արիստոտէն ամենից աւելի ուշադրութիւն էր դարձել իւր սանի էստէտիկական և գեղարուեստական կրթութեան վերայ։ Նա Աղէքսանդրին սովորեցրել էր քերականութիւն, ճշմարտութեամբ հետևելով այն օրէնքին՝ թէ քերականութիւնը միջոց է և ոչ նպատակ։ Ի հարկէ գրականութիւնը մեծ տեղ էր բոնում «Պօէտիկա»-ի։* Հեղինակի գասաւանդութեան համակարգութեան (սիստեմա) մէջ, և, ամենայն հաւանականութեամբ, այդ դրքի շատ երեսներն օրինակ են հանդիսանում, թէ ի՞նչ էր բերանացի սովորեցրել Արիստոտէլը իւր աշակերտախն՝ զոմերոսի և յունական մեծ ողբերգակների վերաբերութեամբ։ Ինչպէս յայտի է, մակեդոնական հերոսը միշտ վաս սէր էր տածում դէպի Հոմերոսն ու ողբերգակները (գրամատուրգները)։ Նա, Բակարիայի անապատներում, բանակի միօրինակ ձանձրալի կեանքում, կարգալով Եւրիպիդէսի, Սոփոկլէսի և Էսքիլէսի դրքերը, բաւականութիւն էր գըտնում։ Իսկ Եղիականը սրի հետ գտնում։ Էր միշտ նրա բարձի տակ։ Արիստոտէլը թէև հանգարտ, սառնարիւն դիմանական փիլիսոփայ էր և չունէր ոչ գրաւիչ արտայայտութիւն, ոչ ախորժելի բնաւորութիւն, բայց կարողանում էր ներշնչել իւր աշակերտների մէջ սէր դէպի ամեն դաշտարները և նոր ճշմարտութիւնները։ Այդ պատճառով

Ծան Տեսութիւն բանաստեղծական ստեղծագործութեան

Փիլիպպոսը շատ զո՞հ էր Արիստոտէլից. և, որդու հետ ունեցած մի զրոյցից յետոյ ասաց. «Մենք զուր տեղը չենք պատուել Արիստոտէլին և թոյլ տուել նորից շննելու այն քաղաքը, որտեղ նա ծնուել է. բարձր վարձատրութեան է արժանի այն մաշղը, որ սովորեցրել է քեզ գործունեւթեան և թագաւորների պարտականութեան վերաբերութեամբ մի այդպիսի ուղիղ հայեացք, — միևնույն է, թէ նա ինչպէս է զբագլութեամբ, թէ այլ ճանապարհով»։

Նիէսի դպրոցում Արիստոտէլի աւանդած պաշտօնական առարկաների թուում կար բնական պատմութիւնն էլ, և յետոյ Աղէքսանդրը միշտ հետաքրքրուում էր բնագիտութիւնով։ Գահ բարձրանալով, նա իւր նախկին ուսուցչին 800 տաղանդ տուեց կենդանաբանութիւնն ուսումնասիրելու համար, իսկ իւր արշաւանքների ժամանակ Արիստոտէլին 1000 մարդ յանձնեց զանազան տեղերի կենդանիների բնաւորութիւնը ուսումնասիրելու համար։ Պլուտարքոսի խօսքերով, Աղէքսանդրը, իւր կեանքի յետագայ շըրջաններում մի քանի անգամ բժշկական հմտութիւնն էլ ցոյց տուեց, որը նա Արիստոտէլից էր սովորել։ Ինչ վերաբերում է իւր մեծ գաստիարակչի փիլիսոփայական ուսման, նա, ըստ երեսյթին, ամենից աւելի՝ բարոյագիտութեան և քաղաքականութեան գասերից էր օգտուել։ Նրա ամբողջ կեանքում կարելի էր նկատել փիլիսոփայական հսունք, որը արտայայտում էր նրա ցանկութիւնների ընդարձակութեամբ, ձգտումների վեհ բնաւորութեամբ, աղնիւ զզուանքովը դէպի ամեն մի մանր և ցած բան և յարատել ջանքովը՝ մարզել իրան նուրբ բարոյական զգացմանքներով։ Աչքի առաջ ունենալով նրա ինքն իրան իշխելը, յարաբերութիւնը դէպի կանայքը և զգայական հաճոյքների վերայ հայեացքը, նա իւր ժամանակակիցներից անհամեմատ բարձր էր կանդնած։ Պլուտարքոսի խօսքերով՝ Աղէքսանդրը Արիստոտէլից ոչ միայն բարոյագիտութիւն և քաղաքականութիւն էր սովորել, այլ և մասամբ բնազանցութիւն և այն գաղտնի աս-

տուածաբանական տեսութիւնները, որ ժամանակի իմաստունները չեին քարոզում բացարձակ կերպով։ Իբրև ապացոյց, թէ Աղեքսանդրն որքան բարձր էր գնահատում Արիստոտելի այդ վերջին ուսմունքը, Պլուտարքոսը առաջ է բերում պատանի թագաւորի մի նամակը ուղղած իւր նախկին ուսուցչին, որը, Աղեքսանդրի Ասխայում ունեցած պատերազմների ժամանակ, կտորներ էր հրատարակել վերև յիշած ուսմունքից, «Աղեքսանդրը Արխատուէլին, Աղջոյն Դու վատ վարուեցիր, ակրօամատիքական (գաղտնի) տեսութիւններդ ժողովրդականացնելով։ Ինչով պէտք է տարբերուենք ուրիշներից՝ ևթէ այդ տեսութիւնները, որով մենք դաստիարակուել ենք՝ սեպհականութիւն դառնան և ամեն մէկին։ Ինչ վերաբերում է ինձ, ես աւելի շուտ բարձրադրոյն ուսման կը ցանկայի, քան ուժի ու զօրութեան»։

Այդպիսով կը թութիւն ստանալով Աղեքսանդրը 16 տարեկան հասակում քաղաքական ասպարէզ գուրս եկաւ։ 340 թուին Ք. Տ. ա. ամառը Փիլիպոսը Բիւզանդիայի դէմ արշաւեց, իսկ որդուն, Պլուտարքոսի ասելով՝ «Թողեց իւր կնիքն ու տէրութեան մասին հոգսերը»։ Ըստ Երեսութիւն որդին հօրից աւելի յաջող էր դործում։ Այն ժամանակ, երբ Փիլիպոսը Բիւզանդիայի մօտ պարտութիւն էր կրում և պատճառ դառնում Մակեդոնիայի դէմ Աթենացւոց կուտին։ Աղեքսանդրը Վերին Սպրիտոնի ափերում խաղաղեցնում էր մի ապստամբ ցեղ։ Յարձակմանը վերցրեց նրանց գլխաւոր քաղաքը, հետացրեց այն տեղից բոլոր նախկին բնակիչներին, նրանց տեղ բնակեցրեց նոր, մակեդոնական շահերին նուիրուած քաղաքացիներ և այդ քաղաքը անուանեց Աղեքսանդրոսոլ։ Հետեւեալ տարին նադարձեալ կառավարեց տէրութիւնը, որովհետեւ հայրը առաջուան պէս զբաղուած լինելով Բիւզանդիայի և Խերսոնէսի դէմ պատերազմով՝ բացակայեց։ Վերջապէս 338 թ. Մակեդոնիայի ապագայ հերոսը մասնակցեց հօր արշաւանքներին և Խերսոնեան ճակատամարտում փայլեց մի այնպիսի քաջութեամբ, որ Փիլիպոսը հիացաւ և նոյն իսկ չը վի-

րաւորուեց՝ երբ մակեդոնացիք, վարժուելով պատանու երկամեայ խնամակալութեանը, ասում էին. «Աղեքսանդրը թագաւոր է, իսկ Փիլիպոսը՝ զօրավար.» Խերսոնիայի մօտի ճակատամարտը վերջնականապէս փոխեց Յունաստանի բաղդը, և ենթարկեց նրան մակեդոնական գերիշխանութեանը։ Յունական տէրութիւնների միանալը մակեդոնական գերիշխանութեան տակ, իսկ յետոյ բոլոր յոյն աշխարհի գլուխն անցած՝ Պարսից դէմ պատերազմը – Փիլիպոսի սիրած հոգսերին իւթեան էին, ոկած այն ժամանակից, երբ նա, դեռ պատանի, երեք տարի պատանդ էր Թէրէում, որը յունաց ամենամեծ ռազմագէտ էպամինէնտի ձեռքի տակ իւր քաղաքական մեծութեան գագաթնակէտին էր հասել։ Գահ բարձրանալով և իւր անյաղթելի մակեդոնական փալանգները կազմակերպելով՝ Փիլիպոսն սկսեց եռանգութեան կերպով իրականացնել իւր մտագրութիւնները։ Հանգամանքների չնորհիւ նրան յաջողուեց միջին Յունաստանի գործերին միջամտել, որտեղ ծագել էին արիւնահեղ ներքին կուիւներ։ 346 թ. նա իւր զօրքով անցաւ Թէրմոփիլէի կիրճը. վերջացրեց թէրացիների և փոկիացիների մէջ Դելփեան տաճարի պաշտպանութեան համար բարձրացած սրբազն պատերազմը և տիրեց տաճարին, որպէս զի խաղաղացնէ երկու կողմերը. Փոկէան գրաւելով՝ Ամիկիկտոննեան խորհրդին անդամ դարձած և Պիւթեան խաղերի նախագահութեանը հասած՝ Փիլիպոսը պատերազմութեամբ սկսեց իւր աղդեցութիւնը Յունաստանի վերայ տարածել։ Յունական բոլոր պետութիւնները երկու բանակի էին բաժանուել – Մակեդոնական և Հակամակեդոնական։ Այդ երկու կուսակցութիւնների կոփու սաստկացաւ աւելի Աթենքում, ուր պահպանղականները կամենում էին որ Փիլիպոսը բոլոր յոյների առաջնորդը լինի, ուստի և հայրենիքի դաւաճան էին կոչում. մակեդոնացւոց հակառակ էին աղատամիանները. Դեմոսթենէսի նախագահութեամբ։ Բայց մինչ այդ նշանաւոր հուետոր իսկականաւոր Փիլիպոսիկներն էր արտասանում, պահպանղականի գէմ ահարկու

ճառեր ասում, վերջինս տոկունութեամբ, համդարտ, կարծես առանց նկատելի լինելու, աւելի և աւելի տարածում էր իւր յափշտակիչ թաթը:

345 թ. Ամեկեղոնացիք օգնեցին Արդոսին և Մեկենացոց՝ Սպարտայի դէմ. հետեւեալ գարնանը իպիպոսը ենթարկուեց նրանց ազգեցութեան, իսկ 340 թ. Փիլիպոսը պատերազմ սկսեց աթենացւոց դէմ, թէկ ակամայ, որով հետեւ նա ցանկանում էր խողալ ճանապարհով դառնալ յունաց առաջնորդ։ Բայց Դեմոսթենէսը իւր կուսակիցներով ձեռք բներեց Աթէնքի իշխանութիւնը և մինչեւ այն տատիճան գրգռեց աթենացւոց հայրենասիրութիւնը, որ Յունաստանի ազատութեան համար վերջին անդամ պատերազմը անհրաժեշտ համարուեց։ Այդ պատերազմը Խէրոնէի մօտ՝ յսյների համար կորստարեր վախճան ունեցաւ։ Բայց Փիլիպոսը Թէրէին, դաւաճանութեան համար, օրինաւոր կերպով պատելուց յետոյ, դէպի աթենացիք արտայտեց ազնիւ մեծահոգութիւն, թէկ քաղաքական հաշիւների վերայ հիմնած։ Աթենացւոց գերիների մէջ գրանում էր մակեդոնական կուսակցութեան պատկանող Դեմոտ հուետորբ, որը Խէրոնեան յաղթութիւնից յետոյ եղած մակեդոնական խնճոյքում համարձակ կերպով ասաց Փիլիպոսին. «Թագաւոր, բաղդը յաջողել է քեզ Ագամեմնոնի գերը խաղալ, բայց գու, ծաղրելով գերիներին, Թէրսիդէսի գիմակն ես ծածկում երեսիդ»։ Այդ ազնիւ անկեղծութիւնը դիւր եկաւ թագաւորին, և Փիլիպոսը յանձնեց Դեմոտին ուղեսորուել Աթէնք, և խաղաղութիւն հաստատելու համար յայտնել իւր համաձայնութիւնը աթենացիներին՝ որոնք պատրաստում էին ոդի ի բուին պաշտպանուելու։ Այդ ժամանակ աթենացիք ուրախացած՝ դեսպաններ ուղարկեցին մակեդոնական բանակը, իսկ Փիլիպոսը խաղաղութեան բանակցութեան համար Աթէնք ուղարկեց Աղէքսանդրին ու իւր սիրելի զօրավար Անտիպատրոսին։ Պատանու առաջին փորձը քաղաքական ասպարիզի վերայ պասկուեց կատարեալ յաջողութեամբ։ Այդ դէպում առաջին անդամ յաղ-

թանակում է ոչ թէ Փիլիպոսի խորամանկ քաղաքական նութիւնը, այլ Աղէքսանդրի լայն մեծահոգութիւնը։

Թէկ աթենացիք ներքին գործերում պահպանեցին կատարեալ ինքնավարութիւն, բայց կորցրին ծովային գերիշխանութիւնը Եղէեան ծովում միայն չորս կղզի մնաց նրանց և իսկապէս՝ Փիլիպոսի գերիշխանութեան տակ կազմուած գաշնակցութեան մէջ մտան։

337 թուին Փիլիպոսը մտածեց ամուսնանալ Կլէովարայի հետ, որը մակեդոնական ազգեցիկ իշխաններից մէկի, Ատալլի ազգականուհին էր։ Մինչև այդ ժամանակ Ոլիմպիան, չը նայելով իւր կրքոտ, հրամայող բնաւորութեան, համբերում էր ամուսնու բոլոր դաւաճանութիւններին, բայց այս անդամ արգէն նա կատաղեց, որովհետեւ կասկածում էր, թէ Փիլիպոսի նոր ամուսնութիւնը կարող էր նպաստել իւր որդի Աղէքսանդրին գահի իրաւոնքից զրկելուն, որովհետեւ այս երկրորդ ամուսնութիւնից ծնուելիք դաւակը կարող էր դահաժառանդ հրատարակուել։ Պակաղբութեան խնջոյըի ժամանակ հարբած Ատալլ կրակի վերայ իւղ ածեց, ցանկանալով որ աստուածներն օրհնէին նոր ամուսնական կազը՝ մակեդոնիայի համար իսկական դահաժառանդի ծննդեամբ։ Աղէքսանդրը չըհամբերեց այդ վարմունքին, իւր բաժակը Ատալլի վերայ նետեց և աղազակեց. «Անպիտան, հապա ես ինչ եմ քո կարծիքով՝ ապօրինի զաւակ»։ Փիլիպոսը բարձրացաւ իւր օթեակից և մերկացրած օրով որդու վերայ յարձակուեց, բայց, զայրոյթի և գինու ազգեցութեան տակ սայթաքեց ու ընկաւ։ Այդ ժամանակ Աղէքսանդրն ասաց. «Այս մարդը կամենում է Եւրոպայից Ասիա անցնել, բայց ընկաւ՝ մի օթեակից միւսը անցնելիս»։

Այդ խայտառակութիւնից յետոյ անմիջապէս Ոլիմպիան հեռացաւ իւր եղբօր, կպիրի թագաւորի մօտ, իսկ Աղէքսանդրը ուղեսորուեց դէպի ի հեռաւոր Իլլիրիան, հօր դէմ օդնութիւն ձեռք բերելու նպատակով։ Մինչ այս մինչ այն Փիլիպոսը հասկացաւ, որ մի շատ դժուար գրու-

թեան մէջ է ընկել, մակեդոնիայի ամբողջ երիտասարդութիւնը յարած էր Աղէքսանդրին, և իւր ընտանիքի հետ հաշտուելու համար օգտուեց Կորնթոսի պետական գործիչ Դեմարտին՝ Պելլա այցելելուց։ Փիլիպոսի այն հարցին, թէ ապրում են յօյներն իրար հետ խաղաղ և համաձայն, Դեմարտը համարձակ պատասխանեց. «Փիլիպոս, քեզ ինչ վայել է յօյների մասին հոգալ, երբ ինքդ քո տան մէջ անպատճերեր վէճ ես յարուցելու։ Փիլիպոսը ոչ միայն չը վիրաւորուեց. այլև խնդրեց Դեմարտին որ հաշտեցնի նրան իւր որդու հետ։ Բարեխիղճ յօյնը կպատ այդ գործին և յաջողութեամբ աւարտեց։ Աղէքսանդրը Պելլա վերադարձաւ. բայց նրա մայրը մնաց Էպիրում, ուր ամբողջ ազդաբնակութիւնը գորդուած էր Փիլիպոսի գէմ նրա անարժան վարմունքի պատճառով գէպի իրանց թագաւորի ազդականուցին։ Պարսից դէմ արշաւանքի դուրս գալուց առաջ, Փիլիպոսը կամեցաւ Էպիրոսի հետ գործը վերջացնել։ Այդ պատճառով, նա վճռեց իւր աղջիկը, Աղէքսանդրի քոյրը, Էպիրի թագաւորին կնութեան տալ։ Պատապութիւնը նշանակուած էր 336 թ. օգոստոսին Ք. Տ. Ա. Էպիում։

Այդ հանդիսի առթիւ բոլոր ընտանեկան երկպառակութիւնները մոռացուեցին, և Ոլիմպիան Մակեդոնիա վերադարձաւ։ Բայց ճոխ հանդէսներից յետոյ Երկրորդ օրը, երբ Փիլիպոսը մտնում էր թատրոն, ուր լինելու էր հանդիսաւոր ներկայացում, սպանչի հարուածից անշնչացած վայր ընկաւ իւր կեանքի 47-րդ և թագաւորութեան 34-րդ տարին։

Բ.

Աղէքսանդրի Գահ բարձրանալը. — Առաջին արշաւանքները.
Պարսից դէմ պատերազմի պատրաստութիւնները։

Աղէքսանդրի գահ բարձրանալու ժամանակ, ոչ միայն նա ինքը, այլև ամբողջ Մակեդոնիան գտնում էր կրիտւքական գրութեան մէջ։ Մի կողմից դուրս էին եկել հա-

կառակորդներ, որոնք նրա գահի վերայ ունեցած իրաւունքը վիճելի էին դարձնում. իսկ միւս կողմից — Յունատանին ու Մակեդոնիային երեք կողմից շրջապատող — լեռնային ցեղերը պատրաստ էին ապստամբելու։ Առանց ըստի կորցնելու՝ Աղէքսանդրն ամենից առաջ ամրացրեց իւր իշխանութիւնը հակառակորդների յաւակնութիւնից։

Փիլիպոսի մահից մի քանի օր առաջ Կէովատրան որդի էր ծնել, և նրա քեռի Ատալլը, փոքր Ասիայի մակեդոնական զօրքերի հրամանատարը, իւր աներ Պարմենէսնինի հետ միասին, ի հարկէ, պատրաստ էր Փիլիպոսի կրտսեր որդու իրաւունքները մակեդոնական գահի վերայ պաշտպանելու։ Հին մակեդոնական կուսակցութեան մի մասը պէտք էր, անկասկած, այդ հոգով արտայալտէր իւր միտքը. իսկ նրա միւս մասը հակուեց յօդուտ Ամիդի, որ Փիլիպոսի մեծ եղբօր՝ Պերտիկի որդին էր։ Վերջապէս կային ազգեցիկ մակեդոնացիներ էլ որոնք նախադասում էին գահ բարձրացնել Լինկեստների հին արքայական գծի ներկայացուցիչ, երեք եղբայրներից մէկին, որոնց նախնիքն երբեմն իշխել էին Մակեդոնիայում։ Այդ երեք թիկնածուների դէմ Աղէքսանդրն ամենախիստ միջոցներ ձեռք առաւ։ Նա հրամայեց իսկոյն մահուան գատապարտել Լինկեստների հարստութեան երկու իշխաններին, կասկածելով նրանց վերայ որպէս Պաւզանիասի մեղսակից, իսկ նրանց երրորդ եղբայրը Աղէքսանդրին հանդիսաւոր կերպով թագաւոր ճանաչեց և դրանով փրկեց իւր կեանքը։ Յետոյ երիտասարդ թագաւորի ընկերներից մէկը՝ Դեկատէոսը՝ մի փոքր գնդով Փոքր Ասիա ուղարկուեց, պատուէր ստանալով բռնել Ատալլին կենդանի կամ սպանել նրան որ և է միջոցով։ Նախ քան այդ փափուկ յանձնարարութեան հետեւանքի մասին տեղեկութիւն ստացուելը, Ատալլ արդէն հաղորդեց Աղէքսանդրին, թէ Փոքր Ասիայում գըտնուած ամբողջ բանակը նրան թագաւոր է ճանաչել։ Աղէքսանդրի թշնամին ստիպուած էր այդպէս վարուել, որովհետեւ Պարմենէսնը բացարձակ կերպով Աղէքսանդրի կողմն

էր բոնել, և բոլոր դօրքն էլ հետեւ էր նրա օրինակին։ Բայց չը նայած Առալի բոլոր երդումներին նոր թագաւորին հաւատարմութեամբ ծառայելու համար, Գէկատէսը յետ չը կըշուեց, և Առալը շուտով անյիշատակ կորաւ։ Միւնոյն ժամանակ Ամինդան ու Առալի բոլոր ազդական ները կոտրուեցին։

Այդպիսով, մակեդոնական դահի թեկնածուների հետ գործը շուտ վերջացնելով, և չափասելով, որ սահմանակից բարբարոս ցեղերը նրան թագաւոր ճանաչէին, Աղէքսանդրը Յունաստանի վերայ յարձակուեց, ուր պէտք էր, ինչպէս նա լաւ իմանում էր, վճռուէր նրա և Մակեդոնիայի բազդը։ Աղէքսանդրի արագ և անկնկալ արշաւանքի հետեւակն եղաւ ամբողջ թեռազնիկէի, այսինքն Յունաստանի հինգերորդ մասի նրան հպատակելին։ Ապա նա, առանց ամենափոքր ընդդիմութեան հանդիպելու, տիրեց Թերմոպելէի կրծին, Միջին Յունաստանի այդ դոներին, և Ամփեկտիոնեան խորհրդին վերահաստատել տուեց նախկին որոշումը, որով մակեդոնացոցն էր վերահւում գերիշխանութիւնը։ Մինչև Աթէնքում կիմանային, թէ Աղէքսանդրը Յունաստանումն է գտնուում. նա արդէն պաշարեց Թերէն։ Այն ժամանակ աթենացիք սարսափած, Աղէքսանդրի մօտ գետպաններ ուղարկեցին, խնդրելով, որ իրանց խնայէ։ Նա վեհանձնաբար վարուեց թէ աթենացիների և թէ միջին Յունաստանի շատ քաղաքների հետ։ Կորնթոսում յունաց բոլոր տէրութիւնների ներկայացուցիչներից վեհաժողով գումարուեց իսկոյն, ուր մասնակցութիւն չունեցաւ միայն Սպարտան, որի վերայ Աղէքսանդրը ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում, որովհետեւ նա արդէն վազուց էր կորցրել աշխարհում իւր նշանակութիւնը։ Վերականգնուեց Փիլիպոսից հիմնուած յունաց տէրութիւնների դաշնագրութիւնը և Աղէքսանդրը յունական կայսերութեան դլուխ հրատարակուեց։

Այժմ թէ Մակեդոնիայում, և թէ Յունաստանում արդէն ամեն ինչ հանդարատ էր, և Աղէքսադրը կարող էր

Արևելքը արշաւելու պատրաստութիւնները տեսնել։ Բայց այդ արշաւանքներից առաջ, անհրաժեշտ էր նրան իւր երկրի հիւսիսային սահմանն ապահովել։ Այստեղ թէ հզօր պետութիւն չը կար, բայց պատերազմասէր ցեղեր էին բնակում, որոնց երբեմն երբեմն պէտք էր յիշեցնել նրանց հարևանների ոյժի մասին։ Այդ ցեղերի մէջ Աղէքսանդրի առանձին ուշադրութիւնն իրանց վերայ էին գրաւում արիբանները, որոնք ապահում էին բալկանների և Դանուբի միջև, այժմեան Արևելքան Բոլգարիայում։ Նրանք 330 թ. ծանր վիրաւորանք էին հասցրել Փիլիպոսին, երբ սա Սկիւթիայից յետ էր գառնում՝ ճանապարհին անսպասելի կերպով նրա վերայ էին յարձակուել, խլել էին տւարի մեծ մասը և նրան վէրք հասցրել։ Փիլիպոսին իւր կեանքի հետեւալ տարիններում աւելի կարևոր գործերով այնպէս էր զբաղուած՝ որ չը կարողացաւ վրէժ լուծել տրիբաններից և Աղէքսանդրն այդ կողմից կարեոր համարեց ամենից առաջ վերականգնել իւր հօր արատաւորուած պատիւը։

335 թ. Ապոլիին դուրս եկաւ նա փոքր գնդով Ամփիպոլից և տասն օրուայ մէջ հասաւ Գէմուսի ստորոտներին. (Հները Բալկաննեան շղթան Գէմուս էին կոչում)։

Աղէքսանդրն ատիպուած էր անցնել, ներկայ պատմութեան մէջ յայտնի, նիպկայի կիրճը, ուր եղաւ նրա առաջին ընդհարումը լեռնական թրակացիների հետ։ Արքիանը պատմում է նիպկայի այդ նշանաւոր անցքի ուրեխում մասին, ուր առաջին անդամ Աղէքսանդրը ապացուց յեց իւր գործնական զինուորական հանձարը։

«Մակեդոնացիք Գէմուսի լեռնային կրծով երբ սկսեցին բարձրանալ, նրանց հանդիպեցին վաճառական և ազատ թրակացիների լաւ զինուած խմբեր, որոնք բանակի անցքը խանդարելու նպատակով, դրաւել էին լեռան գագաթը։ Նրանք իրանց առջև իրքև պատնէշ շարել էին սայլերի մէ երկար շարք, որպէս զի նրանց ետեւում պատսպարուած պաշտպանուէին, իոկ ծայրայեղ դէպքում լեռան խիստ

զառիվայրից բաց թողնէին վեր բարձրացող մակեդոնացիների վերայց Բայց Աղէքսանդրը, կարելոյն չափ փոքր վահնդով լեռնային գժուարութիւններն անցնելու համար, մի հմտութիւն ծրագիր հնարեց Իմանալով, որ ուրիշ ճահապարհ չըկայ, նա հրամայեց իւր ծանր սպառազգինուած զինուորներին երկու կողմ բաժանուել և սարի գագաթից Պլորուող սայլերին ճանապարհ տալ: Խոկ եթէ անցքի կողքից էլ նրանց սպառնային սայլերը, ոյն ժամանակ մաքեդոնացիք պարտաւոր էին գետնի վերայ պարկել և իրանց վահաններով ծածկուել, այնպէս որ, սայլերը նրանց վերայից թոշէին, չըպատճառելով ոչ մի ջնառ Աղէքսանդրն ինչպէս ենթադրում էր, այնպէս էլ եղաւ: Սայլերը վահանների վերայով թոշում էին չըվիրաւորելով մակեդոնացիներին, այնպէս որ նրանցից ոչ ոք չը սպանուեց: Որքան սայլերը գլորում էին, այնքան էլ մակեդոնացիք առաջ էին մագլցում և յաղթական ձայներով թշնամիների վերայ գնում»:

Գէմուսն անցնելու հետեանքն եղաւ թրակացիների վախուստը, որոնք կորցրին 1500 սպանուածներ: Լեռների ետևում, գէպի Դանուբն իջնող գաշտի վերայ ապրում էին տրիբալները. Աղէքսանդրը մի մեծ և արիւնահեղ կռում ջարգեց նրանց, յետոյ իւր առջնը տեսնելով նշանաւոր գետը, հրապուրուեց իւր ոյժը ցոյց տալու հիւսիսում ապրող հզօր ցեղերին էլ: Այդ ցեղերի մէջ առաջին տեղը գէթերն էին բռնում, որոնք յոյներին յայտնի էին իրանց «անմահութեան մասին ունեցած հաւատով»: Փոքրաթիւ նաւերի, Սև ծովից մօտեցող ձկնորսական նաւեկների և գաղանների մորթուց շատապով պատրաստած լառաւերի օգնութեամբ, մակեդոնացիք գիշերն անցան Դանուբ գետը և, հակառակ ափը դուրս գալով, թագնուեցին գաշտերի մէջ, ուր բարձր աճած ցորենի արտերը նրանց բոլորովին ծածկեցին: Հետեւեալ օրը, երբ նրանք անսպառելի կերպով հասկերի ետևից սկսեցին գուրոս գալ, Գէթերի վերայ մի այնպիսի երկիւղ ընկաւ, որ նրանք իրանց

կանանց, երեխաների և ունեցածների հետ մարդագետինները դուրս թափուեցին, սարսափելի թշնամու աւարին մատնելով ափից երեք մղոն հեռու գտնուզ մի խիստ ամրացրած քաղաք: Բայց Աղէքսանդրը նոյն խոկ երեկոյեանը Դանուբը յետ անցաւ: Այդ տեղ նրա մօտ սկսեցին հաւաքուել շրջակայ բոլոր ցեղերից գեսպաններ հպատակութիւն և բարեկամութիւն արտայայտելով:

Ամենից առաջ երեւացին խաղաղեցրած տրիբալները, որոնք այդ ժամանակից ոկտած հնագանդ վասսաներ դարձան և մակեդոնական բանակին մշտական պատրաստ զօրք էին տալիս: Աղէքսանդրին հպատակուեցին նոյնպէս այն ժամանակ Ունդարիայում ապրող Կելտերն էլ, որոնք Արքիանի խօսքերով, յայտնի էին իրանց բարձր հասակով և չափազնց հալարտութեամբ: Այդ հին հեղինակը պատմում է, թէ Աղէքսանդրը երբ հարցրեց այդ զինուորական ցեղի գեսպաններին: «աշխարհի երեսին նրանք ինչից են վախենում», հաստատ հաւատացած լինելով, որ նրանք կը պատասխանեն: «Քեզնից»: Բայց Կելտերը հպարտութեամբ պատասխանեցին: «Մենք միայն վախենում ենք, որ երկինքը երբ և իցէ չը փլչի գլխներիս»: Աղէքսանդրը նրանց իւր ընկեր և դաշնակիցներ անուանելով՝ բարեսրտութեամբ արձակեց, բայց յետոյ միշտ առում էր: «Կելտերը պարձենկոտ պրոռտախօսներ են»: Մակեդոնիա գառնալով, Աղէքսանդրին իմացաւ, որ կլլիւրիական ցեղերի պարագլուխներից մէկը, տոլանտիների, այժմեան Ալբանիայում ապրող ժողովրդի հետ ապստամբել է մակեդոնացոց գէմ:

Այդ ցեղի Պելիոն մայրաքաղաքին համար ոլէտք էր 200 մղոնից աւելի անցնել, բայց Աղէքսանդրը չը տատանուեց և գէպի այն կողմը թեքուեց: Թէկ ճանաւարին քիչ էր մնում թակարդ ընկեր, և միայն փրկուեց իրան շրջապատող թշնամիների միջից: վարպետութեամբ տեղի տալով, բայց վերջ ի վերջո նրանց ջարգեց և քաղաքն էլ այրեց:

Մինչ Աղէքսանդրը կռուում էր հեռաւոր լեռնեւ-

բում հինգ ամիս իւր մայրաքաղաքից բացակայելով, յոյները նորից ապստամբեցին։ Այս անդամն մի կողմից Դեմոսթեանէսը լուր էր տարածում Ազէքսանդրի մահուան մասին, ծանր վերքից առաջացած նրա վախճանին վկայ ցոյց տալով մի յոյն զինուոր, որը որպէս թէ ազատուել էր պատերազմի դաշտից, և ուր պատանի թագաւորին, որպէս թէ, յաղթել էին տրիբալները, իսկ միւս կողմից պարսիկներն ամէն կերպ սկսեցին դրդել յոյներին որ ընդդիմութիւն ցոյց տան մակեդոնացոց գեռատի թագաւուին։ Պաշտիները հաս կացել էին, որ Ազէքսանդրի եռանդը իրանց էլ մեծ փանգէ սպանում, ուստի վճռել էին ամեն մըջոց դարձ դնել, որպէս զի խանդարն նրան դէպի արենքը արշաւելու։ Պարսկական բանակը ուզարկուեց Փոքր Ասիայի հիւսիսային կողմը և այն տեղ դանուող մակեդոնացիներին ստիպեց դէպի Տրովադաև մասամբ դէպի Եւրոպա յետնահանջելու։ Յետոյ նրանք սկսեցին յոյներին կաշառել Ազէքսանդրի դէմ ապստամբելու, և եթէ պաշտօնական կերպով դրամական օգնութիւն միայն Սպարտան ընդունեց, բայց յունական շատ քաղաքներում էլ հակա-մակեդոնական կուսակցութիւնների նոյնպէս առատ կերպով օժտուեց պաշտօն դրամը ներով։ Այդ փաստն էր ակնարկում յետոյ Ազէքսանդրի պարսից Դաշնէ թագաւորին գրած իւշ նամակի մէջ. «Դու լակեդեմոնացիներին և միւս յոյներին դրամ էիր ուզար կում. թէկ ոչ մի տէրութիւն, բացի լակեդեմոնացիներից, չընդունեց այն չէնց այդ իսկ պատճառով, որ դու կաշառում էիր իմ բարեկամներին, աշխատում էիր իմ ստեղծած գաշնակցութիւնը ոչչացնել, և այդպիսով կռուի սկզբնապատճառը դարձար, ևս քո վերայ կռիւ եկայ»։ Դեմոսթենէսն իսկ 300 առանդ էր ստացել պարսից թագաւորից և, Պլուտարքոսի խօսքերով, յետոյ Ազէքսանդրը Սարդում գտաւ մեծ հուետորի նամակները, որոնք լի էին փողի ստացման համար ապացոյցներով։ Եթէ, ինչպէս մեծ դաշտում էր նորան Էսքինեսը, Դեմոսթենէսը դրանն էլ դրած լիներ այդ դրամի մի երրորդը, մնացածը նա մա-

կեղոնացոց դէմ ապստամբելու պատրաստութեանն էր գործ ածել, և նրա հայրենասիրութեան մէջ անկեզծութեանը կասկածել չէ կարելի։ Նա էլ աթենական պետական գործիչ էր մունետիկ Յունաստանի անկախութեան, և ուխտեալ թշնամի՝ մակեդոնական թագաւորի զինուորական դլասաւորութեամբ կազմուած նոր յունական դաշնակցութեան։ Յունական ապստամբութիւնն արագութեամբ տարածւում էր։ Ելլագայում հայրածուեցին մակեդոնիայի կուսակիցները։ Արկադիայում ու Էտոլիայում շատ քաղաքներ բացարձակ ազմկուեցին։ Աթէնքը սպառազինուել և ամեն կողմ պնդագեսպաններ էր ուզարկել յոյներին։ մակեդոնացոց դէմ ապստամբեցնելու։ Թէրէում սպանուեցին մակեդոնական պարագլուխներից մէկը և մակեդոնական տեղական կուսակցութեան մեծը, իսկ Կադմէում պաշարուեցին մակեդոնական բերդապահ զօրքերը։ Այդպիսով, Ազէքսանդրի յունական կայսերութիւնը իւր հիմքում խախտուել էր, իսկ նա գտնուում էր հեռու իլլիւրացիների դէմ, յետ դարձաւ, և արագավաղ ընթացքով երկու շաբաթում հասաւ Բէովդիա։ Ամենից առաջ նա դիմեց թէրացոց վերայ, և ցանկանալով առաջուան պէս բարեկամական ու գաշնակցական յարաբերութիւն պահպանել յոյների հետ, քաղաքի վերայ յարձակումն յետաձգեց, յուսուլով որ թէրացիք խաղաղութիւն կը յինդրեն։ Բայց վերջիններս պատերազմական մի այնպիսի նուանդ էին ստացել, որ լսել անդամ չէին կամենում մակեդոնացիներին ենթարկուելու մասին, իսկ մակեդոնացիք այնպէս էին գրգռուած յոյների գաւաճանութեամբ, որ առանց սպասելու Ազէքսանդրի հրամանին, կռիւն սկսուեց առաջապահ գնդի հրամանատար Պերգիկասի կարգադրութեամբ։ Կռիւր շուտով կատորածի փոխուեց, և Ազէքսանդրին ոչ ոքի չէր ինայում։ Հաւասար կերպով կորան եւ

սպառադինուած զօրականննը, եւ անդօր քաղաքացիք, եւ կանայք, եւ մանուկներ։ Յայց Ալրիանի հաւասացներով, այդ արիւնահեղ մաքաւման մէջ մակեդոնացիներից աւելի գաղանութիւն ցոյց տուին նրանց դաշնակից յոյները, յատ կապէս Փոկիացիք, պլատիացիք և Բէովտիայի միւս բնակիչները, որոնք թէբացիներից առնաւմ էին իրանց վաղեմի վրէժը։

Այդ հանդամանքից օդտուելով, Աղեքսանդրը թէբէի դէմ իւր ապագայ գործունէութեան մէջ արդարանում էր իւր հաստատուած բարձրագոյն դատարանի վճռով։ Դատարանի՝ ուր անդամ էին կոչուած թէբացոց թշնամի հարկանների ներկայացուցիչները, որոնք ոչ մի կերպ չէին կարող ներել թէբացիներին, որ այդ քաղաքը Պարսից պատերազմների ժամանակ օտարերկրեայ աշխարհակալի կողմն էր պահել։ Իբրև հետեւանք այդ զայրոյթին երկրի երեսից չնջուեց թէբէն, բացի Պինդար բանաստեղծի տնից. ամբողջ երկիրը հարեանների մէջ բաժնուեց, իսկ կենդանի մնացած 30,000 բնակիչները, բացի քրմանիներից, քրմերից, Պինդարի յետնորդներից և Մակեդոնիայի բարեկամներից, վաճառուեցին ստրկութեան։ Այդ պատճառով կենդանի ապրանքների վաճառատունն այնպէս լցուեց թէբացի այս գերիներով, որ նրանց դինը նշանաւոր չափով ընկաւ։

Այս տեղ, աւելորդ չի լինի ասել, որ Յունաստանում, ուր հասարակութիւնը ստրկութեան վերոց էր հիմնուած, ստրկի սովորական գինն էր 40-ից մինչև 70 րուբլի։ Սպարտայում և Կրէտէ կղզում գիւղական աշխատաւորներն էին հողադործ ստրուկները. արդիւնաբերական արտադրութեան մէջ նրանք այժմեան մեքենաների պաշտօնն էին կատարում. և Խորենով էին վարձում հանքերում աշխատողների պէս։ Վերջապէս նրանք նշանաւոր թուով տնային ծառաներ էին, որովհետև տան մէջ սովորաբար լինում էին մինչև եօթ ստրուկներ։ 309

Կորնթոսում, ասում են, 46,000 ստրուկ կար, էգինում 47 հազար, իսկ Ատամիկում 400,000։ Թէ և մի քանի հեղինակներ այդ թուերին հաւատ չեն ընծայում, բայց այդ թուերը հաստատում են հաւաստի փաստերով։ Գերիների մեծ մասը Յունաստան էր բերում Լիդիայից, Բիւթինիայից, Սիրիայից, Թրակիայից և Կլիւրիայից. բայց դերիների մէջ լինում էին և հտալիայի բնակիչներ, եպիպացիներ և հրէաններ։

Այդ ամբողջ կենդանի ապրանքը ձեռք էր բերում Եգիեան և Սի ծովի ափերում գերեվաճառների միջոցաւ գրամով կամ բռնի ուժով։ Յունական ամեն մի քաղաքում գերիների վաճառատեղի կար, և աւելի յաճախ, այդ վաճառատեղիները բացւում էին տաճարների մօտ, տօնավաճառների ժամանակ ևնչ վերաբերում էր զինուուրական գերիներին, — օշինակ թէբացիներին՝ Աղեքսանդրի կոտորածից յետոյ, — այդպիսիներին մեծ մասով վաճառում էին գերեվաճառներին օտարերկրեայ վաճառատեղերի համար։ Այսպէս շատ անդամ ստրուկ էին լինում կրթուածներն էլ, որոնք դասնալով ուսուցիչ, ընթերցող, քարտուղար և երաժիշտ, յունական քաղաքակրթութիւն էին տարածում։ Այսպէս թէբացի ստրուկներն էլ ցրուեցին այն ժամանակ յայտնի ամբողջ աշխարհում։ և Աղեքսանդրը, յետոյ զղջալով գէպի Յունաստանի ամենալաւ քաղաքներից մէկն արած իւր անդթութեան համար, ուր և հանդիպէր նրա խեղճ քաղաքացիներին, միշտ գթութեան ձեռք էր կարկառում նրանց։

Աթենացիք թէբէի վիճակն իմանալով ի հարկէ, զարհութեցին և, մակեդոնացոց հին բարեկամ Դեմատի խորհրդով, տասն յայտնի քաղաքացիներից բաղկացած յանձնաժողովի ձեռքով Աղեքսանդրին ողջամբ գալստի մի ուղերձ ուղարկեցին, որի մէջ ցածութեամբ շնորհաւում էին տրիբանների երկրից նրա բաղդաւոր վերաբարձը, և թէբացիներին արդարապէս պատժելը։ Պատմում են, թէ Աղեքսանդրը զղուանդրով ոլատուեց այդ

ուղերձը և լոելայն երեսը մի կողմ վշջեց անամօթ շուշայտնեց, Սակայն յետոյ նա կանչեց նրանց և պայմանով, որ համաձայն է ներել աթենացաց միայն ոյն թերացիք, և իրան յանձնուեն Դեմոսթենէսի հետ միաւ մին ապստամբութեան պատճառ եղածները: Բայց, չը նաւթեանը, աթենացիք խիստ վրդովուեցին: Ազեքսանդրի իրանց ամենախայտառակ ստորացման, բայց միւս կողմց էլ, գրանից էր կախուած քաղաքի բաղդը: Փոկիոն ծերունի զօրապետը սկսեց ապացուցանել, որ փոքրաւ մասնութիւնը պէտք է զոհէ իրան մեծամասնութեան երջանկութեան համար: Իսկ Դեմոսթենէսը պաշտպանում էր ոչ միայն իրան և բարեկամներին, այլ և իւր հայրենիքի թէ ինչպէս ոչխարհները դայլերի հետ խաղաղութիւն են հանտառել նրանց ձեռքը մատնելով պահապան շներին: Վերջապէս Դեմատի առաջարկութեամբ նոր գեսպաններ կիսնին, աղաջելով, որ թոյլ տրուի աթենացիներին չը հաւլածէլ փախտական թերացիներին, և իրանք դատի ենաւթարկեն այն քաղաքացիներին՝ ուղոնց վերայ Ազեքսանդրը մատնացոյց կը լինի, եթէ դատաստանը նրանց յանցաւոր ճանաչէ, ենթարկուեն նրանք պատշաճաւոր պատժի: Փունիքերձախօսութեան շնորհիւ Մակեդոնիայի թագաւորը համաձայնեց առաջարկուած պայմաններին, մանաւանդ որ յունաց զօրապետը Ազեքսանդրին խորհուրդ էր տալիս չը կորցնել յօյներին, այլ նրանց օգնութեամբ գնալ Պարսից դէմ, որոնք միայն էին մեղաւոր այն ամենի համար, ինչ որ Յունաստանում տեղի ունեցաւ: Այդ խորհուրդն աւելի քան համապատասխանում էր պատանի հերոսի ցանկութիւններին, և այժմ համոզուելով, որ ոչ միայն Յունաստանում, այլ և ամբողջ Բալկանեան թերակղզում

էլ չը կայ մի ձայն, որ բողոքել յունաց աշխարհի վերայ իւր գերիշխանութեան դէմ, նա վճռեց վերջապէս, իրականացնել իւր մտադրութիւնները, և դէպի արեւելք շարժել իւր փալանգները: Վերադառնալով Պելլա, Ազեքսանդրը եռանդուն կերպով սկսեց Պարսից դէմ պատերազմի պատրաստութիւնները, և 334 թ. գտրանը ամեն բան պատրաստ էր: 30,000 հետևակ և 5000 հեծեալ զօրքով գնում էր մի պետութեան վերայ, որը Քուելքսէսի ժամանակ յոյների պէմ 1 միլիոն զօրք էր գուրս բերել: Երկրի տաղածութեամբ՝ 50 անգամ, իսկ բնակիչների թուով 25 անգամ մեծ էր Մակեդոնիայից: Նա չունէր այնպիսի անդամ մեծ թէ աթենացիք ունեին 350 տրիերմ*), բայց Ազեքսանդրը քաղաքական հաշիւներով վերացից միայն քսանը: Իսկապէս ասած, նրա կազմած պատերազմի ծրագիրը ցամաքային էր, և նրա ցանկութիւն ունէր ծովափերը խելով պարսիկներից՝ վերջիններիս նաւատորմիզը զրկել պատերազմական որ և է նշանակութիւն ունենալուց: Իսկ ինչ վերաբերում էր նրա բանակի յունական զօրքի քանակութեանը, թէ Ազեքսանդրն իրաւունք ունէր ինքը որոշել նրա մեծութիւնը, բայց նա սահմանափակեց գրա քանակութիւնը շատ փոքր չափով, որի պատճառը չեն պարզել՝ ոչ ինքն Ազեքսանդրը և ոչ հին պատմագիրները, սակայն ամենայն հաւանականութեամբ, Ազեքսանդրը գերադասում էր հրամայել սակաւաթիւ, բայց բոլորովին հաւատարիմ ու կրթուած բանակի: Բացի մակեդոնական հսկողութեան տակ գտնելով 1500 թեսաղացի հեծելազորքից, և յունական զանազան տէրութիւններից խմբուած 5—7 հազար «դաշնակից հետևակներից» նրա բանակը

*.) Եռակարգ թէերով նաւ: Ծան: Թարգ:

բաղկացած էր հիւսիսային և հաւատարիմ յուսալի մարդիկներից—մակեդոնացիներից և թրակացիներից։
Իմանալով, որ պարսիկները ահագին դրամական կարողութիւն ունեն, Աղէքսանդրը թէ՛ միայն 70 տաղանդտերազմը, և, ինչպէս պէտքն էր իւր զօրքը կազմակերպելով՝ ընդ ամենը 30 օրուայ պաշար վերցրեց, սակայն այնու (մոտ 150,000 ր.) գրամով համարձակ կերպով սկսեց պատերազմը, և, ինչպէս պէտքն էր իւր զօրքը կազմակերպելով՝ ընդ ամենը 30 օրուայ պաշար վերցրեց, սակայն այնու ամենայնիւն նա հսկածութեամբ տեղեկացաւ, թէ իւր զօրքը պետական արշաւանքի համար ունին արդեօք բոլոր անհրաժեշտ բաները, և ստուգելով, որ նրանց այս կամ այն ինչը պակասում է, դրամ չունենալով, տալիս էր նրանց հողեր կամ տէրութեան այս ու այն մասի եկամուտները։ Վերջապէս, երբ Պերդիկասը հասցրեց նրան, «Իսկ քեզ, ինչ ես թողել», Աղէքսանդրը պատասխանեց. «յոյսերս» — «Քո զօրապետներն էլ են կամենում այդ յոյսերից մասն ունենալ», արտասանեց Պերդիկասը, և ինչ պէս նա, այնպէս էլ նրա բոլոր ընկերները հրաժարուեցին նշանակած նպաստից։

Աղէքսանդրը Մակեդոնիայում թողեց 13,000 հետեակ և ձիաւոր զօրքեր Սնտիպատրոսի հրամանատարութեան տակ, խնամակալի տիտղոսով։ Նա բոլորովին հաւատում էր իւր հօր այդ վախճառնամեայ խորհրդականին, և ասում. «Մենք համարձակ կերպով կարող ենք արքեցութեամբ զբաղուել, որովհետեւ Անտիպատրոսը միշտ զգաստ կը լինի»։

Պելլայից արշաւանքի դուրս գալով՝ Աղէքսանդրը 20-երորդ օրը արդէն գտնուում էր Հելլեսպոնտոսի, այժմեան Դարտանելի ափերի մոտ—Սեստում, ուր նեղուցն ամենանձուկն է, այսինքն միայն 4400 ոտ լայնութիւն ունի։ Այդ տեղից մի ժամանակ Լեանդրը լողալով անցել էր Հելլեսպոնտոսը, շտապելով Ափրոդիտայի քրմուհի Հերսի հետ տեսակցելու, իսկ Աղէքսանդրի այս արշաւանքից 143 տարի առաջ Բակրքուսը նաւերից շինեց այդ տեղ իւր նշանաւոր կամուրջը, գէպի Յունաստան դրոհ տալու համար, նախըն-

թաց տարին մակեդոնական զօրքերը Ասիայից հեռանալիս, մեծ խոհեմութեամբ իրանց էին վերապահել Սեստի գիւմարը, միւս ափին գտնուող Արիդուսը, որով և ապահովել էին ամբողջ զօրքի փոխադրութեան տեղը։ Այդ փոխադրութիւնը Աղէքսանդրը յանձնեց Պարմենէոնին կատարել, որի համար նրա տրամադրութեան տակ գրեց 160 տրիբեմ և նշանաւոր թուով վաճառականական նաւեր։ Իսկ նա ինքը, տեսնելով, որ ափը թշնամիներից ազատ է, վճռեց հանդիսաւոր կերպով Տրովագայի առաջ գուրս դալ, հենց այն տեղում, ուր Աղամեմնոնն էր իջել իւր նաւերից։

Իւր հետ վերցնելով հետեւակ զօրքի մի մասը, նա հիւսիսային ափով շարժուեց մինչև Էլես, ուր Հելլեսպանատոսն երեք անդամ՝ լայն է Սեստի մօտից։ Երկրպագելով Տրովական պատերազմի ժամանակ ընկած առաջին յոյն հերոս Պրոտեղիլի գերեզմանին՝ Աղէքսանդրը արտասունքով զոհ մատոյց աստուածներին, որպէս զի վերջիններս օրհնեն նրա ձեռնարկութիւնը, և անցաւ նեղուցը։ Նրա նաւակը ամենից առաջ էր գնուում որը ինքն էր զեկավարում։ Ճանապարհի մէջտեղին Աղէքսանդրը մի եղ զոհ մատոյց Պոսէյդոնին և Ներիփիներին, և որոնց համար էլ նոյնպէս ոսկեայ ըմպանակից գինի լրցեց ջրի մէջ։ Առաջինը Աղէքսանդրի նաւակը ափ հասաւ։ Կանգնելով նաւակի ցուուկին՝ առաջինը նա ինքը նիզակն ափին միեց, և դուրս եկաւ։ Այդ իսկ տեղը Աղէքսանդրը հրամայեց Զեսին, Աթենասին և Հերքիկէսին զոհարաններ կանգնեցնել։ Ապա նա ուղեսորուեց գէպի իլում, այժմ Հիսարլիկ, ուր երբեմն Տրովագան էր կանգնած։ Այդտեղ նա զոհ մատոյց Աթենասի տաճարում և այդ աստուածուն նուիրեց իւր սպառազինութիւնը, իսկ փոխարէնը վերցրեց Տրովական պատերազմի ժամանակներից այնտեղ մնացած զէնքը։ Այնուհետեւ իւրաքանչիւր կոռի սկզբում նա հրամայում էր աստուածներից օրհնուած այդ զէնքը իւր առաջավ կրել։ Բայց առանձնապէս պատուեց Աքիւ-

Եսի գերեզմանը։ Հին սովորութեան համաձայն, նա մերկ մարմնով մերձեցաւ այդ գերեզմանին, սրսկեց նրան անուշահոտութիւններով, պսակ գրեց ու ասաց. «Դու եր ջանիկ էիր Սլքիլէս, որ կենդանութեան ժամանակի հաւատարիմ ընկեր ունէիր, իսկ մահուանիցդ յետոյ մեծ մարդ երգեց Չո սիրագործութիւնները։ Նոյն բանն արեց նրա Հեփեստիոն ընկերը Պատրոկլէսի գերեզմանի վերայ։ Տրովական հերոսի յիշատակին հանդիսաւոր խաղեր սարքուեցին և ընդունելութիւն եղաւ հարեան բոլոր նշանաւոր մարդոց, որոնց խոստացուեցին՝ իլիումի վերաշնուռաթիւն, և շրջակայ ժողովրդին էլ հարկեր վճարելուց ազատութիւն։ Վերջ ի վերջոյ Աղեքսանդրը ուղղուեց դէպի իւր բանակը, որը արդէն կանգնած էր Սրիդուսի մօտ՝ Սրիդում։

Այդպիսով պատանի հերոսը Ասիայի հողը մտաւ։ Այդ ժամանակ նա 21 տարեկան էր. փայլում էր գեղեցկութեամբ և երիտասարդութեամբ։ Նրա բնաւորութիւնը, միտքն ու հոգին աղատ ու պայծառ էին ինչպէս անամպ երկինք։ Նա կարողանում էր մտածել, վճռել և իւր կամքը կատարել։ Գործերի մէջ նա գերազանցում էր արագութեամբ, կարգապահութեամբ և կազմակերպող տաշզանդով։ Նա աղնիւ սիրտ ունէր և նոյնպէս ջերմ կերպով էր սիրում իւր ընկերներին, ինչպէս և վերջիններս նրան։ Լինելով առատաձեռն ու մեծահոգի, նա եսասիրութիւն, երկիւղ և այլ ցած զգացմունքներ չը գիտէր. բարոյական մաքրութեամբ ու դէպի կանայք տածած յարգանքով։ Նա գերազանցում էր իւր ժամանակակիցներից, լինելով գործնական ու հեռատես, նա միւնոյն ժամանակ առաջնորդում էր և գաղափարականներով։ Աղեքսանդրը սիրում էր երաժշտութիւնը, երգը և խմատունների հետ զրոյցը. թանկ էր գնահատում դրականութիւնը և հատուցանում էր աստուածներին պաշտաճ պաշտօնը։

Ինչ վերաբերում է Աղեքսանդրի արտաքինին, կենասագիրներն ու գեղարուեստագէտները անմահացրել են

նրա դիմագծերը։ Լիսիպպը կենդանագրել է նրան բրոնզի վերայ, նկարիչ Ապելլէսը՝ ներկերով, իսկ փորագրիչ Պիրոտելէսը գրամների վերայ. բայց ամենից աւելի նրան նման են Լիսիպպի դուրս բերած պատկերները։ Պատճէնների ու ընդօրինակութիւնների չնորհիւ Աղեքսանդրը տիպը պահպանուել է մինչև ներկայ ժամանակներս այնպիսի գեղարուեստական արտագրութիւններով, ինչպէս են Աղեքսանդրի կիսարձաննը՝ պահուած Լուվրում, նրա գլուխը՝ Միւնխենի քանդակագործական արհեստանոցում, նրա պատկերը Պոմպէեան մոզայիքում, բայց գլխաւորը՝ Լիսիմախի թագաւորի ժամանակ կտրուած արծաթեայ դրամի վերայ նրա պատկերն է։

Աղեքսանդրը միջահասակ էր, ջլապինդ և լաւ կազմուածքով։ Նա ներկայացնում էր սոկեգոյն մազերով ու կապուտակ աչերով հիւսիսային արիացու տիպը։ Պլուտարքոսի խօսքերով նրա կաշին մաքուր էր և սպիտակ, այտերի և կրծքի վերայ վարդագոյն երփնով։ Նրա յատկորոշ բնական դիմագծի ամենասովորական ձևն էր գանգուր մազերի խտութիւնը, որը առիւծի բաշի նման ծածկում էր նրա գլուխը սկսած ճակատի մէջտեղից։ Այդ մազերը իսած աչքերի և թաւ յօնքերի հետ միասին տալիս էին նրան այն առիւծի տեսքը, որը Պլուտարքոսը վերագրում էր նրան։ Բարձրահայեաց, մեզմ, ինչպէս յոյներն էին արտայայտում՝ տամուկ աչքերը, որ գեղարուեստագէնները ընդ միշտ յատկացրել են Վեներին ու Բարոսին, կանոնաւոր, գեղեցիկ և համարեա արծուային քիթը, դուրս ընկած ծնօտը և կրքոտ, զգայուն շրթունքները—լրացնում են նրա դէմքը՝ ինչպէս վրձինով և բրիչով պատկերացնում են նրան։ Որ նա գեղեցիկ էր, դրան ամենքն էլ համաձայն են։ Աւելացնենք գեռ, որ բոլոր գեղարուեստագէտները նրան մաքուր—ածիլած երեսով են պատկերացնում, բացի Պոմպէեան մոզայիքից, որ ներկայացնում է Աղեքսանդրին՝ իսսի մօտ կուռում։

Գ.

Պարսիկները. — Գրանիկի մօսի կոխը.

Այն աշխարհը, ուր մտաւ պատանի Աղեքսանդրը, էր մեծ, հին արևելքը՝ Արևմտքի և արևելքի՝ Եւրոպայի և Ասիայի՝ երկու աշխարհների միջի սահմանագիծը իւր նախկին տեղում մինչև այժմ էլ պահպանուել է: Ինչպէս ներկայումս Յունաստանից Արխիպելագն անցնելիս մարդքնազդաբար դդում է մի աշխարհից միւսը փոխադրուիլը, այնպէս էլ Աղեքսանդրի ժամանակ եղէեան ծովից անցնելիս, փոփոխութիւն էր զգացւում ամեն բանի՝ սովորութիւնների, հասկացողութիւնների և դաղափարների մէջ: Թէ և Փոքր Ասիայի արևմտեան ափը ժապաւէնի նման պատած յունական գաղթականութիւնները կարծես հեռացնում էին արևելքի սահմանը, բայց, չը նայելով յոյն՝ տսիական ծովափնեայ քաղաքներում պահպանած հելենական բնաւորութեան, այնու ամենայնիւ, նրանց վերայ թագաւորում էր արևելքի ամենակարող խորհրդաւոր ազգեցութիւնը, որին չէին կարողանում դիմադրել Փռիւդիայի կամ Կապադովիլիայի գաղութները: Արևմտքի և արևելքի այդ սահմանի վերայ սկիզբն առաւ եւրոպական պատմութիւնը՝ Ոսկէ գեղմի և Տրովական պատերազմի մասին խորհրդաւոր լեզենդաներով: Այդ տեղ առաջին անդամ արևելեան աշխարհի հետ կոռումտան յունական հերոսները՝ անհատական ազատութիւնը պաշտպանելով:

Դարեհի և Քսերքսէսի ժամանակ եղած պարսկական պատերազմները հին յոյների հերոսական նախաձեռնութեան՝ արևելքի պատասխանն էին ներկայացնում իրանցով: բայց արևելեան հեղեղի հոսանքը կանգ առաւ և

յետ նահանջուեց Մարաթօնում, Սալամինայում և Պլատէայում կանգնեցրուած կենդանի պատուարներով: Սակայն արևմուտքը չը բաւականացաւ ընդդիմութիւն ցոյց տալով արևելքին՝ նա ցանկանում էր վրէժինդիր լինել նրանից, և Աղեքսանդրն իւր վերայ առաւ այդ հարցը: Նա փայլուն կերպով դլուխ բերեց այն և արևելքը ենթարկեց արևմուտքին: Բայց համաշխարհային ողբերդութիւնը դրանով չը վերջացաւ, և շատ դարեր յետոյ, իւր հերթում արևելքն առաւ արևմտքից իւր ստացած պարտութեան վրէժը: Այդ իսլամի միջոցով արտայայտող վրիժառութիւնը մինչև այժմ պահպանում է արևելքի և արևմտքի կոռուի սկզբունքը: Խսկապէս ասած, ժամանակակից արեւելեան հարցը հիմնուած է նոյն ձգտումների վերայ, որոնք ստիպեցին Աղեքսանդրին Հելլեսպոնտոսն անցնել:

Յոյն աշխարհի և արևելքի միջի հակառակութիւնը հիմնուած էր աշխարհայեցողութեան ծայրայեղ տարբերութեան վերայ: Սոնին, որի վերայ ամբողջ յունական աշխարհը պառյա էր գալիս՝ անհատականութեան իրաւունքի սկզբունքի մէջ էր ամփոփում, և դրանից էր որ յոյներն առում էին այդ իրաւունքը խախտող ամեն մի հաստատութիւն, ձգտում էին դէպի կառավարութեան ուամկապետական (Դիմոկրատական) ձեւը և բացի տեղական ինքնավարութիւնից ոչինչ չը կարողացան ստեղծել: Ընդհակառակին, արևելքի որդոց համար պետութիւնն ու տիեզերքը բռնակալական խորհրդաւոր ուժի ահագին արտայայտութիւն էին ներկայացնում: Յունակալութեան, որի առաջ, ինչ ձև էլ ընդունելու լինէր նա, պէտք է խոնարհուէին բռնորը: Յունակալութիւնը չէր ընդունում անձնական անկախութեան սկզբունքն ու իրաւունքը: Ուստի, բնականաբար յոյն աշխարհի և արևելքի աշխարհայեցողութեան և ներքին գիտակցութեան տարբերութիւնը արտայայտում էր և նրանց արտաքին գործունէութեան մէջ: Յոյները, որպէս եւրոպական արիացիների ամենազարդացած տիպը, առաջ էին ընթանում, գոր-

ծունէութեան ու կեանքի մէջ իրանց բոլոր երևոյթներով, և առաջադիմութեան փափագ ունէին։ Ծնդհակառակն, արեւելքի մարդիկ, բառի բուն նշանակութեամբ, հին աշխարհի մարդիկ էին. հին, չափազանց շատ հասունացած քաղաքակրթութեան որդիք. ըստ ամենայնի անձնատուր եղած անտրտունջ հնագանդութեան, անշարժութեան և ընդարմացման։

Հին արևելքը, որին մենամարտութեան էր հրասիրել պատանի Աղեքսանդրը, իւր քաղաքական կազմուկերպութիւնը ստացել էր պարսիկների տիրապետութեան ժամանակից, որը Կիւրոսի ժամանակ 550 թուին հաստատուեց։ Պարսիկները իրանական ցեղ էին Հնդկա—Եւրոպական կամ արիական ճիւղին պատկանող, որը հնագոյն ժամանակներից գրաւել էր Բակորիան և Պարթևաստանը։ Նրանք կամաց կամաց գէպ հարսու շարժուեցին. հիմնեցին իրանց Շօշ մայրաքաղաքը, և պատերազմանէր ու եռանդու Կիւրոս թագաւորի յաղթութիւններով տիրեցին այն ժամանակուայ արեւելքի երեք գլխաւոր պետութիւններին—Լիդիային, Միդիայի և Բարիլոնին։ Մի պատմաբանի խօսքերով, գէպի այդ ազնիւ, մեծահոգի պարագլուխը մի օրինակ յարգանքով էին վերաբերում պարսիկները՝ որոնք նրա միջոցով տիրապետել էին այն ժամանակուայ բոլոր յայտնի աշխարհին, հրեաները՝ որոնք նրա ձեռքով ազատուել էին և յոյները՝ որոնց նա ենթարկեց իւր իշխանութեանը։ Նրա կամբիւս որդին Եգիպտոսն էլ միացրեց Պարսից թագաւորութեանը, իսկ նրա յաջորդներից մէկը, Դարեհը, վերջնականապէս կազմակերպեց այդ արեւելեան ահագին կայսերութիւնը, որ տարածում էր Հելլեսպոնտոսից մինչև Ինդոս և Ակսարտից մինչև Վերին Նեղոսը։ Դարեհը երկու համաշխարհային դարեշշանների շեմի վերայ էր կանդնած. նա աւարտում էր հին արեւելքի զարգացումը և աղաքայ քաղաքական կազմակերպութեանը տալիս էր ձև։ Նրա վերջին օրերում, Մարտինեան կոիւը սկսում է նոր զարաքշանկը զարգացման այն աշ-

խարհի, որը Միջերկրական ծովով էր շրջապատուած։ Դարեհից կազմակերպուած կայսերութիւնը իներցիայի շնորհիւ յարատեեց 150 տարի ևս նրա վեց յաջորդների ժամանակ և վերջապէս, անցաւ Դարեհ 111 Կոտոմանսոսի ձեռքը, որի հետ և կոռւի մտաւ Աղեքսանդրը։

Պարսից թագաւորութիւնն այդ ժամանակ երկու միլիոն քառակուսի մզոն տարածութիւն ունէր և արևիում էր իւր մէջ 50 միլիոն բնակիչ, որոնք բնակում էին այժմեան թուրքեստանում, Աւղանստանում, Գիսիսային Աշխարհում, ասիական Տաճկաստանում, հիսիսային Աշխարհում, և Եգիպտոսում։ Այդ ամբողջ ընդարձակ տարածութիւնը բաժանւում էր քսան սատրապութեան կամ գաւառի, և նրանցից իւրաքանչիւրը կառավարում էր սատրապով կամ փոխարքայով, որը թագաւորի առաջ անձամբ պատասխանատու էր։ Թէև այդ սատրապներն իրանց ենթարկուած երկների անսահման կառավարիչներն էին, բայց տեղական ազգաբնակութիւնները կատարեալ ինքնավարութիւն ունէին և պահպանում էին տեղական սովորութիւններն ու օրէնքները։ Կառավարութեան միութիւնը պահպանում էր պարբերական քննութիւններով, որոնք կատարում էին թագաւորին վստահելի՝ «արքայական աշեր» կոչուած անձանց ձեռքով, և լաւ պահպանուած զինուորական ճանապարհներով, որոնց շնորհիւ կառավարութեան սուրհանդակներն աներեւակայելի արագութեամբ տեղից տեղ էին փոփոխուում։ Պարսից տէրութեան հարստութեան մասին կարելի էր ամենից լաւ գատել իւրաքանչիւր տարի այնտեղ հաւաքուած հարկերի քանակութեան ընդհանուր թուով, հարկերի, որ հողային տուրքի ընաւորութիւն ունէին և տալիս էին կառավարութեան մինչև 7600 տաղանդ, այսինքն մօտ 20 միլիոն րուբլի։ Թէև տէրութեան եկամուտը գրանով չէր սահմանափակում և զանազան գաւառներ պարտական էին որոշ ձեռք մասնաւոր տուրք ևս զիարեկ յայտնի ծախքերէ համար։ Այդպէս Հերութուոսի խօսքերով, մէկ հասարա-

կութիւն դրամ պէտք է հասցնէր թագուհու թագի, միւսը նրա ապարանջանի, երրորդը նրա հեծնելու ձիու զարդարանքի համար և այլն. արաբական ցեղերը վճարում էն կնդրուկ 1000 տաղանդ արժողութեամբ, կողքիսը 200 ստրուկ, և Բաբիլոնը—500 ներքինից Զարմանալի չէ, որ այդպիսի հարկերի շնորհիւ, չը նայելով միլիոնաւոր զօրքի պահպանութեանը, ինչպէս Քոերքսէսի ժամանակն էր, Պարսից դանձարանը լիքն էր դրամներով, և Աղէքսանդրը միայն Պերսեպոլի արքունական դանձարանում գտաւ 120 հազար տաղանդ ոսկի և արծաթ այսինքն $1\frac{1}{2}$ միլիարդ բուրլի դրամ։

Հարկից զատ, իւրաքանչիւր սատրապութիւն պարտական էր ներկայացնել պատրաստի զօրք և բանակի կերակրելէնի մի մասը. այսպէս՝ իւրաքանչիւր տարի կապագովկիան տալիս էր 1500 ձի, 2000 զորի և 50,000 ոչխար. Միդիան—կրկնակի թիւը դրանցից ամեն մէկի. Կիլիկիան—360 կապոյտ ձիաներ, Հայաստանը—10 հազար նժոյդ և այլն. Պարսից բանակի ամենայուսալի և ամենապլիսաւոր տարրը, որի հետ Աղէքսանդրին վիճակուեց գործ ունենալ, յունական վարձկաններն էին: Իսպիկուում նրանց թիւը 30 հազարի էր հասնում: Պելոպոնէսան պատերազմներից յետոյ Յունաստանում խիստ զարգացաւ ոչ միայն յունական զանազան տէրութիւնների, այլ և օտար երկների համար զինուոր վարձուելու սովորութիւնը: Պատմաբանի խօսքերով, «Յունաստանը աղատութեան կոիւ էր մզում իւր գոյութեան վերջին տարիներում ոչ թէ հայրենասէր քաղաքացիների, այլ՝ պարսից դրամներով գնուած վարձկանների օգնութեամբ»: Ինչ վերաբերում է պարսիկներին, նրանք առաւելապէս արկադացիներ, աքացիներ, էտուացիներ և թեսազիներ էին վարձում. որմնագիրների կամ աշխատաւորների նման յոյները զինուորական ծառայութեան էին գնում իրանց արհեստի գործիքներով և դրա համար ստանում էին վարձ, կերակուր և աւարի մի մասը: Տարօրինակ կը

թուի ասելը, «որ վարձկան զինուոր լինել կամ օտարերւ կրեայ զօրքերի շարքում Յունաստանի դէմ եղած կոփւներում ծառայելը—հայրենիքի դաւաճանութիւն չէր համարւում. որովհետեւ յունական հայրենասիրութիւնը սահմանափակւում էր դէպի իրանց քաղաքը տածած պղատոնական սիրով և անձնասիրութեամբ»:

Դարեհի ժամանակից սկսած պարսից մայրաքաղաքը Եօն էր և ոչ Բաբիլոնը: Եօնը պարսից կայսերութեան համարեա կետրոնումն էր գտնուում և 120 ստադիա, այսինքն մօտ 13 մզոն շրջապատ ունէր: Բայց թագաւորները, որոնց թւում և Դարեհ կոտոմանոսը յաճախ ապրում էին Պերսեպոլում, որը յայտնի էր իւր երեք կարգ խիստ ամրացած քաղաքային պատերով, և Եկբատանում, ուր թագաւորները անց էին կացնում առաւելապէս ամառուայ ամիսները: Պարսից թագաւորների արքունիքը իւր հոյակապութեամբ և շքեղութեամբ հիասքանչ էր: Երբ չապատուած բազմաթիւ պալատականներով, ծառաներով և թիկնապահներով, թագաւորը կարելոյն չափ իրան հեռու էր պահում հասարակ մահկանացուներից: Նա ունելիքներութիւն էր շնորհում՝ գահ բազմած, ծիրանեգոյն ամպհովանու տակ, որ հաստատուած էր լինում թանկագին քարերով ընդեռ ուղուած չորս ոսկեայ սիների վերայ: Նրա երեւալուն պէս պալատականները երեսի վերայ էին ընկնում, նա պալատից ոտքով երբեք դուրս չէր գալիս, այլ շրջում էր, սովորաբար ձիով կամ կառքով, փառաւոր շքախմբի ուղեկցութեամբ: Հանդիսաւոր դէպքերում նրա առաջից տարւում էին լոյսի աստուածութեան Միհրի կառքերը սրբազն կրակի հետ միասին: շուրջը կնդրուկ էին ծխում, իսկ ճանապարհը ծածկում էին դափնեայ ձիւղերով: Պլուտարքոսի գնահատութեամբ արքայական զգեստը մօտ 30,000,000 բուրլի արժէր:

Պարսից թագաւորի կանանցը (Հարեմը) կազմուած էր թագուհուց, մի քանի երկրորդական կանանցից և անթիւ հարձերից: Դարեհ կոտոմանոսի կանանցը մօտ 320

կին կար, և Աղեքսանդրը, իսսի յաղթութիւնից յետոյ, նրանց բոլորին գերի վերցրեց: Թէ՛ւ պարսից արքունիւքում Զոադաշտի կրօնն էր տիրապետում, բայց նա պետական կրօնի նշանակութիւն չունէր, և Միջագետքի ժողովրդի մեծ մասը հին Բարիլոնի գտանութեանն էր պատկանում:

Ահա, արևելեան այսպիսի մի հզօր պետութեան հետ էր կռուի մտել Մակեդոնիայի պատանի հերոսը: Նիւթական և զինուսրական այն աղքատ դրութիւնը, որով նա սկսեց պարսից դէմ արշաւանքը, խոհեմ մարդոց աչքին կարող էր անմիտ թուալ: Բայց այդ արշաւանքն իսկապէս ուղիղ հաշուի վերայ էր հիմնուած: Աղեքսանդրը դիտէր, որ Պարսկաստանը շատ թոյլ կողմեր ունի, և եթէ նա, իներցիայի ուժով, առաջուայ նման շարունակում էր իւր գոյութիւնը, այդ միայն այն պատճառով էր, որ չէր գտնուել մի քաջ մարտնչող, որ աւազի վերայ կանդնեցրած այդ հսկայական արձանը խորտակէր:

Իրան բարձրածայն յոյների առաջնորդ անուանելով, թէև Յունաստանն այդ պատերազմում մեծ և անկեղծ մասնակցութիւն չունէր, և յունական վարձկանները կազմում էին պարսից զօրքի մեծ ոյժը, Աղեքսանդրը շարժեց իւր ոյժերը պարսիկների դէմ, որոնք սպասում էին նրան Գրանիկ գետի ափին, նրա՝ Մարմարեան ծովը թափուելուց 15 մղոն հեռու. ինչպէս արդէն ասուած է, 35000 մարդուց էր բազկացած Աղեքսանդրի զօրքը: Նրանց թւում հետեւակներն էին՝ 5000 վարձկան, 7000 դաշնակից, 6000 թրակացի և իլլիւրացի, և 12000 մակեդոնացի, իսկ ձիաւոր՝ 1500 մակեդոնացի, 1500 թեսազացի և 2000 յոյն ու թրակացի: Մակեդոնացոց բանակի դըլ խաւոր ոյժը նրանց նշանաւոր այրուձին էր, որը հերոսներից ու դիւցազուններից էր բազկացած: Այլուձին բաժանւում էր 8 իլի, այսինքն վաշտի, որից, ամենաքաջ կտրիճներից կազմուածը անուանուում էր ադեմա: Յունաց ամբողջ հեծելազորի պէս Մակեդոնացոց այրուձի էլ մե-

տաղի սաղաւարտ ու կտաւէ կամ կաշուէ աստառով մետաղեայ թեփով ծածկուած զրահ էր կրում: Զը թամշած ձիերով էին նրանք արշաւում, և սպառազինուած էին կարծ, երկայրի սրերով ու թրերով, իսկ վահաններ ու նիզակներ չունէին: Թեսազացի հեծելազօրն էլ նոյն պէս էր սպառազինուած, իսկ թեթև ձիաւորներն երկար տէգեր ունէին:

Պեցետերիա անուանուած հետեւակ զօրքը կազմուած էր Փիլիպոսի ստեղծած հզօր փալանգներից: Իւրաքանչիւր փալանգ ունէր և գումարտակ: Օրսնցից իւրաքանչիւրը 8-ական կարգերից էր կազմուած: Հետեւակները կոխ էին գնում տէգերը կշռի ձևով ձախ թեին բռնած, այն պէս որ, վերջին կարգի տէգերը համարեա հասնում էին առաջինին, իսկ բոլորը միասին կազմում էին ծայրերի մի անթափանց զանգուած: Թեթև հետեւակների մի վաշտը կազմուած էր վարժուած զինւորներից, որոնք գիպանսպիսուներ էին կոչւում: Նրանք սպառազինուած էին երկար սրերով, գեղարզներով և վահաններով: Աղեքսանդրը սովորաբար հետեւալ կերպով էր գուրս բերում իւր զօրքը: Աջ կողմից կանդնում էին աղեղնաւորները, ապա ձիաւոր ագեւման, թեթև հեծելազօրը, գիպասպիսուները, փալանգներն և դաշնակից յունաց այրուձին: Իսկապէս նա կենդրոն չունէր, այլ միայն երկու, իրար հետ միացած, թեւեր՝ աջ ու ձախ, աջը, սակայն, ծառայում էր յարձակման, իսկ վերջինը — տոկուն դիմադրութեան համար:

✓ Հէնց որ մակեդոնացիների յարձակման լուրը հասաւ՝ պարսից ամենաընդունակ զօրապետ Մեմնոնը, որ Բոդոսացի էր յոյն ծագումով, խորհուրդ տուեց յետ նահանջել, դէպի երկրի ներաը հրապուրելով Աղեքսանդրին և ոչչացներով ճանապարհի վերայ գտնուած ուտեսատիրոլոր պաշտրը: Նրա կարծիքով, մակեդոնացիք, պարսուող պաշտրը:

տանջել երկար տեղափոխութիւններով, և ուտեստի սղութեամբ: Բայց, դէպի Մեմնոնը նախանձից և կեղծ հայքենասիրութիւնից, պարսից մնացած զօրապետները վըճռեցին Աղեքսանդրին դիմադրել Գրանիկ գետն անցնելիս: Նրանք ամուր դիրք բռնեցին գետի արեւելեան լիստ զառիվայր ափին, ճակատում տեղաւորելով՝ Հազար մարդուց բազկացած հեծելազօրը, իսկ նրա ետելը, բարձրութեան վերայ նոյնքան յունական վարձկան հետեւակ գնդերը: Դիմացի ափը հասնելով, Աղեքսանդրը նկատեց պարսիկների այդ դասաւորութեան անմիտ սխալը և վճռեց իսկոյն յարձակուել նրանց վերայ, չը նայելով որ արեւդակն արդեն շատ բարձրացել էր: Պարմենէոնը խորհուրդ չէր տալիս մի այդպիսի յանդուդն, վճռական քայլ անել, և աւելի բարւոք էր դանում բանակ դնել և սպասել, մինչև որ թշնամին երկրի ներսը կը հեռանար, որ նա, ի հարկէ, պէտք է անէր համոզուելով, որ մակեդոնական հետեւակազօրը թուով գերազանցում է նրանցից: Դրան Աղեքսանդրը պատասխանեց: «Ամօթ է իմ համար կանդառնել այդ անպէտք վտակի առաջը, երբ ես Հելլեսպոնտոսն եմ անցել: Եթէ ես չը յարձակուեմ պարսիկների վերայ, նրանք կամբարտաւանան, թէ մակեդոնացիք վախեցան իրանցից»: Իսկապէս պատահի հերոսը դեկավարում էր ոչ թէ այդպիսի ենթադրութիւններով, այլ զինուրական միջոցով: Նա հասկանում էր, որ պարսիկները իրանց ետեռում թափ կացնելով յոյն հետեւակներին, որը միայն կարող էր վտանգաւոր լինել, և առաջ քաշելով պատերազմական գործի մէջ անօդուտ հեծելազօրը, իրանց առաջուց պարտութեան մատնեցին: Այդ պատճառով, նա Պատմենէօնին հրամայեց զեկավարել զօրքի ձախ թելը, իսկ ինքը աջն իւր վերայ վերցրեց, հեծելազօրի և հետեւակի խառն գնդով Ամենդին ուղարկեց թշնամու վերջին ձախ թելի վերայ յարձակուելու, պարսիկներին այն կողմը քաշելու և նրանց կեդրոնը թուշացնելու մտքով, որովհետեւ նա ինքը յարձակուեց թշնա-

մու. կեդրոնի և ձախ թելի միջև եղած դիրքի վերայ: Փողի բարձր հնչիւններով Աղեքսանդրի առաջնորդութեամբ գետի ծանծաղուտով մակեդոնացիք առաջ գնացին: Աղեքսանդրն իւր զօրքն այնպէս էր դասաւորել: որ նրանք գետն անցնելիս թշնամուն ներկայացրին որպան կարելի էր՝ լայն ճակատ: Նրանց դիմաւորեց նետերի մի տարափ, իսկ երբ սկսեցին քարքարոս և լորձուն ափը բարձրանալ, նրանց վերայ յարձակուեց պարսից հեծելազունդը, դէպի ջուրը յետ հրելով: Մակեդոնացոց առաջն կարգերը դժուարութեան հանդիպեցին, և ափը շուտով ծածկուեց անկանոն կերպով մարտնչող մարդկանց ու ձիաների դիտիներով: Բայց որքան որ գետն անցնող հեծելազօրի և հետեւակազօրի խումբը բազմանում էր, այնքան էլ մակեդոնացիների յարձակումն աւելի անդիմադրելի էր դառնում: որովհետեւ պարսիկներն իրանց կարճ նիզակներով չեն կարողանում թափանցել մակեդոնական տէգերի միջից:

Աղեքսանդրը ամենից առաջ էր արշաւում, և նրա երկու նիզակները իրալ ետեսից կոտրուեցին: Այդ ժամանակ Կորնթացի Դեմարատն իւրը նրան տուեց, և պատանի հերոսն իւր առաջ տեսնելով հեծելազօր մի վաշտի գլխաւոր, Դարեհի փեսայ, Միհրդատին, յարձակուեց նրա վերայ և երեսին որի մի հարուած հասցնելով՝ ձիուց վայր գլորեց: Բայց այդ վայրկենին մի պարսիկ տապարով այնպէս ուժգին խփեց Աղեքսանդրի սաղաւարտին: որ նրանից մի կտոր թուաւ: Մակեդոնական հերոսը տէգը հակառակորդի կուրծքը լսրելով՝ երկրորդին էլ վայր գլուրեց, բայց երրորդն արդէն բարձրացրել էր իւր տապարը նրա գլխին, երբ օգնութեան հասաւ կիտն ու ձեռքի մի ճարպիկ հարուածով կտրեց որա էլ կացինը բռնած ձեռքը:

Զնայելով պարսիկների կամակոր դիմադրութեանը, մակեդոնացիք նրանց կենդրոնը ցրուեցին, և պարսիկները մակեդոնացիք նրանց կենդրոնը ցուտով նահանջել: Շուտով նահանջը փախուստի փոխսկեցին նահանջել:

ուեց, որին միացան երկու թևերն էլ դարհուրած՝ կենդարոնի պարտութեամբ։ Յայց Աղեքսանդրը թշնամիներին չը հալածեց, և դրանով էլ բացառուում է պարսից այսուձիու կրած համեմատաբար քիչ կորուստը, որ 1000 մարդոց աւելի չեր։ Կոռուի գաշտից փախուտեամբ խոյս տուող պարսից հեծելազօրի տեղը բռնեցին, մինչեւ այդ ժամանակ անօդուտ կանգնած, հետեւակ զօրքի կարգերը նրանց վերայ ճակատի կողմից յարձակուեցին մակեդոնական ահարկու փալանդները, իսկ թևերի կողմից՝ հեծելազօրը։ Տեղի ունեցաւ զարհուրելի կոտորած։ 2000 պարսիկ գերի բռնուեցին, իսկ մնացածներն էլ անինաւ յաբար կոտորուեցին։ Արբիանի խոռըերով, փրկուեցին միայն նրանք՝ որոնք կարողացան ծածկուել մեռած մարդոց դիակների տակ։

Պարսից պարտութիւնը կատարեալ էր և Աղեքսանդրի առաջին յաղթութեան գլխաւոր յատկութիւնը այն էր՝ որ ընկած պարսիկների կարգերում նշանաւոր թուով առ կանաւոր զոհեր կային։ Այսպէս սպանուած էին—Դարեհի փեսայ։ Միհրդատը, նրա աներորդի Փառնակը, Արտաշէս թագաւորի թոռն Արբուրալը, Լեդիայի սատրապ Սպիդրիդատը, Կապադովիայի նահանգապետ Միարուուղանը և յունական վարձկանների առաջնորդ Ամարը։ Փոխդիայի նահանգապետ Արբիերը կոռւեց յետոյ ինքնասպան եղաւ, որ Մեմոնի խոհեմ կարծիքը չընդունել տալու պատասխանատութիւնից ազատուի։ Մակեդոնացոց կորուստը շատ

Հետեւալ օրը թաղեցին սպանուած մակեդոնացիներին զինուրական պատիւներով։ այսինքն, նրանց հողիջեցրին զէնքերը հետք։ Նրանց որդիքն ու ծնողները ազատուեցին ամեն տեսակ հարկերից ու զինուրական ծառայութիւնից։ Աղեքսանդրը պալատական քանդակաւ գործ Սիկիոնցի Լիսիապին յանձնարարեց ձիաւոր ագեմիստի 25 սպանուածների համար բրոնզէ անձաններ պատրաստել, իսկ այդ արձանները, յետոյ դրուեցին

մակեդոնացոց մայրաքաղաքում։ Երիտասարդ թագաւորը ինքն անձամբ այցելեց վիրաւորուած զօրապետներին և զինուրաներին ու հետաքրքրուում էր նրանց քաջադոր ծութիւններով, որով և ամենից աւելի էր միիթարում պարծենկոտ յոյներին։

Դերի ընկած յոյներին Աղեքսանդրը Մակեդոնիա ու դարկեց և ստրուկ դարձրեց՝ երկիր մշակելու համար։ Դերիների մէջ կային և աթենացիներ, որոնց համար, միջնորդուում էր նրանց հայրենիքը և աթենական կառավարութիւնը, որ յետոյ մի քանի անգամ այդ գերիների աղատութեան համար Աղեքսանդրի մօտ դեսպանութիւն ուղարկեց, բայց այդ ինդիքքը միայն երեք տա՞րի անցնելուց յետոյ յարգուեց։ Իսկ միւս կողմից Աղեքսանդրը գէպի յոյները մեծ վեհանձնութիւն ցոյց տուեց։ այսպէս պարսից բանակից խլուած աւարից նա բաժին հանեց առաջին յաղթութեան գլխաւոր յատկութիւնը ոչ միայն իւր Ոլիմպիա մօրը սոկէ բաժակներ ու շքեղ գորգեր, այլ և աթենացիներին 100 հատ զինուրական լրիւ սպառազինութիւն, որ նրանք կախէին Ակրոպոլում, այս արձանագրութեամբ։ «Փիլիպոսի որդի Աղեքսանդրը, և, բացի լակեդեմոնացիներից, յոյները, Ասփայում բնակող բարբարոսներից խլուած այս աւարը նուիրում են Աթենաս աստուածուն հուն»։

Այսպէս վեհանձնաբար վարւում էր յոյների և առանձնապէս աթենացիների հետ, ի հարէ առաջնորդուելով ոչ միայն իւր հոգու ազնուութեամբ, այլ և քաղաքական հաշիւներով։ Գրանիկի մօտի յաղթութեամբ նա իսկապէս ապացուցեց որ, ոչ միայն խօսքով այլ և գործով յոյն աշխարհի առաջնորդ է, և յունական սրբութիւնները պարագիների ձեռքում պղծուելուն համար վրէժինդիր է ամիկների ձեռքում պղծուելուն համար վրէժինդիր է լինում արևելքից։ Նա դեռ ևս յոյս ունէր, որ յունաց քաղաքները, Աթէնքի գլխաւորութեամբ, կը հասկանան, գաղաքները, միայն իսկական յոյն է, և կը ճանաչեն վերջապէս, որ ինքն իսկական յոյն է, և կը ճանաչեն նրան իրանց ճշմարիտ գլուխ։ Բայց աթենացիք իրանց տես-

զական, նեղ հայրենասիրութեամբ կուրացած, չը հասկացան այդ և այդ ժամանակից սկսած մարդկութեան պատմութիւնը իւր յառաջադիմութեան մէջ իւր ընթացքը կատարեց առանց Աթէնքի:

Դ.

Փոքր Ասիայի նուանումը.

Գրանիկի մօտի կոխւը ահագին նշանակութիւն ունեցաւ: Դա առաջինն էր այն եղեք մեծ յաղթութիւններից, որոնք պարսից կայսերութիւնը ենթարկեցին Աղէքսանդրին: Նրա անմիջական հետեանքն եղաւ այն իրողութիւնը, որ Տօրոս լեռներից գէպի հիւսիս, ամբողջ Փոքր Ասիան յաղթողի առաջ խոճարհուեց, որովհետեւ այն տեղ չկար բաւականաչափ պարսից զօրք՝ դիմադրելու մակեդոնական յաղթող բաճակին, որը, Գրանիկի մօտի կոռուից յետոյ, նայում էր իւր առաջնորդի վերայ մի տեսակ ողերուած սիրով ու անսահման վատահութեամբ:

Աղէքսանդրը, իւր բաճակին հանդիստ ուալուց յետոյ շարժուեց գէպի Լիդիա, որի Սարդին մայրաքաղաքը, չը նայած իւր ամուր դիրքին բաց արեց իւր դռները պատանի յաղթողի առաջ: Աղէքսանդրը բնակիչներին աղատութիւն տուեց, վերականգնեց պարսիկների փոխանց հին օրէնքը, ցանկացաւ Ոլիմպիական Զեսի պատուին տաճար կադնեցնել: Այդ առթիւ մի աւանդութիւն կայ. որպէս թէ, երբ Աղէքսանդրը տաճարի շինութեան տեղի վերաբերեալ հարցն էր քննում, յանկարծ պարզ երկնքում մի սե ամպ երևաց, սկսուեց որոտումն և փայլակ: Բայց ընդ ամենը մի քանի կաթիլ անձրեկաւ և այն էլ միայն միջնարերդին մօտիկ ժայռի այն մասի վերայ, ուր երբեմն կանգնած տրիբեմների հետ, այդ պատճառով

գաւորների ապարանկքը: Այդ հանդամանքը համարուեց մի երկնային նշան և այդ տեղ էլ տաճար կանգնեցրուեց:

Աղէքսանդրը Լիդիայի կառավարութիւնը թողեց նախկին ձեռով, իսկ պարսից սատրապին փոխարինեցին երեք պաշտօնական անձնաւորութիւններ—նահանգապետ, հարկերի տեսուչ, և քաղաքապահ զօրքի պետ: Նրանք բոլորն էլ անմիջապէս պատասխանատու էին թագաւորի առաջ: Կառավարութեան այդ ձեռ Աղէքսանդրը մացրեց պարսից և այն նահանգներում, որոնց տիրապետում էր: Դրա գլխաւոր օգուտն այն էր, որ զինուորական իշխանութիւնը բաժանեւում էր վարչականից:

Լիդիայում գործը վերջացնելուց յետոյ, մակեդոնացաց հերոսը գարձաւ գէպի Եփեսոս և նորից մտաւ յունական սահմանները. որովհետեւ Փոքր Ասիայի ափին յունական գաղթականութիւնները կազմել էին մայր երկրի նման մի Յունաստան, որ յունաց ամբողջ երկրի մի երրորդն էր կազմում: Իսկ ինքն, Եփեսոսը գտնուում էր Աթէնքի դիմացը, Եգէտիական ծովի ասիական ափի ուղիղ մէջ տեղը, այն խորշի խորքում, որի շուրջն ընկած էին մօտ 10 յունական ծաղկած քաղաքներ: Որպէս յունաց՝ Փոքր Ասիայի հետ ունեցած բոլոր յարաբերութիւնների կեղրօնատեղի և որպէս նշանաւոր Դիանի սրբավայր՝ Եփեսոսը քառորդ միլիոն բնակիչ ունենալով, ասիական Յունաստանի ամենամեծ, ամենահարուստ քաղաքն էր: Որովհետեւ այդ ասիական Յունաստանը, որի կեղրօնն էր Եփեսոսը, հակումն ունէր գէպի օլիդարխիա, և անտարբերութեամբ հաշտուել էր պարսից մեղմ լծին, ուստի նա շատ սառնասրատութեամբ էր նայում իրան ազատել ձգտող Աղէքսանդրի վերայ, և նոյն իսկ պատրաստ էր նրա գէմ գնալու՝ եթէ միայն նա յաղթուէր: Բայց որովհետեւ նա մինչև այժմ յաղթող էր եղել և յոյն վարձականներից կազմուած Եփեսոսի քաղաքապահ զօրքը մականական կանգնած տրիբեմների հետ, այդ պատճառով խորշում կանգնած տրիբեմների հետ, այդ պատճառով

Էլ քաղաքը վճռեց խաղաղ կերպով անձնատուր լինել աշխարհակալին:

Աղէքսանդրն Եփեսոսում ժողովրդական կուսակցութեան կողմն անցաւ, վեջացրեց օլիդարխիան, ոտեղծեց գեմոկրատական կառավարութիւն և հրամայեց մինչև այդ ժամանակ պարսիկներին վճարուելիք տուրքը Դիանա աստուածուհուն տալ: Բայց ժողովրդական ամբոխը ապրատամբեց իւր նախկին կեղեքիների դէմ և սկսուեց կոստորածը, որը մակեդոնացիք ստիպուած եղան զէնքի ուժով գաղաքացնել: Շրջակայ յոյն քաղաքների մեծ մասը Եփեսոսի օրինակին հետեւլով՝ Աղէքսանդրին հպատակուեց: Միայն, Եփեսոսի հակառակորդը՝ Մելիտինէն—Ընդդիմութիւն ցոյց տուեց: Թէե պարսից քաղաքապահ զօրքի հրամանատարը սկզբում առաջարկեց քաղաքը յանձնել, բայց իմանալով, որ պարսից նաւատորմը շատ հեռու չէ գտնուամ, փոխեց իւր մտադուութիւն և Մելիտինէի պաշտպանութեան համար միջոց ձեռք առաւ: Սակայն պարսից նաւատորմիզը, իւր գանդաղկոտութեամբ ի դերեւ հանեց նրա բոլոր յոյսերը և նախքան նրան օգնութեան կը հասնէին 160 տրիբեմից բազկացած մակեդոնական վաշտը խարիսխ ձեց Մելիտինէի նաւահանդսոտի առաջ և Աղէքսանդրը ցած իջեցրեց մի ուժեղ բանակ իւր զօրքից:

Այն ժամանակ տրիբեմները մեծ տեսակի թիավար նաւեր էին, և ծովային պատերազմական ամբողջ շնորհը այն էր, որ թշնամու նաւի թիերը կոտրէին ու կողերը ծակէին: Այդ պատճառով մեծ մասամբ աշխատում էին տրիբեմների ընթացքի արագութիւնը զարդացնել. դրանցից իւրաքանչւրի վերայ գտնուում էր 170 թիավար և միայն 10 կամ 15 զինուոր: Թավարները ամեն մի կարգում երեք—երեք հոգի էին նստում. թիերը չափազանց երկար էին: Խնդն տրիբեմը 120 կամ 150 ոտ երկարութեամբ, 15 կամ 18 ոտ լայնութեամբ և 3 ոտ խորութեամբ մի թեթև նեղ նաւ էր: Երկար ճանապարհորդե-

լիս և յաջող հողմին, առագասաներ էին պարզում երկու կայմերի վերայ, բայց այդ կայմերը պատերազմից առաջ ծալում էին: Տրիբեմները թիով դնալիս՝ մի ժամում՝ 7—8 մզոն տարածութիւն էին կտրում: Այդպիսի նաւատարմի պահպանութիւնը շատ թանգ էր նստում: Օրինակ, Աթէնքն իւր 60,000 նաւատարմներով 300 տրիբեմների վերայ ամսական մինչև 700,000 բուբլի էր ծախսում, չը հաշուելով նաւերի շինութիւններն ու սպառազինութիւնը:

Շուտով երևաց և պարսից նաւատարմը. նրա 400 տրիբեմները տեղաւորուեցին խորշի հակառակ ափում: Պարմենէսնը խորհուրդ տուեց խակոյն ոկսել ծովային կուիը, որովհետեւ նրա ասելով, մակեդոնացիք բան չէին կորցնիլ, եթէ պարսիկները յաղթէին, որոնք առանց այն էլ տրիբետաւմ էին ծովին: Բայց Աղէքսանդրը հակառակ կարծիքի էր: Ծովային կուսի պարտութիւնը կոչնչացնէր մակեդոնական զօրքի ցամաքային յաղթութիւններով ձեռք բերուած փառքը, և կարող էր յունական քաղաքների հակամակեդոնական տարրերի մէջ ապստամբութիւն առաջացնել: Դրան աւելացրու և այն, որ ծովային կոսուի մէջ յաղթութեան հաւանականութիւնը հակառարդների կողմն էր: Պարսկական նաւատորմիզը շատ աւելի բազմութիւն իւկ նրա նաւատարմները՝ փիւնիկեցիք և կիպրոսցիք փորձուած ծովազնացներ էին համարուում, մինչդեռ մակեդոնացիք այդ դործի մէջ անփորձ էին, ուստի նախոհեմաբար վճռեց իւր նաւատորմը պահեստում ունենալ, և առաջուայ նման, ապագայ աշխարհակալութիւնների համար իւր յոյսը գնել ցամաքային զօրքերի վերայ: Խոկ եթէ պարսկական նաւերը կոռուի մտնէին իրանց հակառարդների հետ Մելիտինէի խորշում, այն ժամանակ նաւատորմի շատութիւնը ոչ մի գեր չէր կարող խաղալ: Աղէքսանդրը իւր վէճը Պարմենէսնի հետ վերջացրեց մատնացոյց լինելով երկնային մի նշանի վերայ: Եթէ լեգենդարներին հաւատանք, Պարմենէսն իւր ասածը պնդելու

համար ցոյց էր տուել մակեդոնական մարտանաւերի ետեղ ցտմաքում իջած մի արծիւի վերայ, բայց Աղեքը սանդրը այդ նշանն այլ կերպ է բացատրել: Նրա խօսքնրով, դա նշանակում էր, որ միայն ցամաքային յաղթութիւնն ներով նաւատորմը կարող է կարեսք գերք ձեռք բերել:

Այդպիսով, Աղեքսանդրն ամեն կողմից պաշարեց Մելիտինէն և ուշադրութիւն չը դարձրեց քաղաքի իշխանութեան առաջարկութեանը, բաց անել զուռն և իւր ծովախորշը հաւասարապէս թէ մակեդոնացոց և թէ պարսից առաջ, եթէ նա կը հեռանայ իւր զօշքով ու նաւատորմով: Աղեքսանդրին նոյն իսկ զայրացրեց յոյն աշխարհի և արևելքի կոռուի մէջ յոյների կողմից այդպիսի չեղորութիւն պահպանելու վճռականութիւնը, ուստի նա սկսեց եռանդուն կերպով յարձակման պատրաստուել: Աղեքսանդրի ժամանակ պարիսպներ քանդելու և քաղաքներ վերցնելու ամենասովորական միջոցներն էին՝ բարանը, նետաձիգ մեքենան, փայտեայ բրդերն ու ստորերկեայ ականները: Ամենավտանգաւորը բարանն էր, որը մետաղեայ խոյագլուխ ծայրով մի հաստ ու երկար գերան էր, շղթայից կամ պարանից կապած: Նրան վերելակների վերայ էին յարմարացնում և քաղաքային պարիսպներին մօտեցնում, իսկ յետոյ յետ ու առաջ էին մզում ու նրանով պատի մէջ ծակ բաց անում: Սովորաբար, այդպիսի քանդող մեքենան ունենում էր 60-ից 100 ոտ երկարութիւն. պատահում էր և այնպիսի բարան, որ 180 ոտ երկարութիւն և 2 ոտ հաստութիւն էր ունենում, և այն աստիճան ծանր էր, որ 100 մարդ էր նրան շարժում: Երժական փայտեայ բրդերը 10—20 յարկանի ահագին մեծութեամբ շինութիւններ էին և մինչև 150 ոտ բարձրութիւն ունեին: Նրանց տեղափոխում էին քաղաքի պարիսպների մօտ և մէջը լցուած զինուորները ձգուած կամքով անցնում էին դէպի պարիսպն ու կոռուի էին մտնում պաշարուածների հետ: Այդ բրդերը պաշտպանուած էին լինում երկարութեայ շերտերով: Ստորերկեայ

ականներ էին անցկացնում պաշարուած քաղաքի պարիսպների տակով և գերաններ ներս անկացնում, որոնց յետոյ այրում էին և յառաջ էր գալիս պատերի խորտակումն: Վերջապէս, նետաձիգը կամ քարածիգը մի տեսակ գործիք էր, որը մեծ քանակութեամբ և չափով նետեր ու քարեր էր արձակում:

Յարձակողական այդ բոլոր գործիքները մէջ բերեց Աղեքսանդրը Մելիտինէի դէմ, և բարանը շուտով բաց արեց քաղաքային պարսպի մէջ մի ահագին խրամատ, որի միջոցով մակեդոնացիք իրանց համար ճանապարհ բաց արին, և ոչ միայն խաղաղ ժողովուրդը, այլ և պահպան զինուորները ցըիւ եկան: Սակայն այդ փախստականներից 300 հոգի, Աղեքսանդրի առաջարկութեամբ, անցան նրա բանակը, Այսպիսով, պատահնի հերոսի ծրագիրը բոլորովին յաջողուեց, և պարսից նաւատորմը, որ մակեդոնական տրիբեմների պատճառով չէր կարողանում քաղաքին մօտենալ, որովհետեւ սրանք խիտ առ խիտ պատի նման բանել էին նաւահանդսատի անցքը, ի զուր տեղ թշնամուն երկար ժամանակ գէղի բաց ծովը հրատուրելու փորձերից յետոյ, պիտի հեռանար:

Աւելի և աւելի համազուելով, որ բացառապէս ցտմարային պատերազմ պէտք է վարել, Աղեքսանդրը վճռեց իւր նաւատորմը բոլորովին արձակել: Այդ անել ոտիպուեց նա ոչ միայն այդպիսի հանդամանքներում զինուորական նաւերի անօդուտ լինելը, և նրանց պահպանութեան համար չափազանց մեծ ծախսը ի նկատի ունենալով, այլ վասն զի նրա նիւթեական միջոցը շատ չէր մեծացել Փոքր Ասիայի տիրապետութիւններից: Միւս կողմից էլ, մարդիկ տրիբեմների մէջ լցուելով, ոչ մի օդուտ չէին բերում, իսկ նա նրանցով կարող էր մեծացնել իւր փոքրաթիւ զօրքը: Թէև, կարծում է, որ Աղեքսանդրն այդ հանդամանքում գործում էր բոլորովին տրամաբանօրէն, բայց անկարելի գործում էր բոլորովին որ նա մեծ սխալ էր գործում, որով չը խոստովանել որ նա մեծ սխալ էր գործում:

Հետեւ նա շուտով ստիպուած եղաւ իւր ոչնչացրած նաև ւատորմիզը վերականգնել։ ՅՅ4 թուի ձմեռնամտին մաս կեդոնացիք պէտք է Եղէեան ծովի տախական ափում վերջին ամրութիւնը, Հալիկարնան էլ տիրապետէին։ Կարիայի այդ հին մայրաքաղաքը պարսիկների վերջին ապաստանարանն էր կազմում, և Մեմնոնը, պարսից զօրքի մնացորդներն այդտեղ հաւաքեց աշխարհակալին մի վըճռական ընդիմութիւն ցոյց տալու։ Հալիկարնան մի նշանաւոր վաճառաշահ քաղաք էր, և անուանի անառիկութեամբ։ Գէպի այդ քաղաքը տանող ճանապարհին Աղէքսանդրը կարիայի նախկին թագաւորներից մէկի այշրուն հանդիպեց, որը իւր գործակցութիւնն առաջարկեց նրան, իրան գահազուրկ անող ներկայ թագաւորի հետ ունեցած կուսում։ Հալիկարնայի պաշարումը երկար շարունակուեց և պաշարուածները պաշարողների վերայ համարձակ գուրս նետուելով մեծ վնաս էին հասցնուած նրանց վերջապէս, բարանները պարսպի մէջ այնպիսի խրամատ բաց արին, որ քաղաքն էլ դիմանալ չը կարողացաւ, և Մեմնոնը զօրքի հետ միջնաբերդը փակուելով, քաղաքը մատնեց կրտի։ Այդ իմանալով Աղէքսանդրը իսկոյն քաղաքն առաւ, հրդեհը հանդցրեց և թէւ կոտարածը սաստիկ էր, այնուամենայնիւ, խաղաղ բնակիչներին յայտարարուեց, որ նրանք կարող էին իրանց կեանքը փրկել՝ իրանց տանը հանդիսա մնալով։

Հետեւեալ օրը մակեդոնացիք թաղեցին իրանց սպանուածներին, քաղաքում կենդանի մնացած բնակիչներին հարեւն գիւղերը հեռացրին և աշխարհի երեսից ջնջեցին Հալիկարնան։ Ապա Ալա թագուհին կարիայի վոխտրբայ նշանակուեց և մակեդոնացաց նոր նահանգի պաշտպանութեան համար 3000 հետեակ և 200 ձիաւոր զօրք թողնուեց, որովհետեւ Մեմնոնը գտնուում էր միջնաբերդում, որի վերայ բոլորովին անօգուտ էր յարձակուելու։ Այդպիսով, Փռքը Ասիայի արևմտեան բոլոր ափը պարսից տիրապետութիւնից աղատելուց յետոյ Աղէքս-

ոանդրը վերահասս ձմրան ամբողջ ընթացքում վճռեց զօրքին հանգիստ տալ։ Իւր զինուորներից շատերին, առաւելապէս երիտասարդներին, որոնք նոր էին ամուսնացել, արձակելով՝ Մակեդոնիա ուղարկեց զօրտպետներից մէկի, կողմէ Սակեդութեամբ, որին և յանձնուեց նոր զօրք Պաղսմէսուի հակողութեամբ, որին և յանձնուեց նոր զօրք ժողովել և Փռիգիսայի Գորդիումը քաղաքում իւր հետ ժողովել և Փռիգիսայի Գորդիումը իւր հետ միանալ։ Արքիանի ասելով, Աղէքսանդրն այդ վարժունքով Ակեդոնիայում աւելի ժողովրդականութիւն ստացաւ, Մակեդոնիայում աւելի ժողովրդականութիւն ստացաւ, քան առաջ։ Մի կողմից հայրենիք վերադարձած զինուոր ները նրա յազգիութիւնների վառք էին տարածում, իսկ միւս կողմից նրա քաջութիւններին մասնակից լինելու միւս կողմից նրա քաջութիւններին մասնակից լինելու միւս կողմից նրա քաջութիւններին մէջ։ Այդցանկութիւնն էին զարթեցնում երիտասարդների մէջ։ Այդժամանակ նա Ալեանդրին էլ Պելոպոնէս ուղարկեց, յուշամանակ նոր վարձկաններ ձեռք բերելու համար, որ վերջինս կատարեց շատ գանդաղութեամբ, որովհետեւ միայն 14 ամիս անցյած հասցրեց նա Սիկոնում 4000 զինուոր։

Մակեդոնական զօրքի մօտ կէսը, Պարմենէսնի առաջնորդութեամբ, շարժուեց Փռիւգիս ձմերելու։ Իսկ ինքն, Աղէքսանդրը, ըստ ցանկանալով նոյն իսկ ձմեռն էլ ժամանակա լինել, ափի երկարութեամբ գէպի արեելը ուղղուելով գնաց Լիկիա և Պամփիւլիս։ Լիկիայի ժողովուրդը Փռքը Ասիայի տեղական բնակիչներին էին պատուածում, բայց կամաց—կամաց յունական ազգեցութեան ենթարկուած։ Իսկ Պամփիւլիայի բնակիչները յոյն ծագումն ունեին։ Լիկիայի սահմանի վերայ եղած քաղաքը գիւղերեց, բայց յարձակմամբ շուտով էլ նուածեց և այնուհետեւ ամբողջ երկիրը մակեդոնացոց հպատակուեց։

Պամփիւլիս տեղափոխուելիս, Աղէքսանդրը ստիպուեց անցնել Կալիմաքոս խիստ զառիվայր լեռնավն, որի ստորոտում ալեկոսւում էր ծովը։ Սովորաբար կողմնակի ճանապարհներով էին անցնում այդ լեռը, բայց Մակեդոնիայի հերթով վճռեց բնութեանը յադթել։ Նա իւր բանակը կողմնակի ճանապարհով ուղարկեց, իսկ ինքը ծովի ափով գնաց մի քանի թիկնապահներով, որ ամեն քայ-

լավովում սաստիկ վտանգի էր ենթարկում։ Դժուարութիւններին յազմելով, հասու օրհասական ճանապարհի ծայրին, այդ ճանապարհին նա մի քանի անգամ ծածկուել էր ջրի մէջ մինչև աչքերը։ Ստրաբոնը այսպէս է պատմում, բայց Արքիանը հաւատացնում է, որ Աղեքսանդրը կենդանի մնալ չէր կարող՝ եթէ հողմը ուղղութիւնը փոխէր, իսկ նախաթենէոը վսեմ ոճով պատմում է, թէ ծովը յետ գնաց և նրա մեծութեան առաջ խոնարհուեց։ Դրանով չը վերջացան Աղեքսանդրի ճանապարհի դժուարութիւնները։ Նա ստիպուած էր Պիսիդիայի լեռնային կրծերի միջով դէնքը ձեռին իւր համար ճանապարհ բաց անել, ուր զինուորական ցեղերը նրան յամառ ընդդիմութիւն էին ցոյց տալիս։ Բայց նա յազմեց բոլոր դժուարութիւններին և վերջապէս հասու Գորդիում քաղաքը։ Այդ տեղ նա տեսակցութիւն էր նշանակել Պարմենէոնի հետ, յիրաւի, վերջինս, մակեդոնական 3000 հետևակներից, և 3000 էլ հեծելազօրից, 200 թեսողացի ձիւորներից և 150 յոյն ձիւոր վարձկաններից կազմուած թարմ ուժերով սպասում էր նրան։ Այդ քաղաքում Աղեքսանդրը սրով կարեց նշանաւոր Գորդեան հանգոյցը։ Ահաւասիկ, ինչպէս է պատմում Արքիանը այդ նշանաւոր պատմութիւնը։

Հին Փոխէտիայում ապրում էր Գորդիոս անունով մի խեղճ գիւղացի։ Նա մշակում էր հողի մի փոքր կտոր և երկու զոյտ եղ ուներ։ Մէկ զոյտով նա հերկում էր, իսկ միւս զոյտը սայլ լծում։ Պատահմամբ մի անգամ երբ հերկում էր նա երկիրը յանկարծ տեսաւ, որ արծիւը իջաւ եզների լծի վերայ։ Քանի Գորդիոսը եզները չէր արձակել, թուշունը մնաց այնտեղ։ Յանկանալով այդ նշանի միտքն իմանալ, նա ուղեսրուեց հարեան գիւղը, ուր բոլոր բնակիչները գուշակութեան շնորհով էին օժտուած։ Ամենից առաջ Գորդիոսը հանդիպեց մի նորահաս օրիորդի և պատմեց նրան բանի էութիւնը։ Օրիորդը խորհուրդ տուեց Գորդիոսին այնտեղ, ուր երեաց խորհրդաւոր

թոշներ, զո՞ւ մատուցանել Զեսին։ Նա կատարեց գեռաւոտի գուշակուհու պատուէրը և յետոյ պատկուեց նրա հետ։ Նրանք Միկաս անունով մի որդի ունեցան։ Նատարիներ յետոյ երբ փոխէտացիք ներքին ծանր կռիւ էին վարում։ պատգամախոսը յայտնեց նրանց, որ Փոխէտացիների թշուառութիւնները այն ժամանակ կը վերջանան, երբ սայլը նրանց համար թագաւոր կը բերէ։ Այդ միջուն, Միկասն իւր ծնողների հետ սայլով ժողովրդական տանը մօտեցաւ։ Ժողովուրդն իսկոյն Միկասին թագաւոր ընտրեց, իսկ վերջինս գագարեցնելով ներքին կռիւը, սայլը լծած եղներով Զեսին նուիրեց, չնորհակալ լինելով, որ նա իւր հօրն արծիւ էր ուղարկել։ Դրանից յետոյ մնաց մի աւանդութիւն, որ ով որ արձակի Գորդիոսի սայլին լուծը կապող հանգոյցը, նա կը տիրի ամբողջ Ասիային։ Աղեքսանդրը ամեն կողմից գիտեց հանգոյցը և, տեսնելով, որ նրան չէ կարելի քակել, սրով կտրեց, որից յետոյ հանգիստ կերպով անջատեց լուծը սայլից։ Այդ տեսարանին բոլոր ներկայ գտնուողները համոզուեցին, որ պատգամախոսի Գորդեան հանգոյցի մասին արտծ գուշակութիւնը կատարուեց։

Մինչ այս մինչ այն, պարսից Մեմոն գօրապետը մտածեց Դարեհի նաւատորմի առաւելութիւններովն օգտուել, յատկապէս այն ժամանակ, երբ Աղեքսանդրը արձակեց մակեդոնական ծովային զօշքը, որպէս զի վճռական հարուած տայ պատահի հերոսին։ Նրա ծրագիրն այն էր, որ Աղեքսանդրին եւրոպայից անջատէ և Փոքր Ասիայում եղած փոքր գնդի հետ միասին բոլորովին մեկուսացնէ։ Ուստի Մեմոնն իւր ահագին նաւատորմով ամենից առաջ գրաւեց Քէսս կղզին, յետոյ Մելիտինէ գլխաւոր քաղաքը պաշարեց ու Յիկլանդեան կղզիներից մի քանիսի հետ էլ գաշն կապեց։ Դրա հետ միասին պարսկական դրամները առատութեամբ թափւում էին յոյների գրպանը, և ամենքն էլ արդէն սպասում էին, որ պարսիկների օդնութեամբ Սպարտան ամբողջ Յունաստանը մակեդոնական

գերիշխանութեան դէմ կը զինի։ Յայց իւր յաջողութիւնների ժամանակ յանկարծ մեռաւ Մեմնոնը, և նրա մահով Դարեհը վերջ տուեց նրա ծրագրի հեռաւոր իրադարձման։

Զարմանալի չէ, որ Աղեքսանդրը Գորդիումում լսելով Մեմնոնի ծովային արշաւանքի մասին՝ ափսոսաց որ ոչընչացրել էր իւր նաւատորմը, և հրամայեց Հելլեսպոնտոսում մի ժամանակաւոր ծովային գումարդակ կազմել վաճառականական նաւերը զինուորականի վերածելով, և նոյն իսկ, իւր զօրապետ Պրոտէրին Պելոպոնէս և էվբեկեան կղզին ուղարկեց, Յունաստանի ափերը պաշտպանելու համար նաւեր ձեռք բերելու նպատակով։ Յայց 333 թուին գարունը դեռ նոր սկսած՝ Գորդիումը թողնելիու Մեմնոնի մահուան յանկարծական լուրը ստացաւ և բուլորվին հանգարտեց։ Նա այլ ևս վախ չունէր, թէ նրան եւրոպայից կը կտրէին, և համարձակութեամբ թիկունքը դէպի եւրապա գարձնելով Մակեդոնիայի հերոսը վճռականապէս աւզդեց իւր քայլերը դէպի Ասիայի խորքը։

Ե.

Իսսի մօսի յաղթութիւնը.

Աղեքսանդրի Ասիական արշաւանքների երկրորդ տարին բոլորվին նոր բնաւորութիւն է կրում։ Առաջին տարին նա ամբողջ Փոքր Ասիան նուածեց, իւր թագաւորութիւնը մեծացրեց 250 հազար մղոնով և յաղթութիւն տարաւ Գրանիկի մօտ։ Այդ ամբողջ ժամանակը նա գործում էր Յունաստանի անունով և ինչպէս յօյների պարագլուխ, թէ և վերջիններս շատ սառնասրտութեամբ էին վերաբերում դէպի նրա ձեռնարկութիւնները։ Նա առաջուայ նման մակեդոնացի էր, իրագործում էր իւր հայր Փիլիպոպոսի ծրագիրը, և տոգորուած էր նախնական

գաղափարովը այն նահապետական ժողովրդի, որին գլուխ էր կանգնած։ Յայց Ասիայում անցկացրած երկրորդ տարին, որ նշանաւոր դարձաւ իսսի մօտի յաղթութեամբ, նրա մէջ արմատական փոփոխութիւն առաջացրեց։ Տեսնելով իւր ձեռքը աւար մնացած պարսից բանակի հոյակապութիւննի ու շքեղութիւնը, նա հասկացաւ, որ այն լեռնային վայրերից զատ, որտեղ նա ծնուել էր, կար և մի ուրիշ նոր աշխարհ։ Այդ տեղ նրա կեանքում մի յեղափոխութիւն կատարուեց և ծնուեց մի նոր Աղեքսանդր, որը հնի հետ կարծ չունէր։ Ի հարկէ, այդ փոփոխութիւնը յանոչ մի կապ չունէր, այդ փոփոխութիւնը յանոչ չէր նկատում։ Յայց հետեւելով Աղեքսանդրի ամբողջ կեանքին և նրա գործունեցութեան առաջնորդող դադարիարները տեսնելով՝ չէ կարելի ըստ նկատել, որ նրա Ասիայում եղած արշաւանքների երկրորդ տարին նոր ուղղութիւն է կրում։ Հենց այդ ժամանակ Յունաստանը յամառելով դէպի նրա քաջագործութիւնները սառնասրտութեամբ մէջ, վերջնականապէս հիասթափեցրեց դէպատութեամբ հերոսին և ստիպեց նրան իրանից ընդ միշտ երես առաջանած գործէին Աղեքսանդրի հետ և Յունաստանը ընդ նրան իրբեւ իւր հարազատ որդի, ի հարկէ, մարդկութեան պատմութիւնը ուրիշ գոյն կը ստանար, և նրա ստեղծած համաշխարհային կայսերութիւնն աւելի յունական բնաւորութիւն կունենար։ Յայց ինչ ուզում է լինի, չէ կարելի զարմանալ, որ իւր կեանքի վերջին տարիններին Աղեքսանդրը կէս արեւելեան մարդ դարձաւ, սկսեց արեւելեան ընդունած սովորութիւններին համակերպուել և դէպի Յունաստան վերադառնալու ոչ մի ցանկութիւն երբէք չարտայայտեց։

Մեմնոնի մահը, և դրան իբրև անմիջական հետեւանք՝ պարսիկների հրամարուիլը Աղեքսանդրի դէմ յունական ընդհանուր ապատամբութիւն առաջացնելուց վորիցին Դարեհի ամբողջ ծրագիրը։ Նա այլ ևս չէր կարող

յոյս գնել ոչ իւր նաւատորմի և ոչ յոյների դաւաճանուշ
թեան վերայ, այլ ցամաքի վերայ պէտք է պաշտպանէր
իւր թագաւորութիւնը համարձակ աշխարհակալի դէմ:
Նա զինուորական խորհուրդ կազմեց և առաջարկեց այս
հարցը. «Անհրաժեշտ է որ ինքն, թագաւորը, իւր վերայ
առնի զօրքի հրամանատարութիւնը: Խորհրդականների
մեծամասնութիւնը ցանկացաւ, որ Դարեհը ահագին բա-
նակ կազմի, անձամբ բանակի գլուխն անցնի և միանգամայն
ոչնչացնի յանդուդն աշխարհակալին: Զինուորական խոր-
հրդում դրա հակառակ մաքով մի ձայն միայն տրուեց:
Այդ եփա կղղեցի յոյն ծերունի Խարիդեմի ձայնն էր:
Այդ ծերունին իւր ժամանակի ամենափորձուած զօրու-
պետն էր: Նա 30 տաշի ծառայել էր որպէս զօրագետ և
քաղաքադէտ մերթ պարսկական սատրապների մօտ, մերթ
թրակիական իշխանների մօտ, մերթ Աթէնքում և մերթ
Փիլիպոս մակեդոնացու մօտ: Վերջինիս մահից յետոյ
նա սկսեց Աթէնքը նրա որդու դէմ գրգռել, իսկ երբ
Աղեքոանդրին յաջողուեց հանդարտեցնել ապստամբած
Յունաստանը, Խարիդեմը Պարսկաստան փախաւ ու Դա-
րեհի արքունիքում գլուխաւոր զինուորական խորհրդականը
դարձաւ: Նա պատերազմական գործերի մէջ տեղի էր
փորձուած քան պարսից պալատականները. ուստի և
արտայայտեց նրանց կարծիքին բոլորովին հակառակ հա-
յեացը: Նրա ասելով, Դարեհը ըս պէտք է իւր թագաւո-
րութեան բաղդը հրապարակի վերայ դնի, բայց այդպէս
կը լինէր անպատճառ, եթէ նա ինքն անձամբ առաջնոր-
դէր իւր զօրքին: Բաւական էր 100 հազար մարդուց բաղ-
կացած մի բանակ կազմակերպել, որի երրորդը լինէին
յոյն վարձկաններ, նշանակուեր իրեւ գլխաւոր հրամա-
նատար մի հմուտ զօրագետ և յանձնարարէին նրան ըս
յարձակուել մակեդոնացոց վերայ, այլ ընդհակառակն,
հրապուրել նրանց դէպի պարսից ահագին կայսերութեան
խորհրդը:

Աղղբում Դարեհը կամենում էր ընդունել այդ խոր-

հուրդը, բայց պարսիկ պալատականները յամառութեամբ
նրան հակառակեցին, կասկածելով, թէ Խարիդեմը ինքն է
ցանկանում հրամանատար լինել: Նրանք սկսեցին դաւա-
ճանութեան մէջ մեղադրել Խարիդեմին, իսկ ծերունի
յոյնը զայրացաւ և սկսեց ուղղակի յանդիմանել նրանց,
վախկուանուանելով, և ապացուցանել, որ նրանք առանց
յոյն վարձկանների օգնութեան մակեդոնացոց ընդդիմա-
նալ չեն կարողանայ: Այդ ժամանակ Դարեհը կատա-
զած, հրամայեց սպանել Խարիդեմին, որ աղազակում էր
«թագաւորը կը զջայ և շատ շուտ: Իմ մահուան վրէժը
շատ չի ուշանայ: Պարսից թագաւորութիւնը կը կործա-
նուի»: Ծերունի յոյնը սպանուեց, բայց Դարեհը, յիրաւի,
շուտով դառնապէս զջայ, որ չէր հետեւել նրա խոր-
հրդին:

Իւր պալատականների կարծիքին համակերպուելով՝
Դարեհը վճռեց անձամբ առաջնորդել բանակին, որն
արագութեամբ հաւաքուեց Բարելոնում: Նա կազմուած
էր 100,000 ձիաւոր և 400,000 հետեւակ զինուորներից:
Այդ տեղ կային և՛ պարսիկներ, և՛ մեղացիք և՛ հայեր,
և՛ բարելոցիք ու հիւսիսային երկրների ընակիչներ:
Դրանք ամենքը իշխանների, սատրապների և յայտնի պա-
լատականների հակողութեան տակ մի ահագին ոյժ էին
կազմում: Դարեհը իւր հետ արշաւանքի տարաւ իր ամ-
բողջ արքունիքը—թագուհուն, գուստավներին և կանանցը:
Նա շրջապատեց իրան պարսից կայսերութեան ամբողջ
մեծութեամբ, փայլով և շքեղութեամբ, ապացուցանելու
համար, որ ոչ միայն զօրքը, այլ ամբողջ կայսերութիւնն
է գնում յանդուգն աշխարհակալի դէմ:

Լուրը, թէ Դարեհ հզօր բանակի գլուխին անցած
դուրս եկաւ բանակավայրից, հասաւ Աղեքոսանդրին Դոր-
դիումից 60 մլոն հեռու, Անկիւրիայում, ուր ճանապարհն
գերի մէջ տեղում, Դելտի պտղաբեր երկրի և անապատի սահմանի վերայ: Մեմֆիս մտնելիս Աղէքսանդրի առաջին գործն եղաւ երկրպագել և զոհ մատուցանել Ապիս սրբազն եղին, բոլոր աշխարհի արարիչ Պտա չաստուծոյ այդ ներկայացուցին: Քրմերից ընտրուած այդ կենդանի եղին ամեն տեսակ պատիւներ էին տալիս, իսկ մահից յետոյ թաղում հոյակապ դամբարաններում, որոնց աւերակների մէջ գտնուել է Ապիսի զանազան ներկայացուցիչների մինչև 3000 արձան: Ոչ մի բան Եգիպտական ժողովրդի համակրութիւնը չէր կարող այնպէս գէպի Աղէքսանդրը գարձնել, ինչպէս այդ երկրպագութիւնն էր. նրա վարմունքը բոլորովին հակագիրն էր պարսից որբազիղծ վարմունքին. ինչպէս, օրինակ. Կամբիւսը, իւր սեպահական ձեռքով վիրաւորեց սրբազան եղին. իսկ Դարեհ 0հ-ը նրան սպանել տուեց: «Դէպի Եգիպտական որբութիւնները պարսից այդ սրբապիղծ օրինակներն աչքի առաջ ունենալով ասում է Դէոդորը. «Եգիպտացիք ուրախութեամբ ընդունեցին իրանց հետ բոլորովին այլ կերպ վարող մակեդոնացիներին»:

Այդ գէպքում ևս Աղէքսանդրը հաւատարիմ մնաց իրան: Նա ամեն տեղ գէպի տեղական կրօնները յարգանք էր արտայայտում: Եւ այդպէս վարում էր ոչ մի այն քաղաքականութիւնից գրդուած, այլ իւր մայր Ոլիմպիայից ժառանգութիւն ստացած հոգեկան միստիցիզմի աղդեցութեան տակ: Հաւատի գործերում նա ոչ աղնոսակեան էր, ոչ էկլեկտիկեան: Մի որ և է գաւանութեան տաճար մտնելիս, նա միշտ ընկնում էր մի տեսակ կրօնական զգացմունքների աղդեցութեան տակ:

Մեմֆիսի ձմերային բնակարաններում թողնելով իւր 20,000 մարդուց բաղկացած զօրքը, Աղէքսանդրը մէ փոքրիկ գնդով, նորից ցած իջաւ նեղոսի ընթացքով գէպի ծովը և նրա ամենաարեւեան բաղուկներից մէկի բերանում Աղէքսանդրիա անունով մի նոր քաղաք հիմնեց: Նրա ընտրած տեղը, ծովի և Մերիտեան լծի միջև

հողի նեղ շերտն էր. Մերիտեան լիճը այն ժամանակ նառագնաց էր, իսկ այժմ ճահճի նման մի բան է: Մինչեւ ժամանակ Միջերկրական ծովի եգիպտական ափին մի յարմար նաւահանդիստ չը կար, իսկ այստեղ, մի կողմից՝ Մերիտեան լիճը գեղեցիկ ներքին նաւահանդիստ էր ներկայացնում, իսկ միւս կողմից՝ դէպի ծովս էին դուրս դալիս երկու հիմնալի նաւակայարաններ: Այդպիսով Միջերկրական ծովի վերայ չէր կարելի դրանից ել աւելի լաւ կենտրոն դտնել եգիպտոսի, Արաբիայի և Հնդկաստանի վաճառականութեան համար: Որոշելով մի համաշխարհային նաւահանդիստ հիմնել այդտեղ՝ Աղեքսանդրին իսկոյն յատակադիծ կազմեց նոր քաղաքի համար նշանակելով փողոցները, հրապարակները, վաճառատունները, տաճարները, հասարակական հիմնարկութիւններն ու քաղաքային պարիսպները:

Ստրաբոնի խօսքերով, այդ ծրագրի հիմքը կազմում էին երկու, միմեանց ուղիղ անկիւնով խաչաձև կտրող, փողոցներ, որոնցից եւրաքանչիւրը հարիւր ոտ լայնութիւն ունէր, իսկ կողքերին՝ սիւներ: Միւս փողոցները դնում էին զուգահեռաբար և ուղիղ քառանկիւններով ծածկում երեք մղոն երկարութեամբ և մի մղոն լայնութեամբ քաղաքի նստուածքը 1867 թուին Մահմատ բէյի պեղումները երևան հանեցին, որ յիրաւի, հին Աղեքսանդրեան շինուել է Ստրաբոնի նկարագրած յատակադիծ համատ: Աղեքսանդրը չը բաւականացաւ միայն յատակադիսով, այլ ինքը տեղն ու տեղը ցոյց էր տալիս նոր քաղաքի գծագրութիւնը: Ահա թէ Պլուտարքոսը ինչպէս է պատմում սկզբնական այս սահմանաչափութիւնը: «Որովհետեւ, մի կողմից՝ ածուխ չը կար, իսկ միւս կողմից՝ հողը սեային էր, այդ պատճառով էլ քաղաքի փողոց ձևացնող գծերը նշանակում էին ալիւրով լի նեղ ակոսներով»: Բայց մինչ Աղեքսանդրը հրճում էր այդ քաղդաւոր հնարքով, անըսպասելի կերպով փաթափուեցին բաղմաթիւ թուշուններ ու իսկոյն ալիւրը կացելով վեր քաղեցին: Այդ հանդա-

մանկը Աղեքսանդրին շատ անհանգստացրեց և վատ նշան համարուեց. իսկ նա այն ժամանակ միայն հանդարտեց, երբ հաւահմայքը լաւ մտքով բացատրեցին այդ նշանը նրանց խօսքերով, ծրագրած քաղաքը հարուստ էր լինելու իւր հացի պաշարով և շատ աղքերի էր կերակրելու:

Աղեքսանդրիայի շինութեան գործը յանձնուեց ճարտարապետ Դենոկրատին, որը նշանաւոր էր իւր գեղարվեստական մեծ ծրագրներով: Այսպէս, օրինակ, նա յետոյ առաջարկեց Աթոն լեռից ձևակերպել Աղեքսանդրիա արձան, որը մի ձեռքի վերայ 10,000 բնակիչներով մի քաղաք պահելիս լինէր, իսկ միւս ձեռքի վերայ—դէպի ծովը մի հսկայական ջրվէժ հոսեցնէր: Թէ նեղոսի բերանում քաղաք հիմնելը Աղեքսանդրի կողմից խելացի և բաղդաւոր միտք էր, ցոյց է տուել Աղեքսանդրիայի պատմութիւնը: Աղեքսանդրեան մի ժամանակ արևմտեան աշխարհի ամենամեծ քաղաքն էր. մի միլիոն բնակիչ ունէր և ծառայում էր իրեւ կենտրոն այն ժամանակի քաղաքակրթութեան և վաճառականութեան: Անկասկած, իւր մեծութեամբ նա, Աղեքսանդրի եգիպտական իշխանութեանը յաջորդող, Պլուտարքոսը էր պարտական, բայց, այնուամենայնիւ, Աղեքսանդրն էր այդ քաղաքի հիմնարկութեան սկզբնապատճառը:

Նեղոսի բերանից, Միջերկրական ծովի ափով, Աղեքսանդրը գէպի արևմուտք գնաց, բայց 200 մղոն անցնելով, կանգ առաւ: Այդտեղ նրան գիմաւորեց մի գեսպանութիւն յունական կիրենա քաղաքից, որ 400 մղոն հեռու, նոյն ափին էր գտնուում: Դեսպանութիւնը խընդուում էր որ պատմանի հերոսը իւր հովանաւորութեան տակ վերցնի այդ գաղթականութիւնը, և նրան թանկագին ընծաներ առաջարկեց: Կիրենեան գաղթականութիւնը Աղեքսանդրի Աքրիեկեան աշխարհակալութեան արևմտեան սահմանն եղաւ, որը այնուհետեւ անսպասելի կերպով ուղղուեց գէպի անսպատի կողմը, և ուղեսրուեց Ամսնի նշանաւոր տաճարին երկրպագութիւն անելու: Այդ-

մի շատ յանդուդն և վտանգաւոր արշաւանք էր, որովհետեւ անապատում չէր գտնվում ճանապարհի ոչ մի նշան կամ շաւզի հետք։ Ուստի, զարմանալի չէ, որ այդուղեութեան մասին կազմուել են զանազան լեզենադաներ։ օրինակ, Կալիսթինէսը հաւատացնում է, որ երկու ագռաւ թռչում էին միշտ մակեդոնական դնդի առաջից, և ոչ միայն ճանապարհ էին ցոյց տալիս, այլ և իրանց ձայներով հաւաքում—յետամնաց զինուորներին։ Իսկ միւս հին հեղինակն այդ գերը երկու օձերի է վերագրում։

Հասնելով պատգամախօսին, որ բնակում էր Սիրիի օվաղիսում, ուր արմաւենու անտառակի մէջ աղբիւր էր բղխում, Աղեքսանդրը ոչ միայն սրբավայրին երկրպագեց, այլ և պատգամախօսին մի քանի հարցեր տուեց։ Ամենից առաջ նա հարցրեց. Փիլիպպոսի բոլոր սպանողները պատժուել են։ Պատգամախօսը բաւարար պատասխան տուեց, ինչպէս այդ, այնպէս և երկրորդ հարցին, որ էր. պատանի աշխարհակալը լինելու է հրամայող ամբողջ երկին։ Մի քանիսը պատմում են, որպէս թէ պատգամախօսը, ցանկանալով Աղեքսանդրին դիւր դա, նրան յունարէն «իմ որդի» է անուանել, բայց վերջին վանկի շեշտառութեան մէջ սխալուել է, փօխանակ իմ որդի տօնելու՝ ասել է— Զեսի որդի։ Աղեքսանդրը, ըստ երևոյթին, շատ է ուրախացել այդ սխալի վերայ, և շրջապատողները սկսել են լուր տարածել, թէ պատգամախօսը նրան Զեսի որդի է անուանել։

Քրմի ասածը գուցէ մեծ աղդեցութիւն գործէր խորհրդաւորութեան տրամադրուած պատանու վերայ, բայց չէ կարելի ենթադրել, թէ նա իւր հանդարտ և լուրջ ժամանակը հաւատար իւր աստուածային ծագմանը։ Ճիշտ է, նա թոյլ էր տալիս, և յետոյ, նոյն իսկ պահանջում էր, որ պարսիկները իրան երկրպագեն ինչպէս աստուածութեան, բայց պարսից արքունիքի էտիկէտն էր այդպէս։ Աղայն այն ենթադրութիւնը, թէ

Աղեքսանդրը իւր անձի համար աստուածութեան պաշտամունք է հաստատել՝ ոչ մի հիմք չունի։ Աղեքսանդրի կենդանութեան ժամանակ նրա պատկերը երբէք չը փոխարինեց դրամների վերայ գտնուած աստուածների աւանդական պատկերին, և միայն մահից յետոյ նրա պատկերը, որպէս մակեդոնական կայսերութեան բարի ոգու ու նրա միութիւն այտայայտողի—դրոշմեցին դրամների վերայ։ Թէ Աղեքսանդրի աստուածացուցումն, որ գոյութիւն ունէր շատ տեղերում և շարունակում էր մինչև հռոմէական կայսերութեան շրջանը, չըստեղծուեց նրա օրով, ապացուցում է այն հանգամանքով, որ այդ պաշտամունքը, կուլտը, նոյն իսկ Աղեքսանդրիայում հիմնուեց, նրա յաջորդներից մէկի, Պալոմէոս Բ.-ի ժամանակ, Աղեքսանդրի մահից յիսուն տարի յետոյ։ Ուստի բոլորովին անհիմն և նոյն իսկ անհեթեթ է, Աղեքսանդրի վերայ ձգել, թէ նա իւր ստեղծած կայսերութեան հիմն հաստատել էր իւր անձի աստուածայն ծագման վարդապետութիւնը։

Ամոնի տաճարին մեծ ընծաներ մատուցանելով, Աղեքսանդրը Մեմֆիս վերադարձաւ և Եգիպտասում անցկացրած իւր վերջին ամիսը նա այդ երկրի կաղմակերպութեան նուիրեց։

331 թուի գարունը բացուելուն պէս Աղեքսանդրը իւր զօրքով նորից Փիւնիկէ վերադարձաւ, և մի քանի օրով կանգ առաւ Տիւրոսում՝ աթենական դեսպանութիւնը ընդունելու համար։ Նրանք «Պարալոս» սրբազնա տրիբեմի վերայ ներկայացան. ողջունեցին Աղեքսանդրին որպէս արևելքի յաղթողի, և հանդիսաւոր կերպով արտայայտեցին իրանց քաղաքի հաւատարմութիւնը դէպի նրա անձը։ Դրա հետ միասին նրանք աղաչեցին, որ նա յարդի իրանց ինդիրը, հայրենիք վերադարձնի այն յոյն գերիներին, որոնք պարսիկների մօտ վարձկան էին. և Գրանիկի մօտի կուում գերի էին բռնուել։ Այս անգամ Աղեքսանդրը գթաց նրանց վերայ և յարդեց աթենացոց.

այս հին խնդիրը՝ Գեսպանների պատուին նա մարմնա-
մարդական և երաժշտական տօն կարգեց, Յունական
զանազան քաղաքներից բերուեցին դերասաններ և եր-
գիչներ, Կիպրոսից երաժշտախումբը, Խորը՝ Հանդիսաւոր
զո՞ւ մատուցին տեղական Հերքուլէս աստուծուն. և թէն
այդ մի յունական տօն էր, բայց այդ յունական խաղերով
թաղում էին ին Յունաստանը:

Այստեղ յարմար է մի քանի խօսք ասել վերջին
ժամանակներս Աղէքսանդրի դէպի յոյներն ունեցած յա-
րաբերութեան մասին: Եղիպտոսում Աղէքսանդրը մի ու-
րախ լուր էր ստացել, թէ պարսից բանակը վերջնակա-
նապէս ցրիւ է եկել և մակեդոնացոց դէմ ապստամբած
Տենեղոս, Լեսրոս, Քէսոս ու Կոս կղզիները նրանց իշխա-
նութեան տակ են մտել: Ամբողջ Եղէեան ծովը, շրջակայ
երկլներով գտնւում էր այժմ պատանի հերոսի ձեռքում: Մի
միայն Սպարտան էր կամակորութեամբ հակառակում:
Դրանից չորս տարի առաջ Աղէքսանդրը առաջարկել էր
ճանաչել իրան յունական տէրութիւնների պարագլուխ,
Սպարտան պատասխաննել էր. «Մեր սովորութիւններին
հակառակ է օտարի առաջնորդութեան տակ մտնել. մենք
ինքներս ենք միշտ առաջնորդում»: Այդ ժամանակներից
սկսած Սպարտան աշխատում էր ապստամբութիւն տա-
րածելու համար ամենափոքր հանդամանքներից օգտուել:
Նրա գեսպանները մնացին միշտ Դարեհի արքունիքում,
և իսակ կուտի լուրը հասնելիս—սպարտացոց Ագիս թա-
գաւորը բանագնացութեան մէջ էր պարսից ծովապետի
հետ: Յետոյ մինչ Աղէքսանդրը Ճիւրոսն էր պաշարել,
սպարտացիք Կրետէն իրանց գործունէութեան կենդրոն
գարձրին: Պարտկաստանից փախած յոյն վարձկանների
օգնութեամբ Ագիսը մի փոքրիկ բանակ կազմակերպեց՝
և Պելոպոնէսում ապստամբութեան դրոշակ բարձրացրեց,
հէնց այն ժամանակ՝ երբ մակեդոնական հերոսը Եղիպ-
տոսումն էր գտնւում: Բայց այդ լուրը Աղէքսանդրի
ականջն հասաւ միայն Միջագետքի խորքում, և նա ասաց.

«մինչ մենք Գարեհին ենք յաղթում, Արկադիայում, ըստ
երեւոյթին, մինային պատերազմ է լինում»:

Յունաստանում տեղի ունեցածների վերաբերմամբ
նրա սառնարտութիւնն ու հանդստութիւնը բոլորովին
հիմնաւոր էր: Սկզբում մակեդոնիայի Անտիպատրոս կա-
ռավարիչը Աքայիայի և Սրկադիայի ապստամբութեան բոցը
չափազացաւ հանգնել, որովհետեւ նա զբաղուած էր
կալողացաւ հանգնել, որովհետեւ նա զբաղուած էր
իլիսիացիների ճնշումով, ուստի և յոյներին յաջողուեց
նոյն իսկ ոչնչացնել իրանց դէմ ուղարկուած մակեդոնական
փոքրիկ գունդը: Բայց 331 թուի հոկտեմբերին Անտի-
պատրոսն եկաւ աղատելու սպարտացիների պաշարած
Մելապօլիս քաղաքը, որը հաւատարիմ էր մնացել մա-
կեդոնացիներին, և այդ քաղաքի պարսպների առաջ գըլ-
խովին ջարգեց յոյներին: Ագիս թագաւորը և նրա 5000
զինուորները սպանուեցին և Սպարտացին մի այնպիսի
հարուած հասաւ, որից նա արդէն այլ ևս չուղղուեց:

Բայց գառնանք դէպի Աղէքսանդրը Յայտնի չէ իս-
կապէս, թէ նա երբ շարժուեց Ճիւրոսից իւր բանակով.
Բայց պէտք է որ այդ կատարուած լինի 331 թուի յունիս
բայց պէտք է որ այդ կատարուած լինի 331 թուի յունիսի
վերջեւ-
կամ յուլիս ամիսներում: որովհետեւ նա յունիսի վերջեւ-
կամ յուլիս ամիսներում: Ճիւրոսից 350 մզոն դէպի հիւսիս—արեւելք ընկած,
բում, Ճիւրոսից 350 մզոն դէպի հիւսիս—արեւելք ընկած,
այժմեան բակլան, իսկ այն ժամանակուայ Թափսակի մօտ,
Եփրատն անցաւ: Առաջուց ճարտարապետների մի գունդ-
էր ուղարկել գետի վերայ կամուրջ շնելու, և երբ Աղէք-
սանդրը անձամբ երեւաց Թափսակում, համարեա պատ-
րաստ երկու կամուրջ գտաւ, որոնք գեռ չէին հասցրած
րաստ երկու կամուրջ գտաւ, որոնք գեռ չէին հասցրած
գիմացի ափը, որովհետեւ պարսից 5000 մարդուց բաղ-
դիմացի ափը, որովհետեւ պարսից 5000 մարդուց բաղ-
դիմացի ափը, որովհետեւ պարսից 5000 մարդուց բաղ-
դիմացի ափը, որովհետեւ պարսից 5000 մարդուց բաղ-

դիմացի ափը, որովհետեւ պարսից 5000 մարդուց բաղ-
դիմացի ափը, որովհետեւ պարսից 5000 մարդուց բաղ-

հարաւ, դէպի թաբելոն, այլ ուղեռուեց դէպի հիւսիս, լեռնային Հայաստանի հովազունչ տեղերը Այդ ճանապարհը, բացի լաւ կլիմայից, ապահովեց և ուժեստի միջոցը: Մակեդոնացիներից գերի բոնուած պարսիկ լրտեսները յայտնեցին, որ Դարեհը Բաբելոնից դուրս է եկել իւր ահագին զօրքով և բանակ դրել Տիգրիսի արևելեան ափին, Գաւդամելա գիւղի մօտ նա ենթադրում էր, որ Աղեքսանդրը երկրորդ մեծ գետին կը մօտենայ, ուստի և այդ տեղ Տիգրիսի ծանծաղուտի մօտ մի ամուր գիրք բռնեց մակեդոնացոց՝ գետը հետի—ոտով անցնելը արդեւ լեռու նպատակով: Դարեհի ընտրած տեղը Գաւդամելա գիւղի մօտ էր, բայց աւանդաբար, Աղեքսանդրի վերջին և ամենամեծ յաղթութիւնը 50 մզոն դէպի արևելք գտնւող՝ Սրբելլա քաղաքի անունով է կոչւաւմ: Դրանից ոչ հեռու խաչմերուկ էին լինում հաղորդակցութեան ներքին մեծ ճանապարհները, որոնք այժմ էլ միանում են Մուսուլում, գետի արևեմտեան ափին գտնւող նինուէի աւերակների մօտ, որը հին ժամանակ բոլոր կարաւանների իջևանակէտն էր: Այդ տեղով էին անցնում նօշից դէպի Սարդի և դէպի արևեմուտք, Ելբատանից, Հնդկաստանից ու Բաբելոնից, Պարսից ծովից, վերջապէս Հայաստանից և Տրապիզոնից դէպի Աև ծով տանող մեծ ճանապարհները:

Հնդկաստանի և արևեմտքի մէջ գտնուած վաճառականական ուղիները հին ժամանակ էլ, ինչպէս և այժմ, համաշխարհային հարստութիւն տարածող մեծ զարկերակն էին: Նրանք կեանք էին տալիս այն երկրներին, որոնց միջով անցնում էին: Այդ ճանապարհների ամեն մի դարի փոփոխուող ուղղութիւնները որոշում էին հզօր կայսչութիւնների գրութիւնն ու կարգադրում երկրի հարստութիւնը: Այն երկրները, որոնց նուաճուելը Աղեքսանդրին էր վիճակուել, ցամաքային վաճառականութեամբ հարըստանում էին, որը երկար դարերի ընթացքում արտահանում էր դէպի Միջերկրական ծովն ու Փիւնիկէ Աւելի ուշ, Հնդկաստանից դէպի Պարսկական ծոցը Աղեք-

սանդրի բացած վաճառականական ճանապարհը առեւտրական հաղորդակցութեան մի ուրիշ ընթացք գտաւ և այս վերջինս սկսեց նախապատութիւն ստանալ Աղեքսանդրեան կայսերութեան անկումից յետոյ: Դա անցնում էր միջնադարեան և այժմեան—Բաղդադ ու Դամասկոս կենդրուններով: Երկրորդ գարում Ք. Ճ. ա. գործածութեան մէջ մտաւ մի երրորդ ճանապարհ, պատրաստուած Աղեքսանդրիայից Կարմիր ծովի ու Եգիպտոսի վրայով: այդ ուղին հռոմայեցիների ժամանակ հարստութիւնը կարգաւորելու մեծ գործօնը դարձաւ:

Շատ յետոյ, համաշխարհային վաճառականութեան մէջ կոստանդնուպոլիսն էր առաջնորդող գեր խաղում, մինչև որ այդ վաճառականութիւնը, Խաչակրաց արշաւանքից յետոյ Եւրոպայում շուայլութեան իրերի մեծ պահանջի երեան գալովը՝ անցաւ Վենետիկի ու Ջնովացոց ձեռքը: 1497 թուին երբ Վասկօ-դի-Գամայի ձեռքով, Բարեյուսոյ հրուանդանի վերայով ծովային ճանապարհը բացուեց հին վաճառականական ճանապարհները բոլորովին բարձի թողի եղան: Լիսաբոնը դարձաւ Եւրոպայում հարստութիւնը կարգադրելու գլխաւոր գործօնը, և Հնդկաստանի գանձերը սկսեցին Փորթուգալիայում կենդրունանալ: Նիդերլանդացիք ու անգլիացիք բաւականանում էին միջնորդի գերով, և ապրանքը Լիսաբոնից հիւսիսային Եւրոպա էին տարածում, մինչև որ Սպանիան ձեռքը Փորթուգալիայի վերայ դուեց և անմտութեամբ փակեց Լիսաբոնի նաւահանգիստը նիդերլանդացիների և անգլիացիների նաւերի առաջ: Այդ տէրութիւնների նաւերը իրանց համար դէպի Հնդկաստան ուղիղ ճանապարհ բաց արին և դրանով ոչնչացրին առեւտրի այն մենավաճառութիւնը, որով մի ամբողջ գարի ընթացքում օգտառում էր Փորթուգալիան: Հետևանքն եղաւ Անգլիայի հարստութիւնն ու հզօրութիւնը: Նորագոյն ժամանակներում Սուէդի ջրանցքի բացումը յարութիւն տուեց Հնագոյն վաճառականական ճանապարհներից մէկին և

պատճառ դարձաւ որ անգլիացիք նուանեցին Եգիպտոսը։
Նուանվ բացւող երկաթուղային ճանապարհը, որ միայնեւ
լու է արևմուտքը Պարսից ծոցի հետ, կենդանութիւն պէտք
է տայ միւս հին վաճառականական ճանապարհին։ և
ինչպէս երևում է Գերմանիային կը վիճակուի այդ հարցի
լուծումը։ Վերջապէս, երրորդ ճանապարհը Պարսկաս-
տանի կամ Թուրքեստանի և Աւղանստանի միջով դուցէ
կը տարսուի Ռուսաստանի ձեռքով։ Երկաթուղին նաւից
շատ աւելի յուսալի է և արևելքի ու արևմուտքի միջև
կարաւանի հին ճանապարհները շուտով կը ծաղկեն այն-
պէս, ինչպէս էր Աղեքսանդր Մեծի ժամանակիները։

Հասնելով հին աշխարհի վաճառականական ճանա-
պարհների հանդոյցին և իմանալով, որ Դարեհը իրան է
սպասում, Աղեքսանդրն ուղիղ նրա դէմ գնաց և անցաւ
Տիգրիսն, ուր գետի ծանծաղուաը, ի զարմանս իւր, չեր
պաշտպանուած։ Շատ հաւանական է, որ գետն անցնելը
կատարուեց Գաւդամելից 80 մղոն վերև։ Տիգրիսն անց-
նելուց յետոյ գիշերը լուսնի խաւարումն եղաւ. մակեդո-
նացիք սկզբում այդ վատ նշան համարեցին, բայց դու-
շակող Արխատանդերը բացատրեց, որ այն պարսիկների
անկումն է նախադուշակում։ Այժմեան աստեղադէտների
հաշուով, այդ խաւարումը եղաւ 331 թուի սեպտեմբերի
20-ին։

Դարեհի զօրքը կազմուած էր նրա ահագին կայսրու-
թիւնը ներկայացնող բոլոր տարրերից։ Ամենահեռաւոր
ցեղերն ու ազգերը այսինքն. Սկիւթիան, Բակտրիան, Սոդ-
քանիան, Արաքոզիան, Արաբիան և Հայաստանը ուղար-
կել էին իրանց պատրաստի զօրքը։ Մի տարրուայ ընթաց-
քում մի ահագին բանակ էր կազմուել։ Մշտական վար-
ժութեան և եռանդուն կազմակերպութեան շնորհիւ, նա,
պարսիկների կարծիքով, անհամեմատ բարձր էր այն ան-
կարգ զանգուածից, որ յաղթուեց Աղեքսանդրից իսսի
մօտ։ Սկիւթական զարհուրելի կառքերը, որոնց մասին
իսսի մօտ տեղեկութիւն անգամ չը կար, այժմ Դարեհի

զօրքերի մէջ երկու հարիւրի չափ էին։ Դոքա սովորական
երկանիւ պատերազմական կառքեր էին, անիւների սոնու
ծայրերին մեծ սրեր կպցրած։ Մի քանի կառքերի՝ այդ
տեսակ սրեր կպցրած էին նաև կառապանի նստած տեղի
շուրջը։ Արքանի խօսքերով, Դարեհի ամբողջ բանակը
բաղկացած էր մի միլիոն հետևեակ և 40,000 այրուձիուց։
Խոսի դառն փորձից խրատուած, կռուի համար Դարեհը
ընտրել էր մի հարթ, լայն դաշտ, որի վերայ նրա ահագին
զօրքը ազատ կարող էր շարժուել։ Մի քանի տեղերում
նոյն խակ հողի անհարթութիւններն էլ ուղղել էին, որպէս
զի սկիւթական կառքերն ու հեծելագունդը կարողանային
աւելի լաւ գործել։ Մի խօսքով, պարսիկներն ամեն միշոց
գործ էին գրել, որ յաղթութիւնն իրանց մնայ։

Աղեքսանդրը մեծ զգուշութեամբ մօտեցաւ թշնա-
մուն։ Ոչ մի բան չէր նմանում Դրանիկի մօտի արտա-
յայտած անմիտ համարձակութեանը։ Այժմ գտնուում էր
իւր թշնամու ծննդավայրում, որ շրջապատուած էր մի
կողմից գետով, խակ միւս կողմից՝ լեռներով և ուներ իւր
առաջին մի ահագին լաւ կազմակերպուած բանակ, որն
ինքն էր իւր համար կռուի յարմար դաշտ ընտրել։ Ինչ-
պէս պարսիկների այնպէս և մակեդոնացոց կողմից այդ-
կուում ամեն բան հրապարակ էր հանուած։ Սեպտեմ-
բերի 21-ին, առաւոտը վաղ, Աղեքսանդրն առաջ շար-
ժուեց, ունենալով ձախ կողմում գետը, խակ աջ կողմում՝
լեռները։ Ճանապարհորդութեան չորրորդ օրը լրտեսները
հաւասարիացրին, որ հեռուում, գաշտի վերայ թշնամու
այրուծի է երեացել։ Բանից գուրս եկաւ, որ դա 1000
ձիաւորից բաղկացած մի գունդ էր, որը յարձակման ժա-
մանակ իսկոյն յետ փախաւ։ Գերի բռնուած պարսիկներից
իմացաւ Աղեքսանդրը, որ Դարեհը մօտ է գտնուում։ Այն
ժամանակ Աղեքսանդրը, իւր զօրքին հանգիստ տալու
համար չորս օր կանգ առաւ։ Սեպտեմբերի 29-ին մակե-
դոնացիք պատրաստուեցին առաջ շարժուելու, և զօրքը,
մթերքների սայլերը և զօրքի շարքից դուրս մասերը

բանակում թողնելով, գիշերը առաջ գնաց, յուսալով
լուսադէմին կռուի մտնելու թշնամու մօտենալը տեսա-
նելով՝ պարսիկներն ուղղեցին իրանց կարգերը, իսկ մա-
կեդոնացիք, բարձրանալով մի բլրի դադաթ, տեսան
փարեհի զօրքը ընդարձակ դաշտի վերայ բանակ դրած:
Զօրքը արդէն սկսել էր ցած իջնել, և ի հարկէ, կէս
ժամից յետոյ սկսելու էր արիւնահեղ կռիւը, եթէ յան-
կարծ Աղեքսանդրը չը կանգնեցնէր: Զինւորական խոր-
հուրդ կազմուեց, և քննութեան առաջարկուեց խնդիրը.
«Իսկոյն յարձակումն գործել»: Պատերազմական խանդից
բռնուած, շատերը պատասխանեցին, «այս». բայց Պարմե-
նէոնն և աւելի սառնարիւն մարդիկ խորհուրդ տուին նախ
խուզարկութիւն անել. որովհետեւ կռուի դաշտը մակե-
դոնացիներին բոլորովին անյայտ էր, անխոհեմութիւն կը
լինէր թշնամու վերայ յարձակուել, նախապէս չը ուսում-
նասիրելով նրա զինւորական դրութիւնը: Պարմենէոնի
կարծիքը այս անդամ ընդունուեց:

Աղեքսանդրի զօրքը ռազմական կարգով դադար
առաւ, և նա ինքը, փոքր գնդով, խուզարկութեան ու-
ղերուեց: Մինչև կէսօր, ժամանակն այդպէս անցաւ և
երբ Աղեքսանդրը վերադարձաւ, նորից խորհուրդ կազ-
մուեց: Գլխաւորներից իւրաքանչիւրին մանրամասն հրա-
հանդ տրուեց, և նրանք պէտք է ոգեսորէին իրանց զին-
ւորներին գեղեցիկ ճառերով: Այս բոլոր ժամանակ,
պարսկական զօրքը պատրաստ կանդնած էր և ներդային
դրութեամբ սպասում էր թշնամիների յարձակման: Ակսեց
մթնել, իսկ մակեդոնացիք տեղից չը շարժուեցին: Նրանք
ճաշեցին և պարկեցին քնելու: Իսկ պարսիկներն ամ-
բողջ գիշեր զէնքը ձեռից չը ձգեցին, վախենալով, որ
թշնամին անակնկալ կերպով մթութեան մէջ չը յարձակուե-
նրանց վերայ:

Պուտարքում նկարագրում է հակադրութեան այն
փայլուն պատկերը, որ ներկայացնում էր մակեդոնացոց
զինւորական շարքերում թագաւորող խաղաղ հանդար-

տութիւնը, պարսիկների վառ լուսաւորուած բանակում
աղմկալից կենդանութիւնը, նոյնալիս և Պարմենէոնի ան-
համբերութիւնը՝ գիշերուայ մթութեան մէջ կռուի մտնել
բազմաթիւ թշնամու հետ, և խորհրդաւոր հոգեզմայլու-
թիւնը, որին նուիրուել էր Աղեքսանդրը, վառած զոհա-
րանի առաջ, իւր վրանի մօտ:

«Լուսնի խաւարումից յետոյ տասն և միերորդ գի-
շերը և Աթէնքի ամեն տարի կատարւող սովորական խոր-
հրդաւոր տօների սկզբում երկու զօրքերը կանգնած
էին դէմ առ դէմ: Աղեքսանդրը, ընդհակառակն, երբ
զօրքը խաղաղ քնած էր, Արիստանդ քրմի օգնութեամբ,
աստուածների գութը շարժելու համար խորհրդաւոր ծէսն
էր կատարում: Սակայն նրա զօրապետները, Պարմենէոնի
գլխաւորութեամբ, նայում էին պարսից բանակի բորբոք-
ւող կրակի վերայ, ուշագրութեամբ լսում այնտեղից
համնող զէնքի շառաչիւնները և միմեանց կարծիք էին
յայտնում, թէ ցերեկուայ պայծառ լուսին յանդուգն
բան է կրիւ սկսելը մի այդպիսի ահագին բանակի հետ:
Ուստի, երբ վերջացրեց Աղեքսանդրն իւր զոհաբերու-
թիւնը, նրանք շրջապատեցին նրան և խնդրեցին գիշերով
յարձակուել թշնամու վերայ. որովհետեւ մթութիւնը կը
ծածկէր զինւորներից այն վտանգները, որոնք ունենալու
են հզօր թշնամու հետ կռուելիս: Դրան հանդարտ կեր-
պով պատասխանեց հերոսը. «Ես չեմ դողանալ յաղ-
թութիւնը»:

Աղեքսանդրը չէր կամենում վճռական քայլ անել,
խուսափելով գիշերուայ մթութիւնից ծագելիք պատա-
հարներից, և, բոլորովին վստահ լինելով իւր զինսուրա-
կան տաղանդի առաւելութեան վերայ, նա գերադասում
էր խաղն իւր արուեստի բոլոր կանոններով խաղալ: Աւե-
լացրու և այն, որ նրա զինսուրները գիշերը հանգստացել
էին, իսկ պարսիկները պէտք է միւս առաւօտ կռիւն
սկսէին գիշերային անքնութիւնից խիստ յոգնած:

«Ուշ, — շարունակում է իւր պատմութիւնը Պուտար-

քոս. — Աղեքսանդրը պարկեց քնելու իւր վրանում և քնեց այնպէս պինդ, որ իւր զօրապետները զարմացել էին. նա չը դարձեց արշալուսին էլ, և նրանք ստիպուած էին իրանց վերայ մի անսովով պատասխանառութիւն վերցրել հրամայելով զօրքին նախաճաշել. Վերջապէս, տեսնելով որ ժամանակն անցնում է, Պարմենէոնը մտաւ թագաւորի վրանը և ստիպուած եղաւ երկու անդամ ձայն տալ վրանը և ստիպուած եղաւ երկու անդամ ձայն տալ նրան, մինչև որ նա կը զարձնէր. Այն ժամանակ Պարմենէոնը նրան հարցրեց թէ, ինչպէս է նա ննջում յաղթողի քաղցր քնով, և ոչ զգաստ նման մի մարդու, որ պէտք է մտնի կոռուի, պատմութեան մէջ ամենաարիւնաշեղ կոռուի» Դրան Աղեքսանդրը ծիծաղելով պատասխանեց. «Ամիթէ քեզ չի թւում, որ մենք արդէն յաղթել ենք. մենք արդէն պատելազմից խուսափող Դարեհին վնտուելու համար անտպատներում յոդնեցուցիչ աստանականութիւնից աղատուած ենք»:

Հ.

Աղեխանդրի ամենամեծ յաղբութիւնը. Վրէժինդրութիւնը Դարեհի համար:

331 թուին Ք. Ծ. ա. հոկտեմբերի 1-ին Դարեհի և Աղեքսանդրի զօրքերը կանդնել էին դէմ առ դէմ: Մակեդոնացիք ընդ ամենը 40,000 հետեակ և 7000 ձիաւոր զօրք ունէին. Այդ բանակը բաւական էր միայն թշնամու զօրք կենտրոնի գիմադրութեան համար, որի շարքը մակեդոնական երկու թեսերի սահմաններից աւելի տարածութիւն բռնելով՝ սպառնում էր նրանց շրջապատել: Ոչ միայն բազմամարդութեամբ և զօրքերի քանակութեամբ պէտք է բազմամարդութեամբ և զօրքերի քանակութեամբ պէտք է բազմակութեամբ պահպան կամաց շարքերից բռնում, և սրակուոր անում կառապատճեներին:

Հութեամբ և անընկճելի բուռն յարձակմամբ Եթէ Աղեքսանդրը միայն այդ մի յաղթութիւնն անդամ տանէր Գաւագամելի ճակատամարտում, այդ էլ բաւական կը լինէր ապացուցանելու նրա զինուորական հանճարը:

Իւր զօրքի երկու թեսերը թշնամու շրջապատող շարժումից աղատ պահելու համար Աղեքսանդրը իւրաքանչիւրի ետևում մի մի պահեստի գունդ դրեց, որոնք կարող էին իրանց դիրք արագութեամբ փոխելով, ամեն կողմից դիմագրել թշնամու յարձակմանը: Ինչպէս միշտ, այս անդամ դիմագրել թշնամու ձախ կենտրոնի վերայ ծանր հեծելազորով: Մնում էր որոշելու՝ թէ ո՞ր րոնի վերայ ծանր հեծելազորով: Նրա բազէի հայեացքը յառած կէտին ուղղի իւր հարուածը. Նրա բազէի հայեացքը յառած սպասում էր պարսից զօրքի ճակատի ամենաթոյլ տեղը գտնելու: Որպէս զի թշնամու ուշագուութիւնը մի կողմ գրաւի, Աղեքսանդրը սկսեց դէպի աջ շարժել իւր զօրքի ճակատը: Պարսիկներն իսկոյն համապատասխան կերպով դէպի ձախ քաշեցին իւրեանց զօրքը, և վախենալով, որ դէպի ձախ քաշեցին իւրեանց զօրքը, որպէս սկսեց այս շարժմամբ իրանց գիծը սկսեց ականական կառքերի համար վայրից ըլ հեռանայ, Դարեհը կոխւը սկսեց հեծելազօրի գրոհով, պատակ ունենալով մակեդոնական աջ թես շրջապատելը: Յունական հեծելազօրը սկզբում երերաց. բայց յետոյ, յարմար ժամանակին հասած օդնութեան շնորհիւ գիմադրութիւն ցոյց տուեց: Մինչ այս մինչ այն, սկսեց ականական կառքերն աշտանակելով, ուղղուեցին մակեդոնական կենդրունում գտնեող փալանգների վերայ: Բայց փալանգների ամուր զանգուածը ճեղբելու փորձը ըլ յաջողուեց որովհետև նրանք իրարից բաժանուելով թոյլ էին տալիս այդ մահաքեր գործիքներին իրանց կողքովն անցնել և յետոյ նորից կարգերը միանում էին, և այնուհետև ետևի շարքերի զինուորները յարձակում էին ձիերի վերայ նրանց սանձերից բռնում, և սրակուոր անում կառապատճեներին:

Այն ժամանակ Աղեքսանդրի սուր հայեացքը վճռական հարուած տալու յարմար վարկեան դտաւ: Նա հեծելազօր հարուած տալու յարմար վարկեան դտաւ:

լազօրի առաջնորդութեամբ իւր փալանգները տարաւ պարսից զօրքի կենտրոնի վերայ, ուր դժուում էր ինքը Դարեհը: Ոչ մի բան չէր կարող դիմադրել այդ յարձականը: Արքայական կառքի վարողը նետի հարուած ստացաւ, և Դարեհը, գլուխը կորցնելով, փախաւ: Սարսափը բռնեց պարսից ամբողջ կենտրոնին, ապա և ձախ թեին, որը տրորուեց մակեդոնական հեծելազօրից: Կոռու դաշտի այս կողմում ամեն բան վերջացած էր, բայց պարսից աջ թեր խուժեց դէպի այն բացուածքը, որ կազմուել էր մակեդոնական ճակատի մէջ Աղէքսանդրի յարձակման պատճառով, և բոլորվին անջատեց նրա ձախ թերը: Դրա հրամանատար Պարմենէոնն Աղէքսանդրից օգնութիւն խնդրեց, բայց միենոյն ժամանակ, պահեստի աջ դունդը յետ մղեց թշնամուն, որի ետե՛ց վրայ տուեց և Աղէքսանդրին իւր յաղթական յարձակումից յետոյ օգնութեան համնելով Պարմենէոնին: Տեղի ունեցաւ մի սարսափելի կոտորած: Մի քանի բոպէից յետոյ Դարեհի զօրքերի միւս մասի հետ պարսից աջ թեւն էլ դէպի փախուստ դարձաւ:

Այդ ժամանակ Աղէքսանդր սկսեց պարսից գլխովին ջարդուած բանակին անողորմաբար հալածել և միայն երեկոյեան աղջամդջին իւր մարդոց և ձիերին կարճժամանակեայ հանգիստ տուեց: Կէս գիշերին նա նորից պատերազմական գնացքով Սրբելլայի վերայ շարժուեց Դարեհին բռնելու յուսով: Սակայն Դարեհը արդէն հեռու, դէպի Միդիա տանող ճանապարհի վերայ էր դժուում: Նրան ուղեկցում էին միայն թիկնապահներն և ձիաւոր մի փոքր գունդ, իսկ նրա ամբողջ բանակը ցիր ու ցան եղաւ աշխարհի ամեն կողմ: Հազար հազարաւոր մարդիկ գերի բռնուեցին, իսկ սպանուածների թիւը անհնար էր որոշել: Հին աշխարհի ամենամեծ կոխւը վերջացաւ Աղէքսանդրի յաղթութեամբ, որը իսկոյն փոխեց պատմութեան ընթացքը՝ տալով նրան մի ամբողջ հազարամեակի համար նոր ձեւ: Համոզուելով, որ անհնար է Դարեհին բռնել, դարձարեց այլ ևս նրա մասին մտածելուց, ինչպէս արել

Էր իսպի կռուից յետոյ: Նա շարժուեց դէպի հարաւ, Բաբելոնի վերայ, որ այդ տեղից 300 մղոն հեռու էր դժուում:

Քաման դար մեծն Բաբելոն արևելեան վաճառականութեան և քաղաքակրթութեան կենտրոն էր: Վերջին երեք թարերում, նաբուպղասարի և նաբուգոդոնոսորի հոկայագարերում, նաբուպղասարի հոկայագարին էր կան շնութիւնների շնորհիւ նա աշխարհի հրաշալիքն էր կամ ընկած դաշտի: Նրա պալատները, տաճարները, կախ ընկած պարտէզները և լոյն քաղաքային պարիսպները, որոնց վերայ կարող էին երկու քառաձի կառք գնալ, ամբողջ աշխարհի հիացմունքն էին շարժում: Հինգ մղոն դէպի մի աշխարհի հիացմունքն էին շարժում: Աղամայն գլուխ գլխութիւնների այժմեան առ վեց դէպի միւս կողմն ձգւող Բաբելոնի այժմեան աշերակիները պերճախօս ապացոյցներ են նրա նախկին հըսկայական չափին ու մեծութեանը:

Բաբելոնը մակեդոնական հերոսին ոչ միայն առանց ամենափոքր ընդիմութեան, այլ նոյն իսկ ուրախութեամբ թեամբ և գեհանձնութեամբ դէպ ինքն գրաւեց բոլորի թեամբ և գեհանձնութեամբ դէպ ինքն գրաւեց, որ բաբելացիւրտերը: Նա ուրախութեամբ թոյլ տուեց, որ բաբելացիւրտերը իրանց քաղաքի հրաշալիքները նրան ցոյց տան և ները իրանց քաղաքի հրաշալիքները նրան ցոյց տան և հրամայեց նրանց գլխաւոր աստծուն, Բելին, տաճար կան հրամայեց նրանց գլխաւոր աստծուն, Բաբելոնի տեսարանը ցուցմունքի համեմատ զոհ մատոյց: Բաբելոնի տեսարանը ցուցմունքի համեմատ զոհ մատոյց: Բաբելոնի տէրն է, և համոզումն, որ նա այդ օրուանից Բաբելոնի տէրն է, Աղէքսանդրի մէջ աւելի ևս ամբացրին այն համաշխարհային կայսերութեան մասին գաղափարը, որ ծագել էր նրա գլխում: Տիւրուի առումից և Եփիպտոսն այցելելուց յետոյ:

Բաբելոնից նա դէպի նօշ, պարսից կայսերութեան մայքրաղաքը արշաւեց և նուածեց նրան առանց ամենափոքր արիւնհեղութեան: Այդ աեղ նրա ձեռքն ընկաւ Դարեհի արիւնհեղութեան: Այդ աեղ նրա ձեռքն ընկաւ Դարեհի ամբողջ գանձարանը, ուր մինչեւ 50,000 տաղանդ, այսինքն ամբողջ գանձարանը, ուր մինչեւ 130,000,000 բուրլի կար: Աղէքսանդրի Պերսեպում մոտ 130,000,000 բուրլի կար: Աղէքսանդր Պերսեպում գլաւ կառավարում դաշտ քանակութեամբ գանձեր, այսինքն՝ առաջարկատում դաշտ մեծ քանակութեամբ գանձեր, իսկ երկ այսինքն՝ առաջարկատում 12,000 տաղանդ, իսկ երկ

ըորդում, 6000։ Բացի դրանից, մակեդոնացիք Պերսեպօն լում վերցրեն այնքան թանկադին քարեր, գորգեր, ոսկեայ ամաններ և ընդհանրապէս հարստութիւն, որոնց տեղափոխելու համար 5000 ուղարկած է 20,000 ջորի պէտք էր։ Ամենայն հաւանականութեամբ, այդ ամբողջ աւարք գրաւուեց արքայական պալատում, որը ինչպէս երևում է, քաղաքի գլխաւոր մասն էր կաղմում։

Աղէքսանդրը մնաց Պերսեպօնում ամբողջ ձմեռը (մօտ 4 ամիս) և հեռանալուց առաջ հրամայեց այրել Դարեհի պալատը։ Այդ գէպքը այլ և այլ կերպով է պատմում։ Պլուտարքոսը նրան պատահական, ուրախ խնջոյքի հետեւանքի բնաւորութիւն է տալիս։ Նրա խօսքերով, Դարեհին վնասուելուց առաջ, Աղէքսանդրը ներկայ գտնուեց մի ուրախ խնջոյքում, ուր չորս հատ գետերներ, (անառակ կանաքը) կային, դրանից ամենանշանաւորն էր ատափիցի Թայիսան Խնջոյքի ժամանակ նա ցանկանալով Աղէքսանդրին մի հաճոյականութիւն անել կամ արտակարգ բան ասած լինել, մի այնպիսի միտք արտայայտեց, որ թէե բոլորովին յունական էր, բայց անտեղի էր արտասանել Թայիսան պարզապէս յայտնեց, որ զուարձանալով պարսից գոռող թագաւորի պալատում, և ծաղքելով նրա ամբողջ մեծութիւնը, նա իրան բոլորովին վարձատրուած է համարում այն զրկանքների փոխարէն, որ կրել էր Ասիայի բանակներում։ Բայց աւելացնում է, իրան աւելի ևս ցանկալի կը լինի, իւր հրճուանքը պսակելու համար, Քսերքսեսի պալատն այրել, որը մի ժամանակ այրել էր Աթէնքը։ Այդ գէպքում կասէին, որ անառակ կինը, գետերան, իւր սեպհական ձեռքով այրեց թագաւորական պալատը, և Աղէքսանդրի աչքի առաջ Յունաստանի վրէժը Պարսկաստանից աւելի լաւ առաւ, քան մակեդոնական զօրապետները ցամաքային և ծովային պատերազմներով։ Նրա խօսքերը բուռն ծափահարութեամբ և այնպիսի միահամուռ զգացմունքով ընդունեցին՝ որ Աղէքսանդրը ընդհանուրի տրամադրութեամբ համակուած, գուրս թռաւ իւր օթեա-

կից և, դլիմին ծաղկեայ պսակ, ձեռքին վառուած լապտեր, գնաց պալատն այրելու։ «Մակեդոնացիք, աւելացնում է Պլուտարքոս, մեծ հիացմամբ էին մասնակցում այդ հրդեհին։ որովհետև նրա այդ վարմունքի մէջ բարբարոսների երկրում իրանց չը մնալու և Պերսեպօլիսը բարբարոսների առանցքին գանկութիւնն էին տեսնում։ Աղէքսանդրի տուն չը գառնալու ցանկութիւնն էր նա տեսնում։

Սրբիանը այդ իրողութեան մասին խօսելով, Պերսեպօլի ապարանքի այրման սկզբնապատճառ ոչ թէ գետեսկովի առաջարում, այլ իրան Աղէքսանդրին, որ այդ մարային է համարում, որ իրան Աղէքսանդրին, որ այդ մասսին նախապէս խորհրդակցեց Պարմենէոնի հետ։ վերջինս մասերքում Աթէնքն այրելու համար այդպիսի վրէժինդրութիւնը չէր խրախուսում։

Եթէ այդ հրդեհի գաղափարը, յիրաւի, նախամտածուածուած բան էր, այն ժամանակ Սրբիանը ճիշտ է տուում։ Ենթադրում եմ, որ այդ գէպքում Աղէքսանդրը անսեռ ենթադրում էր, որ այդ գէպքում նա աւելի վարուելու։ Յետոյ նա էլ իւր վարմունքի մասին նոյն կարծիքի էր։

Մինչ այս մինչ այն Դարեհն ապրում էր Եկբատանում, Պերսեպօլից 500 մղոն գէպի հիւսիս, և հանդարտ սպասում էր գէպքերի յեղաշրջան։ Եթէ Աղէքսանդրը առաջուայ պէս շարունակէր յաղթանակով նրան հալածել, այն ժամանակ, ծայրայեղ գէպքում նա աւելի գէպի հիւսիս, Պարմենէոնի կրթար, այսպէս կոչուած, գէպի Կասպեան Պարթևաստան կերթար, այսպէս կոչուած, գէպի Կասպեան դոները—գէպի մի լեռնային անցք, որն իսկապէս պարսից կայսերութիւնը անջրպետում էր հիւսիսային վրանաբնակ ցեղերի տափաստաններից։ Յիրաւի, 330 թուի գարնանը, Աղէքսանդրը, յունաց պարտգլխի փառքով չը բաւականացած, այլ ցանկանալով համաշխարհային տիրապետող լիւց նել, գնաց Եկբատանի վերայ, որտեղից, նրա մօտենալուն պէս, Դարեհը փախաւ։ Նա Բակորիա ապաստանեց ոչ պէս, Աղէքսանդրի երկիրազից, որքան իւր սատրապների այնքան Աղէքսանդրի պարագաների կոիների պատճառով, Յամենայն գէպս, Եկբատան ներքին կոիների պատճառով, Յամենայն գէպս, Եկբատան մտնելի»։ Աղէքսանդրը արդէն իմացաւ, որ Դարեհը ոչ թէ մտնելի։ Աղէքսանդրը ընդհանուրի բարձրութեամբ համակուած, որ Աղէքսանդրի մի հղօր թագաւորութեան ինքնականի է, այլ փախստականի

մէկը, առանց գահի ու զօրքի, խաղալիք դարձած հիւսիւսյին արևմտեան սատրապների ձեռքին։ Եկբատանում Աղէքսանդրի արշաւանքների մէջ մի հիմնական փոփոխութիւն եղաւ, իրադորձուած էր սկզբնական նպատակը։ Դրանից հինգ տարի առաջ, Կորնթոսի կոնդրեսում նա պարտաւորուել էր Յունաստանի վրէժը Պարսկաստանից լուծել և իւր պարտաւորութիւնը անթերի գլուխ բերեց։ Մինչև այժմ նա դեռ իրան յոյների առաջ նորդ էր անուանում և իւր զօրքերի մէջ յունական դաշնակիցների գնդեր պահում։ Բայց այժմ նա այլևս կարօտ չէր նրանց օդնութեան և նրա արշաւանքների մէջ մի նոր շրջան սկսուեց, որը ոչ մի յարաբերութիւն չունէր յունական գործերի հետ։ Ուստի նա Եկբատանում արձակեց թեսալական հեծելաղօրքն ու միւս յունական գնդերը, մինչև Յունաստան հասնելու բոլորի ճանապարհածախն էլ վճարեց, 2000 տաղանդ ընծայեց նրանց և միջոց ձեռք առաւ այդ ընծան Յունաստան տեղափոխելու։ Ի հարկէ, նրանցից ով կամենար մնալ իւր բանակամ, թոյլ էր տրում, բայց ցանկացողները արդէն ճառայութեան էին մտնում ոչ թէ յունաց պարագլիսին, այլ անձնապէս Աղէքսանդրին։

Յունաստանը, այսպէս առած, աչքից անհետ կորաւ, և նրա պարագլիսի տեղ երևան եկաւ մի համաշխարհային յաղթող։ Արդէն չորս տարի էր, ինչ Աղէքսանդրը թոյլել էր Եւրոպան, ուր այլ ևս նրան չը վիճակուեց վերագառնալ, և իւր կեանքի մնացած եօթ տարիները նա ամբողջովին նուիրեց պարսից կայսերութեան արևելեան մասի նուաճման գործին։ Նրան արևմտքի հետ միացնող կապերը շուտ թուլացան, և այժմ ջանքը արդէն արեւքի վերայ արևմտքի տարած յաղթանակի մասին չէր, այլ մի համաշխարհային թագաւորութիւն հիմնելու, որին հրամայէր Աղէքսանդրը, որպէս տէր և իշխան իւր հզօր բաղկի տակ համախմբուած բոլոր աղգերի ու երկրների։

Պարմենէսի հսկողութեան տակ թողնելով Եկբատա-

նում մակեդոնական փալանքներից 6000 մարդ՝ Աղէքսանդրը մնացած զօրքը իւր հետ վերցրեց և մի նոր անդրը մնացած զօրքը սկսեց։ Նպատակ ունենալով, ինչպէս և լինի, Դարեհին ըռնել չե դրանով վերջ տալ, մինչև անդամ նրա արքայական ուրուականին, միրաժին, նա շտապ գնացքով գէպ արեւելք ուղեսրուեց։ Մարտ շտապ յոդնածութիւնից, բայց դիկ ու ձիեր ընկնում էին յոդնածութիւնից, բայց պատամենային այդ հետապնդումը աննպատակ դուրս եկաւ և ճանապարհորդութեան 11-րդ օրը հասնելով Պարսկաստանի այժմեան մայրաքաղաք Թէհրանի մօտ՝ Պարսկաստանի մայրաքաղաքը հեռու, Աղէքսանդրն Բագային՝ 200 մզն Եկբատանից հեռու, Աղէքսանդրն իմացաւ, որ Դարեհն արդէն կասպեան դռներն անցել է, իմացաւ, որ Դարեհն արդէն կասպեան դռներն անցել է, ուստի մակեդոնացիներին հինգ օրուայ հանդիսաւ արուեց. ուստի մակեդոնացիներին հինգ օրուայ հանդիսաւ արուեց. արդէն կասպայց այն կողմը, Աղէքսանդրին լուր հասաւ, որ պեան դռների այն կողմը, Աղէքսանդրին լուր հասաւ, որ պեան դռների այն կողմը, Աղէքսանդրին լուր հասաւ, որ իւր իսնամքին հաւատացած նահանգն ապաւինի, իսկ գէպի որ իւր իսնամքին հաւատացած նահանգն ապաւինի, իսկ գէպի այն տեղ տանող ճանապարհին Բէսոը ապստամբուեց, այն տեղ տանող ճանապարհին Բակտրիա տարաւ. որպէս կալմանա Դարեհին շլթայեց և Բակտրիա տարաւ. որպէս կալմանա Մինչև այդ ժամանակը նրան դեռ հաւատարիմ մնացած յոյն վարձկաններն էլ փախան, ամեն բան Բէսու քաշանցյթին թողնելով։

Այդ իմանալով՝ Աղէքսանդրը շտապեցրեց իւր հետապնդումը և հետը վերցնելով մի փոքր գունդ երկօրեայ պաշարով՝ ըլ իսնայեց ոչ իրան և ոչ իւր մարդոց։ Նրանք պաշարով՝ ըլ իսնայեց ոչ արեւելք արագութեամբ գնում գիշեր ցերեկ լեռներով ու ձորերով արագութեամբ գնում թէհր հսկողութիւն սկսել էր արքայ կալմանա գտնուել էր արքայ կալմանա տարրը. Այդ տեղ, Աղէքսանդրի կոյեան գտնուել էր արքայ կալմանա տարրը. Այդ տեղ, Աղէքսանդրի նոյնուն պատրիարքի կոյեան գտնուել էր արքայ կալմանա տարրը. Այդ տեղ, հարցրեց տեղացիներից. չկայ աւելի կարծ ուղի, թեանը, հարցրեց տեղացիներից. չկայ աւելի կարծ ուղի, որով նա կարողանար փախստականների ճանապարհը կտրել։

Մի այդպիսի ճանապարհ ցոյց տուին, բայց նա անցնում էր ջրագուրկ մի անապատով։ Աղեքսանդրը իսկոյն 500 հոգի ընտրեց իւր ամենալաւ զինուորներից, ձի նստացրեց նշանց և ցոյց տուած ճանապարհով առաջ շարժուեց, իսկ մնացած գնդին հրամայեց կարաւանի ճանապարհով հետևել իրեն։ Ամրող գիշեր շարունակուեց այդ անմիտ հետապնդումը։ Զը նայելով, որ իւրաքանչիւր քայլափոխում ձիաները սայթաքում էին և մարդիկ ընկնում, բայց այդ ձեռվ անցան 50 մղոն և արշալուսին Աղեքսանդրը իւր նպատակին հասաւ։

Առաջին երկում էր ծանր շարժւազ մի կարաւան։ Պարսիկները չը ընդիմացան, այլ փախան։ Բէսան ուղում էր Դարեհին ձի նստացնել և իւր հետ տանել, բայց վերջինո երբ չը համաձայնեց՝ դաւաճանները տէղերով մի քանի հարուած հասցրին և թողնելով նրան, փախան։ Կարաւանին մօտենալով՝ մակեդոնացիք տեսան արտասուող կանացով բեռնաւորուած շատ սայլեր առանց կառապանների. գանձերը՝ ոսկի, արծաթ, ցիրուցան էին եղել ամէն կողմ, բայց Դարեհը ոչ մի տեղ չէր երկում։ Վերջապէս մի զինուոր, Պոլիստրատ անունով, պատահմամբ հանդիպեց դետակի ափին կանդնած մի սայլի։ Սայլի վերայ պարկած էր մեռնող Դարեհը։ Նա ջուր ուզեց, և երբ Պոլիստրատը կատարեց նրա ցանկութիւնը, այն ժամանակ նա առաց, «ահա թէ ինչ թշուառութեան եմ հառել. չեմ կարող վճարել նոյն իսկ ինձ արած լաւութեան համար էլ. բայց մի վախենալ, Աղեքսանդրը կը վարձատրի քեզ։ Թող աստուածները օրհնեն նրան այն բարութեան համար, որ նա արեց մօրս, կնոջս և երեխաներիս Հաղորդիլ նրան իմ սրտակցութիւնը։ Այդ խօսքերն ասելիս, նա բռնեց Պոլիստրատի ձեռքը և մեռաւ։ Երբ Աղեքսանդրն այդ տեղ հասաւ, շատ զգածուեց. հանեց իւր վերայից իւր քզամիդը և նրա մէջ փաթաթեց հակառակորդի մեռած մարմինը։

Այսպէս, 50 տարեկան հասակում 330 թուին, յուլիսին մեռաւ բարի, առաքինասէր մարդը, որը խաղաղ

ժամանակի գուցէ ընդունակ կառավարիչ լինէր և, թէև զինուորական մի առանձին տաղանդ չունէր, բայց սովորական հանդամանդքներում, թերեւո, նոյն իսկ պատերազմի դաշտումն էլ, մի գոհացուցիչ զօրավար հանդիսանար։ Բայց նրա բոլոր գժեազդութիւնը այն էր, որ նա Աղեքսանդրի և մակեդոնական նոր զինուորական արուեստի հետ գործունէր, որի հետ մրցել նա բացարձակապէս անկարող եղաւ։ Դարեհի անշնչացած գիտակը տեսնելիս Աղեքսանդրի կոկիծը բոլորովին անկեղծ էր. որովհետեւ, բոլորից անտես արուած, դաւաճաններից սպանուած և անմարդաբնակ անապատում ձգուած հզօր ինքնակալի դրութիւնը կարող էր շարժել ոչ միայն Աղեքսանդրի, այլ և տեղի սուսն սիրու։ Թէ որքան վեհանձն էր մակեդոնացոց թագաւորը, ապացուցանում էր Դարեհի հանդիսաւոր թաղումը։ Աղեքսանդրը հրամայեց Դարեհի մարմինը Պերսեպոլիս տանել և այնտեղ նրան թագաւորավայել թաղել։

Դարեհի ողբերդական մահը տեղի ունեցաւ այժմեան Շահրուդից ոչ հեռու, Հեկատոմպիլոսի մօտ կասպից ծովից 50 մղոն հեռաւ։ Դէպի հիւսիս արշաւելիս ծովը տեսնելով՝ Աղեքսանդրը զարմացաւ։ Նա չէր կարծում թէ անապատ երկրում մի այդպիսի մեծ ջրային տարածութիւն առաջի բարձրացաւ աշխարհագրական սահմանի, բայց այն ժամանակի աշխարհագրական սահմանափակ տեղեկութիւններով, նա այդ ծովը համարեց Պոնդ-Եւքսինեանի (Սև ծով) մի հեռաւոր ծոցը, կամ նոյն իսկ, Միոդիտի (Աղովի ծով) տեղ ընդունեց։ Զադրակարգում, այժմեան Աստաբատում նա անցկացրեց երկու շաբաթ, իւր մօտ ծառայութեան ընդունեց յունական վարձկան կաններից 1500 հոգի, որոնք մի ժամանակ պարսից զօրքի ամբութիւնն էին կազմում, իրան ենթարկւող շրջակայ երկրների նահանդապետներին իրանց պաշտօններում հասերկրների նահանդապետներին իրանց պաշտօններում հասաւեց, և ըստ սովորութեան, զօրքի համար յունական խաղերով տօներ սարքեց։

Կասպից ծովի ափերից Աղեքսանդրը ուղղակի չը գնաց գէպի Բակտրիա, ուր Բէսսը գեռ պարսից դրօշակը բարձր

Է՞ր պահում, այլ դէպի հարաւ-արելը իջնելով՝ գնաց Հերատ, ուր յետոյ բարձրացաւ արելքի յունական քաղաք-ներից մէկը, որ հիմոււեց Աղեքսանդրից և կոչուեց Արիական Աղեքսանդրիա, Այդտեղ ջոկվում էին երկու գլխաւոր ճանապարհները—մէկը դէպի արելը՝ Աւղանստան, իսկ միւսը դէպի հարաւ՝ Հնդկաստան. դրա համար էլ յիշեալ ճանապարհների միացման հանդոյցը, բոլորովին արդարացի էրպակի, Հնդկաստանի բանալի է կոչում։ Այդ տեղով անցան Աղեքսանդրից յետոյ եղած բոլոր մեծ աշխարհականները. Մահմուդ Մեծը, Զինդիս-խանը, Լանկթամուրը և Նադիր-Շահը։

Ճանապարհին, խաղաղացնելով ապստամբած տեղացիներին, մակեդոնացոց հերոսը Դրանդիանա մտաւ, և նրա գլխաւոր Պրովտասիա քաղաքում մի ողբալի դէպը տեղի ունեցաւ։ Մակեդոնական բանակում դաւադրութիւն բացուեց և այդ բանում մասնակցել էր Փիլոտասը, որ ոչ միայն նշանաւոր Պարմենէնի որդին էր, այլ և ինքն էլ մակեդոնական հեծելազօրի հրամանատարի նշանաւոր պաշտօնն ունէր։ Վերջին ժամանակներս այդ դաւադրութիւնը իւր վերայ է դարձրել պատմաբանների առանձին ուշադրութիւնը, որովհետեւ դրա հետ սերտ կապ ունէր Աղեքսանդրի, դէպի իւր շրջապատովներն ունեցած, յարաբերութեան փոփոխութիւնը։

Պարմենէնը այն ժամանակ 70 տարեկան էր և միշտ էլ համարում էր պատանի աշխարհակալի ամենայուսալի նեցուկը։ Փիլիպպոսի մահից յետոյ նա երաշխաւորեց որ Ասիայում գտնուած մակեդոնական զօրքերը Աղեքսանդրին հաւատարիմ կը մնան, ջերմ կերպով պաշտպանեց ասիական աշխարհակալութիւնների ծրագիրը և վերջին չորս տարուայ յաղթական շարժումների մէջ նրա մերձաւոր խորհրդականն ու օգնականը եղաւ։ Բայց Գաւզամեւլայի կռւում նա, ըստ երևոյթին, բաւականաչափ եռանդշարտայայտեց և, Աղեքսանդրին օգնութեան կանչելով, խանդարեց նրան Դարեհին հետամուտ լինելու. ուստի,

պատանի հերոսը, կարելի է, կասկածեց, որ հին զինուուրականը ծերացել է, և նրան թողին Եկբատանում։ Աղեքսանդրի խկապէս սառնութիւնը, կամ սառն թուող յարաբերութիւնը դէպի իւր գլխաւոր նիզակակիցը մեծ նշանակութիւն ունէր այն պատճառով՝ որ մակեդոնական զօրքերի մէջ Պարմենէնը մեծ աղդեցութիւն ունէր։ Կոռլի գաշտում սպանուել էին նրա երկու որդիքը, իսկ երրորդը, Փիլոտասը, յայտնի պաշտօն էր վարում։ Նրա փեսան, գը, Փիլոտասը, յայտնի պաշտօն էր վարում։ Եղբայրն ու միւս աղդականները նոյնպէս բանակի մէջ էին եղբայրն ու մակեդոնական պահպանողական կուսակցութեան ոյժը կազմում, որ ակնյայնի խեթ աջքով էր նայում Աղեքսանդրի մոցրած նոր կարգերին։

Յիբաւի, մակեդոնական բանակում հետզետէ սկսեց դժոհութիւն երեան գալը Ծերունիները նկատում էին, որ նախկին Աղեքսանդրը, որին նրանք ճանաչում էին Եւրոպայում, փոքր առ փոքր հեռանում է դէպի արևելեան, առաւելապէս պալատական կարգերը, որոնք նրանց դիւր չէին գալիս։ Նա գեռ չէր պահանջում, ինչպէս այդ արեց երկու տարուց յետոյ, որ արևելեան սովորութեան համաձայն՝ նրան երկրպագէին։ բայց արդէն այն փաստը, որ արևելերի բնակիչներից ընդունում էր այդ տեսակ երշ կրոպագութիւն, վստ նշան էր համարում։ Բացի այդ, Աղեքսանդրի արքունիքում պարսիկները սկսեցին յաճախ երեալ և նրա վստահութեանը արժանանալ։ Վերջապէս, պարսկական սատրապներն ու միւս տեղական կառավաշրիչները մեծ մասով պահպանուում էին իրանց պաշտօնական ներում։ Այդ ամենը աշքի առաջ ունենալով, զարմանալի չէ, որ ծերունի մակեդոնացիք, որոնք պատերազմի ամբողջ ծանրութիւնը տարել էին, կարծում էին որ իրանց անարաժեքների պարագի կերպով զոկում էին աղդեցութիւն ունենալուց։

Չէ կարելի նոյնպէս չը նկատել, որ Աղեքսանդրը սկսեց, գոնէ հանդիսաւոր դէպքեցում՝ արևելեան հագուստ կրել թէն է հանդիսաւոր դէպքեցում՝ արևելեան հագուստ կրել այդ հագուստը գեռ չէր երեսում էր երեսում արևելեան արքաթեքն էր հական զգեստաւորութեան բոլոր առանձնայատկութիւնն 8

ներով, ինչպէս օրինակ թագով ևայլն, բայց մակեդոնականի և միջիականի մի տեսակ միջին տեղն էր բռնում:

Մի խօսքով, Պարմենէնը ու նրա շրջանը հին մակեդոնական կուսակցութեան պատկանելով չէին համակրում Աղէքսանդրի կոսմոպօլիտութեան, և վերջինիս ականջին լուրեր էին հասնում, թէ Փիլոտասն երբեմ թոյլ է տալիս իրան քննադատելու թագաւորի վարմունքները: Ըստ երեսութիւն, Աղէքսանդրը, որպէս թէ ոչ մի ուշադրութիւն չէր դարձնու՞ նրա վերայ, բայց իսկապէս նա հետեւում էր Փիլոտասին և օգտում առաջին յարմար դէպքից՝ որ նրան պատասխանատութեան ենթարկի:

Այդ դէպքը կամ առիթը հանդէս եկաւ Պրովտասսիա քաղաքում 330 թուի աշնանը: Նիկոմախ անունով մի մակեդոնացի պատանի իւր եղբօր միջոցով Փիլոտասին հազրդեց, որ իւր ընկերը առաջարկել է իրան թագաւորի դէմ դաւադրութեան մէջ մտնել, իսկ Փիլոտասը դանդաղել է այդ բանը Աղէքսանդրին զեկուցանել, թէև նրա հետ մշտական յարաբերութեան մէջ էր: Երկու օր յեաոյ Աղէքսանդրն այդ իմացաւ այլ ճանապարհով՝ Փիլոտասին կասկածի տակ ձգեցին և նրա վերայ մեղադրութիւններ բարդեցին գուցէ դէպի նա վատ տրամադրուած անձինք: Այսպէս կամ այնպէս՝ Փիլոտասին կալանաւորեցին և զինուուրական դատաստանի ենթարկեցին: Յայտնի չէ թէ նրա դէմ ինչ ապացոյցներ էին առաջ բերուած: բայց կասկած չը կար, որ նա շատ թշնամիներ ունէր, որովհետեւ իրան շատ գուռով էր պահում: մի քանի անգամ հայրը նրան նկատել էր. «որդեակս, լաւ կը լինի, քիթդ այդքան բարձր չը պահեա»: Այնուամենայնիւ զինուորական դատաստանը նրան մեղաւոր ճանաչեց որպէս դաւադիր ոք արքայասպանութեան նպատակով և մահուան դատապարեց: Նշանաւորն այն է, որ միւնոյն բանում մեղադրուող միւս զօրապետ Ամինդը դատաստանով արդարացաւ: Հաւատացնում են, որ Փիլոտասի մեղաւորութիւնը բոլորովին ապացուցուել էր, բայց, ինչպէս երեւում է, Աղէքսանդրը

դատաստանից լիովին բաւականութիւն չը ստացաւ. որովհետեւ Փիլոտասը պնդում էր, թէ ինքն անմեղ է և բացադրում էր, թէ թագաւորին չը յայտնեց դաւադրութիւնը՝ բոլորովին անհաւանական բան համարելով այն: Այդ պատճառով էլ Աղէքսանդրը հրամայեց նրան տանչանքի ենթարկել, որին ներկայ եղաւ ինքը թագաւորը վարագուրի ետևից թագաւոր բարեկամներից անողորմաբար տանջուելիս՝ Փիլոտասը այնպիսի թուլութիւն ցոյց տուեց, որ Աղէքսանդրը վարագուրի ետևից աղաղակեց. «Դու, Փիլոտաս, մի այդպիսի թոյլ արարած և յանդգնում ես այդպիսի գործերի մէջ մտնել: Վերջապէս, թշուառը խոստովանեց իւր յանցանքը և իւր հօրն էլ գործի մէջ խառնեց: Փիլոտասն իսկոյն մահուան դատապարտուեց և հաւատարիմ պնդագեսպաններ ուղարկուեցին Եկբատան՝ Պարմենէնին դադանի սպանելու հրամանով: Պարմենէնը սպանուեց իրան շրջապատով զինուորների ձեռքով: Անկարելի է հաւատալ, որ Պարմենէնը դաւադիր ոք լինէր, ուստի և Աղէքսանդրի վարմունքը չի կարելի ոչ մի կերպ արդարացնել:

Կոփէր վերջացել էր: Իւր փայլուն ծրագրովը և նրա վարպետ կերպով գլուխ բերուելովը այս յաղթութիւնը ամենաշաշքի ընկնողն էր Աղեքսանդրի, մինչև այժմ տարած, բոլոր յաղթութիւններից: Նա գլխովին ջարդեց և համարեա բոլորովին ոչնչացրեց Պորի բանակը: Դէռորի խօսքերով, այնտեղ սպանուեց 12,000, իսկ Արքիանի հաւատացնելով՝ 23,000 մարդ: Մարտակառքերը կոտրատուեցին, իսկ վարիչները կոտորուեցին, գերի բռնուեց 8 փիզ և նրանց մեծ մասը կոռու դաշտում մնաց: Սպանուած գորականների մէջ գտնուում էին և Պորի երկու որդիքը:

Պատերազմի տեղում, Գիդասպի մօտ, Աղեքսանդրը նիկէա քաղաքը հիմնեց, իսկ հակառակ ափին, ուր կանգնել էր նրա բանակը, մի ուրիշ քաղաք հիմնեց, և իւր նշանաւոր երիվարի պատուին՝ Բուցեալ անուանեց: Մի քանի զրոյցներին նայելով, այդ ձին, որ առաջնորդել էր Աղեքսանդրին նրա բոլոր կոփէններում՝ այս կոտում վերաւորուեց և վերջին շունչը փչելիս՝ ընկաւ իւր տիրոջ ոտների մօտ, իսկ միւս տեղեկութիւններին նայելով, — Բուցեալը յիրաւի, Գիդասպի մօտի յաղթութեան օրը ընկաւ, բայց ծերութիւնից, որովհետեւ 18 տարեկան էր ինչ և լինի, բայց Աղեքսանդրի այդ հաւատարիմ, սիրուած ընկերի յիշատակը պահպանուել է մինչև այսօր Զալալպար քաղաքում, ինչու այժմ կոչւում է Բացեալը:

325 թուի մայիսին իւր տարած յաղթութիւնից յետոյ Աղեքսանդրը մի ամսի չափ մնաց Պորի երկրում, և միջոց ձեռք առաւ բաւական թուով նաւեր և լաստեր շնուրու՝ Գիդասպի ընթացքն ի վայր արշաւելու համար: Յետոյ Պորին և Թակսիլին, նրանց պատկանած երկրներում կառավարիչներ կարգելով, այլ և յանձնելով կրաքանչերին երկու նոր հիմնած քաղաքների շինութիւնը, նա

գէպի արևելք շարժուեց Հնդագետը (Պինդ-Ճաբ) վերջնականապէս նուածելու: Այդտեղ ապրող ցեղերի մեծ մասը հպատակուեց նրան առանց ընդդիմութեան, և նա եռանդուն դիմադրութեան հանդիպեց միայն Հինդ—գետերից մէկի, Ռավի կոչուածի, վերայ ապրող մի կարգ մանր հասարակապետութիւններից: Այդ ինքնավար անկախ հասարակապետութիւնները իրանց կազմութեամբ այնպէս էին նմանում յունական տէրութիւններին՝ որ յոյները նրանց «Աղատ Հնդկաստան» անուանեցին: Ի հարկէ ինչքան էլ յամառ գիմադրութիւն ցոյց տային այդքաջ քաղաքացիք, ստիպելով Աղեքսանդրին ոչ միայն պաշարել և նրանց քաղաքները յարձակմամբ առնել, այլ նոյն իսկ պաշարել նրանց սայլերից կազմած պատճէները, — այնուամենայնիւ, վերջ ի վերջոյ նա յաղթանակով հասաւ մինչև Հնդագետի վերջին սահմանը:

Դէպի Հնդկաստան իւր արշաւանքի հէնց սկզբից նա նպատակ ունէր միայն Հնդագետը, որպէս մաս պարսից կայսերութեան՝ նուածել: Միւս Հնդկաստանի, Գանգէս գետի վերայի Հնդկաստանի մասին, նա ոչ մի գաղափար չունէր. բայց այնուամենայնիւ նուածելով Հնդագետը, Աղեքսանդրը չը կամեցաւ Գիդասպ վերադառնալ, ուր նրան սպասում էր նաւատորմը, այլ մտածեց էլ հեռու արևելք գնալ, ուր տեղացիների խօսքը բարեբեր և քաղաքակիրթ երկիր կար Սակայն երբ նա վերջնականապէս վճռեց անցնել վերջին Հիփազիս գետը՝ իւր հայար անսպասելի կերպով իւր սեպհական բանակի կարգերը ընդդիմացան:

Մակեդոնացիք մշտական արշաւանքներից խոնջել և յոդնել էին: Նրանցից շատերը վիրաւորուած, միւսները հիւանդ էին: Վերջին երկու ամսում անդադար անձրե էր տեղում և այդ աւելի ևս էր ստիպում նրանց վերադարձ ցանկանալ: Ակզմում Աղեքսանդրի խօսքերը չը ներգործեցին նրա զօրապետների ու սպաների վերայ: Նրանք լսել անդամ չէին ուզում արշաւանքի շարունակութեան

մասին։ Մի այդպիսի ընդդիմութեան հանդիպելը Աղէքսանդրի համար նորութիւն էր։ Նրա վերայ վհատութիւն եկաւ, նա փափուեց իւր վրանում և ոչ ոքի չէր ընդունում։ Բայց երբորդ օրը երբ տեսաւ, որ զինուորներն էլ համակարծիք էին իրանց մեծաւորներին, այն ժամանակ նա հրամայեց աստուածներին զոհ մատուցանել, որ նրանց կարծիքն իմանայ։ Նախագուշակութիւնները վատ դուրս եկան, և բոլոր մեծամեծներին իւր վրանը հաւաքելով, Աղէքսանդրը յայտաբարեց նրանց, որ յետ կը դնայ։ Զօրքերի հիացմունքը այնքան մեծ էր, որ նրանք բարձրաձայն «օրհնաբանում» էին Աղէքսանդրին, որ դիտեցաւ իրանընկճուած ճանաչել։

Նա իւր արշաւանքների արևելեան ամենավերջին ծայրում 12 բարձր զոհաբաններ կանգնացրեց, սովորական, մարմամարզական խաղեր կարգեց և վերադարձաւ դեպի Գիդասպ, ուր հասաւ 326 թուի սեպտեմբերին։ Արդէն պատրաստ էր մօտ 2000 նաւ, նրանց թուում 80 հատ 30-թիւնի նաւակներ։ Այդ նաւատորմին ծովապետ կարգեց կրետացի Նէարխին, իսկ արքայական մարտանաւի ղեկավար—0նեղիկիտին։ Այդ երկու ծովագնացները անմահացրին իրանց անունները նկարագրելով Աղէքսանդրի արշաւանքը։

Սովորական զոհաբերութիւններից մի ամիս յետոյ, այդ նաւատորմը հանդիսաւորութեամբ Գիդասպով ցած լողաց։ Հասաւ Աղէքսանդրի արշաւանքների վերջը, և բոլորը յոյս ունէին, որ խաղաղ ժամանակներ են սկսուելու։ Մակեդոնացոց հերոսը արքայական մարտանաւի ցոռվին կանգնած սոկեայ բաժակից զինչ էր թափում գետը, վերջինիս պատուին։ Իսկ յետոյ, դարձեալ մի քանի բաժակ Հերքուլէսի, Ամմնի և իւր սիրած աստուածների պատուին։ Գետի ափերը լցուած էին տեղացի խմբերով, որոնց վերայ խիստ ազդում էր այդ նաւատորմի հանդիսաւոր գնացքի վիպական կազմը և նրանք հետևում էին Աղէքսանդրին երգերով և պարերով։

Նաւերի վերայ զետեղուած էին մակեդոնական բանակի ամենաընտիր մասերը, իսկ մնացած բազմութիւնը երեք առանձին գունդ՝ կազմած ափերով էր գնում։ Ոչ նրանք և ոչ նաւատորմը լուրջ ընդդիմութեան չը հանդիպեցին մինչև մալլերի, փոքր, բայց զինուորական ցեղի հողին հասնելը։ Այդտեղ Աղէքսանդրը ստիպուած եղաւ ափ գուրս գալ և յարձակուել նրանց ամուր քաղաքի վերայ, որ նոյնպէս Մալլի էր կոչում, այժմ Մուլտան։ Հնդկաստանի այս անյայտ անկիւնում կատարուած ոզբերգութիւնը քիչ էր մնում համաշխարհային ինքնակալի կեանքն արժենար։

Աղէքսանդրը համարձակութեամբ սուխնայարձակ եղաւ քաղաքի վերայ և կատրելով գոները քաղաք մտաւ, բայց բնակիչները թաք էին կացել բարձր և խիստ ամուր պարիսպներով շրջապատուած միջնաբերդում և պարիսպների վերայից՝ պաշարողների գլխին նետեր, տէղեր ու քարեր էին տեղում։ Երիտասարդ հերոսի արիւնը եռ եկաւ, նա յարձակման համար պատրաստած սանդուղներից մէկը բռնելով՝ անձամբ պատին մօտեցրեց, և առաջինը ինքը վերև բարձրացաւ։ Նրան հետևեցին երեք հաւատարիմ ծեր զօրականներ։ Նրանց ետելից աստիճանների վերայ սկսեցին բարձրանալ և միւսները. բայց ծանրութեան տակ ճնշուած սանդուղը կրտսուեց և նրա հետ միասին վայր գլուխեցին բոլոր զինուորները բացի Աղէքսանդրից և նրա երեք ընկերներից, որոնք յաղթական կերպով կանգնել էին պարսպի վերայ։ Մակեդոնացիներից հարիւրաւոր ձայններ աղաղակում էին նրան ու կանչում։ Որ ցած իջնի. բայց նա, նոյն իսկ, յետ էլ չը նայեց, պատից թռաւ թշնամիներով վիստացող միջնաբերդը։ Այդ մի անմիտ վարմանք էր. բայց այդպէս էր Աղէքսանդրը։ Եւ նա յաղթաւմ էր միշտ այն պատճառով որ ամեն ժամանակ ամենավանդաւոր տեղերումն էր գտնուած և, որ, նրա ամբողջ զօրքը երբեք չը տեսաւ, գէթ մի բոպէ, որ նա աստանդուէր կամ յետ նահանջէր։

Երեք ընկերները հետևեցին Աղեքսանդրին, և նրանք ստիպուած էին անհաւասար կոփւ մզել ամբոխի հետ, որը շրջապատել էր նրանց երեք կողմից և նետերի, տէգերի ու քարերի տարափ էր տեղում նրանց վերայ: Մակեդոն ու քարերի տարափ էր տեղում նրանց վերայ:

Նվոթութիւնն ու յուսահատութիւնը տիրել էր միջնարերդի պատերից դուրս գտնուած մակեդոնացիներին: Մի քանիսը յարձակուեցին սանդուխքների վերայ, միւսները ամենայն ուժով որերով խփում էին դռներին, երրորդները սկսել էին նետերը պատերի մէջ խրել և նրանց վերայով բարձրանալ, չորրորդները մադլցում էին, մէկը միւսի վերայով, Վերջի վերջոյ պաշարողների խումբը պատերի վերայ բարձրացաւ, որ աղատէ իւր պախումը պատերի վերայ բարձրացաւ, որ աղատէ իւր պախումը չէին խնայում, ոչ ծերերին, ոչ կանաց և ոչ երեխաներին:

Աղեքսանդրին դրին վահանի վերայ և տարան վրանը: Նա մի քանի անդամ էր վիրաւորուել, բայց նրա զինւորները երբեք չէին տեսել իրանց զօրապետին անդգայ դրութեան մէջ: Իսկոյն լուր տարածուեց, որ նա մեռել է: Իսկ այդ ժամանակ վրանում ամեն կերպ աշխատում էր նետերը նետեր նրա մարմից դուրս հանել, բայց այդ համարեա անկարելի էր: Նետեր դուրս մնացած ծայրը սղութեցին, հանեցին նրա վերայից լանջապահնակը, բայց այցեցին, հանեցին նրա վերայից լանջապահնակը, բայց այցեցին, հանեցին նրա վերայից լանջապահնակը, բայց այցեցին, նուամենայնիւ նետը կախ էր ընկած վերքից: Վերջապէս,

Աղեքսանդրը ուշքի եկաւ և ինքն աշխատում էր ձեռքով լայնացնել իւր վերքը, բայց ուժերը նրան դաւաճանեցին. և նրա խնդրանօք Պերդիկը սրով կտրեց մարմնից դուրս մնացած նետի մասը: Վիրաւորուածը նորից անզգայացաւ, բայց արիւնը դադարեց հոսել: Մի ամբողջ օր ու գիշեր Աղեքսանդրը կեանքի և մահուան մէջ էր: Ընկերները նրանից չէին հեռանում, իսկ գունդը ամբողջ ժամանակ ստի վերայ կանգնած՝ օրհասական համբաւին էր սպասում: Միայն արշալուսին Աղեքսանդրը քնեց, և բոլորը հանդարտեցին:

Մակայն Մալից 4 օրուայ ճանապարհ հեռու, Դիդասպի ափում բանակ դրած զօրքին լուր էր հասել, թէ թագաւորը մեռել է: Սկզբում ընդհանուր լաց բարձրացաւ, և յետոյ սկսուեց յուսահատութիւնը: Բացի Աղեքսանդրից ով կարող էր բանակը օտարութիւնից դուրս հանել ու հայրենիք տանել: Բոլոր զինւորների և սպաների վերայ այնպիսի սարսափ էր ընկել, որ երբ Աղեքսանդրի առողջանալու լուրը ստացուեց՝ ոչ ոք չէր ուզում դրան հաւատալ, և զինւորները մեղադրում էին զօրապետներին՝ թէ նրանք կամենում են իշխել նրա անունով: Այդ իմանալով Աղեքսանդրը ինքը, երկիւղ կըրելով ապստամբութիւնից, հրամայեց իրան մի գալերի վերայ տեղափոխել, և նրանով դեան ի վայր ընթանալով՝ անցաւ իւր նաւատորմի և բանակի մօտից: Իրանց զօրապետին տախտակամածի վերայ պարկած տեսնելով զինւորները սկզբում կարծեցին թէ նա մեռած է, բայց երբ Աղեքսանդրը ողջունելու նպատակով ձեռքը մեկնեց գէպի իւր զօրականները՝ այն ժամանակ Արքիանի խօսքերով, ուրախական բարձր աղաղակներ լսուեցին: Յետոյ գալերը ափին մօտ եկաւ և Աղեքսանդրը ոչ միայն իւր օթեակից իջաւ, այլ և ձի նստեց ու բանակ գնաց. այդ ժամանակ հիացմունքներին վերջ ըլ կար: Շատերը արտասաւում էին, մերձենում էին նրա հանդերձին, նրա վերայ ծաղիկներ էին ձգում և անդադար ծափահարում:

Վերջապէս Աղէքսանդրը ինդոս հասաւ, և այնտեղ,
ուր գալերը մտաւ մեծ գետը՝ նա քաղաք հիմնեց, և մի
քանի մատենագիրների վկայութեամբ Աղէքսանդրիա
անուանեց։ Մի քիչ գէպի հարաւ՝ նա բաժանուեց իւր
քանակի մի երրորդ մասից, որին ուղիղ ճանապարհով
քախողիայի և Դրանգիանի վերայով Բաբելոն ուղարկեց։
Մի ինքը մնացած զօրքի հետ շարունակեց ծովային
ժամանակը, ցանկանալով անձամբ գտնել ճանապարհը
ովկիանոսի վերայով։ 325 թուի ամուռ նա հասաւ
Պատալ, այժմեան Հիգերապատ։ Այդպիսով Աղէքսանդրը
8—9 ամիս գործ գրեց ինդոսի վերայով մինչև նրա Դել-
տան իջնելը։ Այդտեղ նա հրամայեց հիմնել մի բաւական
ամուռ նաւահանգիստ և, ինչպէս Արքիանն է պատմում,
առաջին անգամ ժանօթացաւ ծովային մակընթացութեան
և տեղատութեան հետ։ որովհետև Միջերկրական ծովի
վերայ այդ համարեա աննկատելի է։

Սեպտեմբերին Աղէքսանդրը ձեռնարկեց իւր վերջին
և ամենավտանգաւոր արշաւանքը։ Նա յանձնեց նէարխին
յաջող քամու սպասել, և նաւատորմն ու բանակի մի
մասը ջրով Պարսից ծոցն անցկացնել։ իսկ ինքը 25,000
մարդ հետն առած, —չոր ճանապարհով, ծովի երկարու-
թեամբ, Հիգրողիայի անապատով— գնաց Բաբելոն։ Այդ-
60 օրեայ արշաւանքը արևելիք աւազների միջով, առանց
ամենափոքր բուսականութեան և ջրի աղբիւրների, նրա
զուգին ամենատեսակ զրկանքների ենթարկեց։ Սովոր
գորքին այն աստիճան էր տանջում նրանց, որ անյայ-
ծարաւը այն աստիճան էր տանջում նրանց, որ անյայ-
տացաւ ամեն կարգապահութիւն և զինուորները ձիերին
սպանում էին, որ նրանց իբրև կերակուր գործ ածեն։
Բայց Աղէքսանդրը իւր զօրքից պակաս չէր տանջում.
մի անդամ զինուորներից մէկը, մի տեղում կիսացա-
երը մի անդամ զինուորներից մէկը, մի տեղում կիսացա-
երը ջրի աղբիւր գտաւ, իւր սաղաւարտով ջուր բերեց
թագաւորին։ Աղէքսանդրը ջուրը գետին թափեց, առելով.
ամենի համար—քիչ է, իսկ մենակ ինձ համար—չափա-
ռամենի համար—քիչ է, իսկ մենակ ինձ համար—չափա-

ռազիսը հասան, բայց ճանապարհին բանակի կէուը ոչնչա-
ցել էր, իսկ մնացածը ներկայացնում էր սոված, կիսա-
մերկ մարդկանց մի անկարգ բազմութիւն։

Մի քանի օրից յետոյ Աղէքսանդրը մտաւ Կարմա-
նիայի հարուստ, պտղաւէտ երկիրը. միացաւ այնտեղ
կրտսերի զօրքի հետ, որ շատ աւելի վաղ էր թողել
ինդոսը և, սովորութեան համաձայն, իրանց այնքան վը-
տանգներից փրկող աստուածների պատուին իւր զօրքի
համար մարմնազական խաղեր կարգեց։

Այժմեան Բենդեր-Աբասում նէարխին յանձնած նա-
ւատորմին սպասելով՝ Պարսից ծոցի մուտքի մօտ Աղէք-
սանդրը թեթև հեծելազօրով առաջ շարժուեց և վերջա-
պէս 324 թուի յունուարին հասաւ Պերսեպոլիս, որտեղից
վեց տարի առաջ գուրս էր եկել իւր անվերջ արշաւանք-
ները սկսելու։

Իւր երկարատես բացակայութեան ժամանակ, իւր
կարգած կառավարութեան մեքենայի շատ անիւներ թու-
լացել էին։ Յակարիայում ապստամբութիւն էր ծագել։
Միգիայի Զինուորական պետերը, ոտնահար անելով տե-
ղացիների քաղաքական իրաւունքներն ու կրօնական հա-
ւատավիքը՝ ընդհանուր անբաւականութիւն էին յարուցել.
արեմտեան սատրապները ահագին քանակութեամբ վարձ-
կաններ ձեռք բերելով անկախ թագաւորների դեր էին
խաղում։ Յունաստանն ու Մակեդոնիան անհանգիստ էին։
Աղէքսանդրի մայր Ոլիմպիան անդադար անախորժու-
թիւններ էր պատճառել Անտիպատրոս ծերունի, հաւա-
տարիմ փոխարքային։ Վերջապէս, արքունի գանձարանի
մեծը, Գարպալը, որ մի քանի տարիների ընթացքում գո-
զութիւններ էր արել գանձարանում։ խոռվայոյզ, անառակ
կեանք էր վարել և ազատուել պատասխանատութեան
ենթարկուելու ամեն փորձից, թագաւորի վերադարձը
լսելով փախաւ Յունաստան ահագին քանակութեամբ
դրամ յափշտակելով և կեղաստ կասկածներ բարդելով քա-
զաքական գործիչների, ի միջի այլոց, Դեմոսթենէսի վերայ։

Բնակուելով Պարսից Շօշ մայրաքաղաքում, Աղեքս
սանդրը սկսեց եռանդով չարագործութիւնները ոչնչացնել,
մեղաւորներին պատժել, և անհնորհ կառավարիչներին
փոխել: Նա խիստ էր վարւում, բայց արդարացիւ Որպէս
քաղաքական կազմակերպող՝ նա արտայայտում էր գործունեայ մարդու բոլոր առանձնայատկութիւնները: Նա
անխղճօրէն պատժում էր իւր վստահութիւնը ի չարը գործ
գնողներին. ամեն տեղ, ուր միայն անկարգութիւն էր
տեսնում: արմատական փոփոխութիւններ էր մոցնում:
Ընդհանրապէս նա ամեն բանի մէջ գործնական մարդու
պէս էր վարւում: Հին հաստատութիւնները, եթէ նրանք
կարող էին օգուտ բերել՝ նա պահպանում էր, և առհա-
սարակ ոչնչացնում էր միայն այն՝ ինչ որ հարկաւոր էր
անպատճառ ոչնչացնել: Նոր տարրեր էր պատուաստում
պարսից կայսերութեան հին մեքենային, որ, այնուամե-
նայնիւ, արժանի էր ուշադրութեան. որովհետեւ իւր եր-
կարատե բացակայութեան միջոցին լաւ թէ վատ, բայց
պետական մեքենան շարունակել էր գործել:

Հին նահանգները կամ սատրապութիւնները և տե-
ղական հարստութիւնները առանձին երկրներում պահեց
նա նախկին ձեռվէ Զինուորական իշխանութիւնը, իւրա-
քանչիւր նահանգում կենարնացած էր գլխաւոր հրա-
մանատարի ձեռքում, որը թագաւորի առաջ պատասխա-
նատու էր: Պարսից կառավարչական սիստեմին պատուաս-
տեց յունական քաղաքային ինքնավարութիւնը: Քաղա-
քային կեանքի այս զարգացումը սահմանափակում էր
սատրապների բռնակալութիւնը և թոյլ չէր տալիս նրանց
չափազանց ինքնուրոյնութիւն ձեռք բերել՝ ինչպէս էր
այդ Դարեհի ժամանակը: Այդպիսով խառնուեցին երկու
հասկացողութիւնները՝ արևելեան գաղափարը, թէ տէ-
րութիւնն է հրամայում ամենքին, և յունական սկզբ-
քունքը՝ ինքնավարութիւնը:

ԺԱ.

Աղեքսանդրի մահի.

324 Թուի մարտին Շօշում էին ոչ միայն Աղեքս
սանդրը, այլ և Հեփեստիոնը մնացած գնդերով: Տիրա-
պետութիւնների և յաղթութիւնների մեծ օրերը վեր-
ջացել էին:

Ուղիղ տաս տարի գրանից առաջ քսանամեայ պա-
տանի Աղեքսանդրը Հելլեսպոնտոսն անցաւ և Ասիա մտաւ-
նա հօրից իբրև ժառանգութիւն էր ստացել յոյների
միացում՝ մակեդոնական իշխանութեան տակ և պարսիկ-
ների դէմ պատերազմ՝ վարելը՝ յոյների վրէժը լուծելու
համար: Այդ ծրագրին նա տուեց արեւմտքի և արեւելքի
միջև կուտի գաղափարական բնաւորութիւն, միանգամայն
և երևակայելով իրան որպէս մի նոր Արքիլէս:

Բատ երեսութիւն, իւր յաղթութիւնների և տիրապե-
տութիւնների հետեանքը սկզբում իւր առաջ ազոտ կեր-
պով էր տեսնում նա: Հազիւ թէ աւելի բան ունենար
աչքի առաջ, քան Քսերքսէսի՝ դէպի Յունաստան արշա-
ւելու վրէժն առնելը, Մակեդոնիան փառաւորեցնելը, և
իւր մեծագործութեանց ծարաւը յագեցնելը: Բայց տա-
րիների ընթացքում և նոր հանգամանքների շնորհիւ նրա
գաղափարներն ընդարձակուեցին, և նա յարգանքով վե-
րաբերուեց դէպի արևելեան Ասիայի շատ բնորոշումները:
Բանից գուրս էր գալիս, որ շատ բան էր թաքցրել աշ-
խարհը իւր մէջ, որոնց գոյութեան մասին նա ենթագրել
չէր կարող: Աղեքսանդրը ծանօթացաւ Միջագետքի ար-
գիւնաբերող ոյժերի հետ, իսկ Բակտրիայի մարդիկն ոյն-
քան քաջ երևացին նրան՝ որքան Յունաստանինը: Նեղոսի
Դելտան ներկայացնում էր զանազան ցեղերի և քաղա-
քակրթութիւնների կենտրոն, ցեղերի՝ որոնք խաղաղ

կերպով վարում էին ընդհանուր կոօպերատիւ կեանք։ Այսկամուտքը արևելքի հետ մի ընդհանուր քաղաքակրթութեամբ միացնելու միաքը սկսել էր հետզհետէ նրա մէջ տիրապետել։

Բայց հին մակեդոնացիք խիստ հաստատ էին նրա աշխարհակալութիւնների սկզբնական ծրագրին, որը հիմնուած էր «յաղթողներին—աւար» սկզբունքի վերայ։ Նրանք պատերազմը ձեռնարկել էին մակեդոնական տէրրիտորիան մեծացնելու և նուաճուած երկիները շահագործելու նպատակով։ Նրանց հայեացքները ոչ մի կերպ չէին կարողանում Աղէքսանդրի նոր ձգտումներին ենթարկուել. ուստի նրանց կողմից, ինչպէս տեսանք, յառաջ եկան 330—327 թուերին բողոքներ ու դժգոհութիւններ։ Նրանք նրա կոսմոպոլիտութիւնը հայրենիքի գաւաճանութիւն էին համարում և անկարող էին հասկանալ, որ աշխարհականութիւնը ներքին զարգացման փոխող նրա հայեացքի ընդարձակութեան առաջ Մակեդոնիայի շահերը յետին տեղ էին բռնում, և Մակեդոնիան դառնում էր ահագին կայսերութեան մի նահանգ։ Նրա անունով և նրա զինւորական ոյժի օդնութեամբ կառավարուած և պահպանուած էր այդ կայսրութիւնը. բայց Մակեդոնիան, ինքն ըստ ինքեան, էլ նպատակ չէր, այլ մի միայն դործիք՝ միշտային քաղաքակրթութեան զարգացման և ցեղային նախապաշարմունքների ոչնչացման համար։ Աղէքսանդրը Արիստոտելից այն տէօրիային էր վարժուել, թէ յօյնը, իւր բարձր մտքի շնորհիւ, բարբարոսների բնական հրամանաւարն էր. բայց նա փորձով տեսաւ, որ այդ տեսութիւնը ճիշտ չէ, և նա այդ փոխարինեց գեմոկրատիական գաղափարներով, թէ և իւր բարձրագոյն իշխանութեան հոգ վանու տակ։ Իւր կապն Արիստոտէլից խզելով, դրա հետ միասին նա աղատուեց և հին աշխարհի կապանքից։ Տամանեայ աշխարհակալութիւնները այն ժամանակուայ յայտնի աշխարհի կեանքի, մտքի և օրէնքի բոլոր առանձին երևոյթներին չնորհեցին մի հսկայական կաղմակեր-

պութիւն որ ոչ թէ արտաքուստ էր ներմուծուած նրա կաղմի մէջ մտնող տարրերից միայն մէկի ձեռքով, այլ յառաջ էր եկել բոլոր տարրերի ներքին ձուլմամբ։

Ոչ այնքան զինուորական հանճարի, որքան այդ գաղափարի զարգացման մէջ էր տեսնեաւմ Աղէքսանդրի մատուցած ծառայութիւնը, որը իրաւունք է տալիս նրան յիրաւի մեծ կոչուելու։ Նրա յաղթութիւնների հետեւանքները շուտով անհետացան, նրա կայսերութեան արտաքին կազմակերպութիւնը նրա հետ միասին կորաւ. բայց Աղէքսանդրի մեծ գաղափարը նրանից աւելի ապրեց և պտուղ բերեց։ Հոռոմը իւրացրեց նրա գաղափարի կեցեր, իսկ Բիւզանդիան և արևելքը պահպանեցին նրա միջուկը, այնպէս որ ներկայ աշխարհը նրան է պարտական ինչպէս վերածնութեան՝ նոյնպէս և բարեփոխուութեան շրջանները առողջ իւր համաշխարհային գաղափարների և սերմերի տարածմամբ։

Աշխարհակալութիւնների շրջանը պատշաճաւոր կերպով լրացնելու համար Աղէքսանդրը իւր զօրքի համար ծօշում հնդօրեայ տօնախմբութիւն սարքեց, որին տուեցնա մի ձե, որը և նրա առաջ պատկերացնում էր իւր պատերազմների հետեւանքը—այն է արևելքի ամուսնութիւնը արևելքի հետ։ Տարօրինակ էին այդ աշխարհակալութիւնների, պէտք էր տարօրինակ կերպով էլ նրանց տօնել։ Նա ինքը և նրա զօրապետներից ու ընկերներից քսան և ինն հոգի կին առան պարսից աղնուական ընտանիքների ներկայացուցուհիներից և նրանց պսակը ի պատիւ Դիոնիսի՝ մի օրում փառաւոր հանդիսով կատարուեց։ Պլուտարքոսը ծաղկեցրած ոճերով մինչև երկինք է բարձրացնում պսակագրութեան հանդէսների խորհրդաւոր նշանակութիւնը, «որը միացրեց Ասփան եւրոպայի հետ ոչ թէ փայտերով և լաստերով՝ ինչպէս Քաերքսէսի կամուրջն էր, այլ օրինական սիրով»։ Ինքը Աղէքսանդրը Դարեհի մեծ դուստր Ստալերայի հետ ամուսնացաւ, Հեփեստիոնը՝ կրտսեր դստեր հետ, Կրտսերը Դարեհի

ազգականուհու հետ, Պերգիկը՝ մեղացոց սատրապի դստեր հետ, Պտղոմէոսը և Եւմէնը՝ Արտաբաղի երկու դուստրը՝ ների հետ, Նէարիսը՝ Մենաորի դստեր հետ, իսկ Սելև կէսը՝ Սպիտամինի դստեր հետ:

Բարեբաղդաբար այդ պատմական տօնախմբութեան նկարագրութիւնը մնացել է:

«Մի դահլիճ էր պատրաստած հարիւր օթեակներով՝ օթեակները դաստուլուած էին երկու սեղանների երկու կողմերը՝ Խրաքանչիւր օթեակ զարդարուած էր շքեղ կերպով, և նրա վերայ կարող էին բազմել երկ-երկու հոգին՝ Աղէքսանդրի օթեակն ունէր ոսկեայ ոտներ։ Այդ խնջոյքին հրաւիրել էր Աղէքսանդրը իւր բոլոր պարսիկ բարեկամներին, բայց նրանց համար դահլիճի դիմացի կողմում առանձին տեղեր էին յատկացուած։ Դահլիճի շուրջը խմբուած էին զօրականները, ծովագնացները, օտարերկրեայ գեսպանները ու բոլոր այցելուները։ Դահլիճը ինքը ներքուստ շքեղ կերպով զարդարուած էր թանկագին գորգերով և ոսկեճամուկ մանուածքներով։ Առաստաղը հաստատուած էր արծաթով, ոսկով և թանկագին քարերով շնդելուզուած 30 սիւների վերայ։ Կողքերից կախուած էին ոսկեայ և արծաթեայ քիւերի, կարնէզների վերայով թանկագին ոսկեհուռ վարագոյներ։ Դահլիճը քառորդ վերստ շրջապատ ունէր։ Խնչպէս տօնախմբութեան սկիզբը, այնպէս և պսակադրութեան ծիսի կատարումն ու բազմաթիւ կենացների առաջարկութիւնը փողի ռումն ու բազմաթիւ կենացների առաջարկութիւնը փողի ձայնով էր արտայայտում խնջոյքում։ այնպէս որ ամբողջ զօրքը իմանում էր այդ։ Պատի տօնախմբութիւնը հինգ զօրքը իմանում էր այդ։ Պատի տօնախմբութիւնը էին շատ յոյներ և բարօր տեղեց։ Այդտեղ մասնակցում էին շատ յոյներ և բարօրուներ, որոնց թւում հնդկացիք։ Յայտնի խեղկատակներն ու գերասանները ցոյց էին տալիս իրանց հմտութիւնը. նրանց թւում և Միտիւնա կղղեցի՝ Հերակլիդը թիւնը. նրանց թւում և Միտիւնա կղղեցի՝ Հերակլիդը թիւնը.

Քէսօ կղղեցի Աթենոդորը։ Սրնդի ձայնակցութեամբ երգում էին հերակլեցի Դիոնիսը և կիղիկացի Գիպերոնը։ Ֆլէյտի ձայնով պարում էին Տիմոթէոսը, Փրինիկը, Կաֆիսը և Դիօփանդը։ Վերջապէս խաղացին թեսաղիոն, Աթենոդորոս և Արիստոկրիտ ողբերգական գերասանները և նոյնպէս Լիկոն, Ֆորմիոն և Արիստոն կատակերգուները։

Արրիանը իւր կողմից աւելացնում է։ «Պակագրութիւնը պարսից սովորութեամբ կատարուեց։ Փեսացուների համար պատրաստուած էին մի կարգ զարդարուն գահաւորակներ, և խնճոյքից յետոյ հարսնացուները դահլիճ մտան ու տեղ բռնեցին իրանց ամուսինների կողքին։ որոնք ողջունեցին նրանց համբոյըներով։ Առաջինը թագաւորը նշան տուեց, և ամենքը հետեւեցին նրան։ Աղէքսանդրը գեռ երբէք չէր կատարել մի այնպիսի բարի և ժողովրդական գործ, ինչպէս էջ այդ տօնախմբութիւնը։ Ամուսիններից իւրաքանչիւրը յետոյ վերցրեց իւր կնոջը և գնաց իւր տուն։ Աղէքսանդրը բոլոր հարսնացուներին օժիտ տուեց։ Ընդհանրապէս ասիացուհիների հետ պսակւող մակեդոնացոց թիւը 10,000-ի էր հասնում, և Աղէքսանդրը նրանցից իւրաքանչիւրին հարսնանեկան ընծաներուղարկեց։ Հարսնանեկան հանդէսներից յետոյ յայտարարուեց՝ որ պարտք ունեցող զօրականները որոշէին իրանց պարագի քանակութիւնը. գանձարանը իւր վերայ էր առնում նրանց վճարումը։ Սկզբում ոչ ոք չէր հաւատում այդ բարի լրին. զինւորները կարծում էին, թէ իրանց կամենում են թակարդի մէջ ձգել, որ իմանանթէ իրանք որքան են զեղիս ապրում։ Երբ Աղէքսանդրը այդ լուրն առաւ՝ զինւորներին յանդիմանեց դէպի թագաւորն ունեցած անվստահութեան համար, և գանձապահներին հրամայեց ապացուցաթղթերի համեմատ պարտքերը վճարել առանց պարտապանների ցուցակը կազմելու։ Այդպիսով, մինչեւ 20,000 տաղանդ բաժանուեց։ Բացի այդ, յատուկ քաջութեամբ հոչակուած զինւորակացի պատասխանը կատարաւ

կաններին վարձատրութեան համար նշանաւոր դրամական գումարներ տրուեցին. իսկ քաջերից ամենաքաջերին ուսկեայ պատկներ բաժանուեցին: Այդ բարձր պարգևին արժանացան ամենից առաջ Մալի պաշարման ժամանակ իւր կեանք փրկող երկու հերոսները — ծովապետ Նէրիխն ու արքայական գալերի ղեկավար Օնեսիկուետը, և Աղեքսանդրի ընկեր Հեփեստիոնը:

Այժմ Աղեքսանդրին մնում էր իւր զօրքի ապագայ կազմակերպութեան ծանր հարցը վճռել: Թէ է հնդկական արշաւանքի ժամանակ յունա-մակեդոնական տարրը բանակի մէջ փոքրամասնութիւն էր կազմում, բայց նա, այսուամենայնիւ, Աղեքսանդրի զօրքերի ամենայուսալի ոյժն էր: Այդ զօրականների մէծ մասը ծերացել, յոդնել էր երկար ծառայութիւնից և չէր կարող այլ ևս կատարել իւր վերայ դրած պարտականութիւնները: Առնուածին 10,000 մարդ պէտք էր տուն ուղարկել: Ուստի հարց բարձրացաւ. նրանց տեղը յօյն-մակեդոնական զօրքեր բերել թէ ոչ: Բայց Աղեքսանդրի գաղափարներին չէր համապատասխանում նուածուած երկրները յաղթողների հետ հաշուեցնելու համար օտարերկրեայ բանակ պահելը: Պարսկաստանը Յունաստանի հետ անբաժան մի ամբողջութիւն ձուլելու նրա ծրագիրը կարող էր ուրիշ միջոցներով աւելի լաւ իրականանալ: Ուստի նա հրամայեց արևելեան զանազան նահանդներից և իւր նոր ստեղծած քաղաքներից ամենալաւ և ամենաեռանդուն պատանիներ հաւաքել, վարժեցրեց նրանց մակեդոնական ռազմագիտութեան, սպառազինեց մակեդոնական զէնքով, և այդ 30,000 նոր զինւորները բաժանեց իւր հին գնդերի մէջ:

Մակեդոնական հին զինւորները գայրացան: Նրանք լուռմ էին, երբ Աղեքսանդրը լրացնում էր իր զօրքը օտարերկրեայ զօրաբաժիններով, բայց նրանք վիրաւորանք համարեցին սրբազան փալանգի կարգերում, և մակեդոնական ընտիր այրուձիու շարքերում պարթեների, բակալարիացիների համաթւումն, որքան էլ վերջիններս քաջարիացիների համաթւումն:

Աղեքսանդր, թէ այդ ճանապարհով Աղեքսանդրը ուղղում էր հող պատրաստել յոյներին և մակեդոնացիներին բոլորովին հեռացնելու համար՝ մեծացրեց ընդհանուր անբաւականութիւնը. իսկ երբ լուր տարածուեց թէ հին զինւորները հայրենիք են ճանապարհ դրում՝ այդ ժամանակ Տիգրիս գետի վերայ Օպիս քաղաքում ամառը բանակ դրած զօրքի մէջ յայտնի ասլուամբութիւն բորբոքուեց: Աղեքսանդրի զօրքերի մէջ այդպիսի մի երեսիթ դեռ երբէք չէր պատահել, և նա վճռեց դրա առաջն խկոյն առնելք նա գէպի բանակ ուղեղուեց, իւր ամբողջ զօրքը կարգաւորեց ընդարձակ հովտում, ինքը մի բարձր տեղ կանգնեց և բարձր ձայնով հանդիսաւոր ճառ ասաց: Նրա խօսքերով, պատերազմները վերջացած են և հասել են արդէն մէծ նպատակին, որի համար տեղի էին ունենում պատերազմները: Զինւորներից շատերը յոդնած են ու վիրաւորուած և ցանկանում էին հայրենիք վերադառնեալ, ուստի և նա վճռել է նրանց տուն ուղարկել, այնպիսի թանկագին ընծաներով, որ նրանք ընդհանուր նախանձի առարկայ դառնային հայրենիքում: Նրա ճառը ընդհատուեց գոչիւնով և հետնական աղաղակներով. «Մենք լաւ էինք, երբ քեզ պէտք էինք, իսկ այժմ մեզ դուրս ես ձգում: Մենք ամենքս կը դնանք: Երկուսից մէկը ընտրիր, կամ բոլորիս, կամ ոչ ոքի: Կը տեսնենք բարսրուների և կանանց հետ ինչպէս աշխարհ կը տիրեա»:

Աղեքսանդրը չը համբերեց, իւր բարձր տեղից վայր թռւաւ, խառնակող զինւորների մէջն ընկաւ, նրանցից մի քանիսին բռնեց և հրամայեց բանտարկել: Մարտափը տիրեց ամենքին: Սակայն Աղեքսանդրը իւր նախկին տեղը դարձաւ և անվրդով ու խաղաղ՝ իւր ճառը շարունակեց:

«Ճեր խմբովին հայրենիք վերադառնալը ես ամենեւ ին չեմ էլ ցանկանում խանգարել: Գնացէք, ուր կամեն նում էք: Բայց ես գեռ մի քանի խօսք պարտաւոր եմ ասել ձեզ, իբրև ապացոյց այն բանին թէ դուք, մակեդոնացիք, ինչպէս ապերախտ էք դէպի այն մարդիկ:

սրոնք ձեզ համար մեծութիւն ստեղծեցին։ Իմ հայր Փիլիպպոսը երբ դահ բարձրացաւ՝ դուք դադանի մորթիւներ հագած մի թափառական ցեղ էիք և ձեր հարևան խլիւրացիների և թրակացիների դէմ ձեր անկախութեան համար կուտում էիք։ Նա սպառազինեց ձեզ, զինուորներ դարձեց, քաղաքներում բնակեցրեց, ձեզ օրէնքներ սուեց ու բարբանոսներին հրամայողներ կարգեց. միացրեց Թրակիան Մակեդոնիային, գտաւ Պանդէեան հանքերը և ձեր վաճառականութեան համար նաւահանգիստ ստեղծեց։ Նրա շնորհիւ դուք սկսեցիք հրամայել թեսալիային, որից քիչ առաջ այնքան վախենում էիք։ Նա փոկիացիներին նուաճեց և դէպի Յունաստան ձեր համար լայն ճանապարհ բաց արեց։ Աթէնքին հարկ վճարելու և թերային հպատակուելու տեղ, դուք այժմ թէ մէկ և թէ միւս քաղաքների բաղդն էք տնօրինում։ Հայրս Պելոպոնէս մտաւ, պարսիկների դէմ պատերազմում իրան յոյների առաջնորդ հրատարակեց և իւր անձից աւելի՝ ձեզ ու ձեր հայրենիքը փառաւորեց։ Ահա, թէ նա ինչ արաւ ձեր համար. նրա քաջադործութիւնները ինքն ըստ ինքեան մեծ են, բայց մերի հետ համեմատած, ոչինչ։ Իմ հօրիցս ես ժառանգութիւն եմ ստացել մի քանի արծաթեայ և սուկեայ լըլպանակներ. դանձարանում վաթառն տաղանդ կար և հինդ հարիւր տաղանդ էլ պարտք։ 800 տաղանդ էլ ես պարտք առայ, Հելլեսպոնտոսով պարսից դէմ դուրս տարայ ձեզ մի երկրից, ուր ապրելու միջոց չունէիք։ Գրանիկի մօտ յաղթեցի Թարեհի սատրապներին, Յոնիան, Էտոլիան, Երկու Փոխութիւնները ու Լիդիան ես նուաճեցի, բայց իմ յաղթութիւնների պտուղները ձեզ մնացին, Զեր ձեռքն անցան Եգիպտոսի և Կիւրենի հարստութիւնները. Սիրիան, Պաղեստինը և Միջադեմքը ձեր տիրապետութեան տակ մտան։ Բարելոնը, Բակարիան և Շօշը ձեզ են պատկանում. Պարսկաստանի, Հնդկաստանի և անդրծովիեան բոլոր երկրների դանձերը ձեր ոտների առաջ են դրուած։ Ձեր միջից դուրս են եկել

սատրապներ, զօրավարներ և գանձապահներ։ Իսկ ես, իմ բոլոր հոգսերի և աշխատանքի փոխարէն, բացի թագից և ծիրանի քղամիդից, ինչ եմ ստացել։ Ես իմ համար ոչինչ ձեռք չեմ բերել, և ոչ ոք չէ կարող մատնացոյց լինել, թէ ես դանձ պահած ունենամ իմ համար, բացի նրանից՝ որ էլի ձեր համար է որոշած։ Պանձն իմ ինչին է պէտք։ Ես ուտում եմ այնպէս, ինչպէս դուք էք ուտում և քնում այնպէս՝ ինչպէս դուք էք քնում։ Բացի այդ, ես գիտեմ, որ ձեզնից մի քանիսը ինձնից աւելի լաւ են ուտում։ Ես շատ անդամ գիշերը աչքերս չեմ կպցնում։ Ձեր երջանկութեան մասին եմ մտածում այն ժամանակ՝ երբ դուք հանգիստ քնում էք։ Կը համարձակուի՞ մէկը ձեզնից ասել, թէ ես ձեզնից պակաս զրկանք, չարչարանք և վտանգներ եմ տարել։ Առաջ եկէք, վերաւորուածներ, և ցոյց տուէք ձեր վէրքերը, իսկ ես ցոյց կը տամ իմը։ Իմ ամբողջ մարմնի վերայ առողջ տեղ չըկայ։ Ես վէրք եմ ստացել և՛ սրերից, և՛ նետերից, և՛ տէգերից։ Այդ ամենին ես ենթարկուել եմ առաջնորդելով ձեզ ցամաքային և ծովային ճանապարհներով, գետերի, լեռների և անապատների միջով դէպի աւաշը, փառքն ու յաղթութիւնը։ Ես ամուսին եմ վերցրել այնպիսի կանանցից, որպիսին և դուք, և ձեր որդիքը իմոնց աղգականն են լինելու։ Ես ազատեցի ձեզ պարտքից, չը հարցնելով, ինչու համար էիք արել այդ պարտքերը, թէեւ ստանում էիք մեծ ոռնիկ և ունենում անվերջ աւարներ։ Ուկեայ պսակներն անմահացրել են ձեր քաջութիւնը և իմ յարգանքը դէպի ձեզ։ Մեռածները զինուորական պատիւներով են թաղուել, որոնց գերեզմանի վերայ նրանց համար մահարձաններ են շինուած, իսկ հայրենիքում՝ նրանց համար բրոնզեայ արձաններ կանգնեցրած։ Նրանց որդիքը աղատուել են հարկից և պատուաւոր քաղաքացիութեան իրաւունքներով են օդաւում։ Իմ հրամանատարութեան տակ գտնուած բանակից ոչ մէկը իբրև փախստական չէ կորել։ Այժմ ես

կամենում էի ձեզնից նրանց՝ որոնք չեն կարող այլ ևս դիմուրական ծառայութիւնը շարունակել՝ տուն վերադարձնել, և ընդհանուրի նախանձի առարկայ անել նրանց։ Բայց դուք ամենքդ էլ կամենում էք գնալ, — դնացէք։ Գնացէք տուն և ասացէք ձեր հայրենակիցներին, թէ դուք ձգեցիք ձեր Աղէքսանդր թագաւորին նրա նուաճած օտար Երկրացիների մէջ։ Ասացէք նրանց, որ նա յաղթեց պարսիկներին, մեղացոց, ըսկարիացոց։ Նուաճեց Արախողեան և Դրանդիանան, հասաւ մինչև կասպին և Կաւկազը. անցաւ Օկն ու Տանայիսը և Խնդոսի վերայով հասաւ մեծ ծովի ափին։ Հիդրոսի մեծ անապատով անցաւ, այդ բոլորից յետոյ, երբ նա ձեզ նօշ բերեց, այն ժամանակ դուք ձգեցիք նորան։ Դուցէ ձեր հայրենակիցներն ու ձեր աստուածները ձեր այդ վարմունքը փառաւոր և լաւ կը դտնեն։ Հեռացէք աչքիցա»

Աղէքսանդրը այս ամելով շտապեց. գնաց իւր պալատը նրան հետևեցին միայն նրա ամենամօտիկ ընկերները։ Զօրքը չէր իմանում ինչ ասի, ինչպէս վարուի։ Անցաւ մի օր, երկու օր. Աղէքսանդրը պալատից չէր դուրս դալիս և ոչ ոքի չէր ընդունում։ Վերջապէս, երրորդ առաւոտը լուր տարածուեց, թէ բանակի մէջ պարսիկներ, մեղացիք զօրապետներ են նշանակուած, իսկ պարսկական գնդերը փոխարինելու են մակեդոնական փալանդներին և հեծելապնդին։ Զինւորները չը համբերեցին, գիւմեցին գէպի պալատը, զէնքերը գետին դրին և խնդրեցին, որ Աղէքսանդրը նրանց մօտ դուրս գայ, շնորհ անի նրանց։ Նա խղճաց նրանց վերայ և հաշտութիւնը նուիրագործուեց մի ուրախ խնջոյքով, ուր մակեդոնացիք նատել էին պարսիկների կողքին և խմում միւնոյն ըմպանակներից, իսկ յունական և պարսկական քրմերը աստուածների օրհնութիւնն էին կանչում բոլորի վերայ։ Այդպիսավ, էին մակեդոնացոց, իրանց ասածն անելու, վերջին փորձն էլ անյաջող անցաւ։ Աղէքսանդրը նորից վերջին պարմական տարաւ։ Տաս հազար մակեդոնացիների յաղթութիւն տարաւ։

յոյներ հայրենիք ուղարկուեցին, միանգամայն և իւրաքանչիւրին, բացի ոռնկից, որպէս պարգև, մի-մի արծաթեայ տաղանդ տրուեց։ Կրատերին յանձնուեց այդ զինւորներին Եւրոպա տանելը և Մակեդոնիայի Թրակիայի ու Տիւրոսի փոխարքայի պաշտօնով Անտիպատրոսին յաջորդելը։ Իսկ Անտիպատրոսը պէտք է նոր զօրքեր տեղափոխէր Ասիա։ Հին զօրքերը նորերով փոխարինելը չէր կարող չօժանդակել համամարդկային գաղափարների տարածման։

Օպիսից Աղէքսանդրն Եկբատան ուղերուեց, ուր նրա Հեփեստիսն ընկերը հիւանդացաւ, մեռաւ և թաղուեց մի այնպիսի սուով ինչպէս Արբիլէսը հողին էր յանձնել Պատրոկլէսին։ Զեռը նա զբաղուեց հարեան լեռնային ցեղերը խաղաղեցնելով, իսկ 323 թուին գարնանը Բարելսն մտաւ, թէև քաղդիկացի մոգերը նախագուշակել էին, որ այդ քաղաքում նրան գծբաղդութիւն է հանդիպելու։ Այնտեղ նրան գեսպանութիւններ էին սպասում հեռաւոր ժողովուրդներից — Լիբիացիներից, Լուկանացիներից և Էտրուսներից — որոնք ծայրագոյն արևմըսուքում լսել էին նրա համաշխարհային կայսերութիւն հիմնելու մասին։ Նոյնպէս և շատ յունական քաղաքներ, իրանց ներկայացուցիչների ձեռքով, նրան մեծարանք և պարգևներ էին ուղարկել։

Աղէքսանդրը Բաբելոնում նուիրուեց եռանդուն գործունէութեան՝ ուղմագիտութեան մէջ արմատական փոփոխութիւն մացնելով, Բաբելոնի շուրջը գտնուզ ճահիճները չորացնելու ծրագիր կազմելով և դէպի Արաբիա արշաւանքի պատրաստութիւն տեսնելով։ Դեռ առաջուց Հերակլիդին Վրկանք էր ուղարկել, հրամայելով նաւատորմ պատրաստել և այժմեան կասպից ծովը մանրամասն կերպով ուսումնականիրել։ Այդ վերջին ծրագիրը, կարծես, վերանորոգում էր հիւսիսային սկիւթացոց նուածելու և կայսերութեան հիւսիսային սահմաններն ապահովելու իւր նախկին մտագրութիւնը։

Մայիսի վերջերում նաւատորմն ու բանակը պատշ

բաստ էին Արաբիա արշաւելու համար, բայց յունիսի 2-ին առաւտօտեանը Աղէքսանդրը հիւանդացաւ։ Դրանից առաջ երկու գիշեր նա խնջոյքումն էր անցկացրել և, շատ ուշ վերադառնալով՝ նախընթաց երեկոյեանը իրան արդէն հիւանդ էր զգացել։ Զը կամենալով առաւտօտեան զոհաբերութիւնը բաց ժողնել՝ նա հրամայեց մահճակալով տանել իրան զոհարանի մօտ, և ամբողջ օրը նա պալատի մեծ դահլիճում պարկած անցկացրեց, բայց, այնուամենայնիւ, աւագներին ընդունում էր և կարգադրում՝ որ յունիսի 6-ին դուրս գայ. որովհետև ինքն էլ կամենում էր արշաւանքին ուղեկցել։ Երեկոյեան նաւակ նստած՝ գետի վերայով գնաց հիւսիսային ափում գտնուող արքայական պարտէզները և այնտեղ անցկացրեց գիշերը, նախապէս լողանալով։ Հետեւեալ օրը նա նորից լողացաւ, զոհ արեց և իւր ընկերներից մէկի հետ, մի քիչ վեգ խաղաց. Բայտ երեւութիւն, նա իրան աւելի լաւ էր զգում, բայց այդ միայն ինքնախարէութիւն էր։ Նա բարելոնեան ճահճային տենդ էր ստացել և այն՝ նոյն իսկ գիշերը։

Յունիսի 8-ին հիւանդութիւնը վատ կերպարանք ընդունեց։ Աղէքսանդրը երկու օր էր արդէն ինչ դադարել էր լողանալուց և զոհ մատուցանելուց։ Ընկերներին նա հանաչում էր, բայց հետները խօսել չէր կարողանում։ Զօրապետները նրա ննջարանին կից դահլիճից դուրս չէին դալիս, իսկ զինւորները խմբուած էին պալատի շուրջը։ Թէև պահպանուել են նրա հիւանդութեան ընթացքի մասին ամենամանրամասն տեղեկութիւններ, բայց յայտնի չէ, թէ թժիշկներն ինչպէս էին նրան բժշկում։

Նա քանի գնում՝ աւելի և աւելի վատանում էր. յունիսի 12-ին զինւորների մէջ լուր տարածուեց, որ նա մեռել է, և նրանք շրջապատեցին պալատը պահանջելով՝ որ ցոյց տան թագաւորին, կենդանի կամ մեռած. Ոչ մի խրատ, ոչ մի աղերսանք չը կարողացան նրանց համարել. նրանք ուժով խուժեցին պալատը և համոզուելով՝ որ Աղէքսանդրը գեռ կենդանի է, այնուամենայնիւ, պըն-

դեցին, որ նրան մի անդամ էլ տեսնեն։ Կոպիտ զինւորները լուռ, անմռունչ և անշշուկ մէկը միւսի ետեւից անցնում էին մեռնողի առաջով։ Այդ սրտաշարժ գնացը ընթացաւ լիս, Աղէքսանդրը գլուխը բարձրացրեց, պարզեց ձեռքն և, անխօս հայեացըով, հրաժեշտի ողջոյն տուեց իւր քաջ ընկերներին։

Հետեւեալ երեկոյեան, 323 թուին, իւր թագաւորութեան 13 րդ տարում Աղէքսանդրը մեռաւ 32 տարեկան 8 ամսական հասակում։ Նա ոչ կտակ և ոչ էլ ժառանգներ թողեց, բայց գեռ Ռոկանայի արգանդում եղած որդուց Աղէքսանդրի կեանքի վերջին րոպէներում ընկերները նրա մահինը շրջապատելով՝ աղեղսել էին, որ յայտնի թէ ումն է թողնում գահը։ Նա հաղի լսելի ձայնով շնչացել էր. «ամենաարժանաւորին»։ Վիշտն ու յուսահատութիւնը տիրեցին Բարելոնին և ամբողջ զօրքին։ Դադարեց համաշխարհային կայսերութեան կենսատու զարկերակը. Վախճանեց թագաւորը, բայց ոչ ոք ըլ կարողացաւ գոչել. «կեցցէ թագաւորը», նրա ամենամօտիկ ազգականը, Փիլիպպոսի կրտսեր որդին և Աղէքսանդրի խորթ եղբայրը, թուլամիտ Արքիդէսն էր։ Սակայն կային շատ զօրտպետներ, ազնուարին մարդիկ՝ քաջութեան և պետական իմաստութեան մէջ փորձուած։ Նրանցից ամեն մէկը համարձակ կերպով կարող էր կայսերութեան կառավարութեան ղեկը ձեռք տանել, եթէ բոլոր ընկերները ընդունէին նրա իշխանութիւնը։ Բայց գրտ մասին խօսք անդամ չէր կարող լինել։ Հէնց տուաջին խորհրդում նրանք ամենածայրահեղ կարծիքներ յայտնեցին։ Պաղսմէսը առաջարշ կեց կայսերութիւնը բաժանել բոլոր զօրապետների մէջ, իսկ Մելիքագոր պահանջեց անյապաղ թագաւոր ճանաչել Հերակլէին կամ Արքիդէսին։ Նա չէր կամենում Բոկանի մանկան ծնուելուն սպասել. որովհետեւ նա ասիուհի էր. և բայց այդ, նա կտրող էր դուստ, ծնել։ Մելիքագը հին մակեդոնական կուսակցութեան մունետիկը դարձաւ, որ կամենում էր անյապաղ թագաւոր ունենալ, և ան-

շուշտ մակեդոնացի։ Բայց մեծամասնութիւնը Պերգիկի առաջարկութիւնն ընդունեց, որը, Հեփեստիոնի մահից յետոյ, զօրապետների մէջ ամենաազգեցիկն էր և արքայական նշանների ու պետական կնիքի պահողը։ Նա առաջարկեց սպասել Թոկոսնի մանկան ծնուելուն և, եթէ նա արու կը լինի՝ թագաւոր ճանաչել. իսկ մինչեւ այդ ժամանակ, խնամակալութիւն կազմել չորս անձինքներից՝ Պերգիկից, Արատերից, Էկոպատից և Անտիպատրոսից։ Այդ որոշման համաձայնեց միայն ազնուապետական հեծելադունդը, իսկ աւելի ժողովրդական հետեւակը բազմ միշտանութիւն հաստատուելուց վախենալով՝ Արքիդէսին Փիլիպոս անունով թագաւոր ճանաչեց։ Քիչ էր մնում զօրքի երկու մասի մէջ արիւնհեղութիւն ծագէր, բայց Պերգիկը նորից խաղաղարար հանդիսացաւ։ Հեծելադունդը Փիլիպոս-Արքիդէսին թագաւոր ճանաչեց միայն ժամանակաւոր, և այն պայմանով՝ որ եթէ Թոկոսնան արու ծնի, այն ժամանակ նա թագաւոր լինի, իսկ հետեւակը համաձայնեց, որ ամենանշանաւոր զօրապետներն իրանց մէջ բաժանեն բոլոր սատրապութիւնները, իսկ խնամակալ լինի Պերգիկը։

Այդ րոպէից օրինաւոր գահաժառանդութեան սկզբ բաւնիքը իւր ամեն նշանակութիւնը կորցրեց։ Մի ամիս անցած Թոկոսնան արու ծնեց, և նա թագաւոր հրատարակուեց՝ Աղէքսանդր անունով։ Այդպիսով, կայսերութեան մէջ երկու թագաւոր կային՝ մէկը թուլամիտ, միւսը մանկահասակ։ Երկուսն էլ Պերգիկի հսկողութեան տակ էին գտնուում, իսկ նրա անկումից ու մահից յետոյ, Անտիպատրոսի, Երբ մեռաւ այդ ծերունի, ազնիւ զօրապետն էլ, այն ժամանակ սկսուեցին ներքին կուիները՝ Արքիդէսը և նրա կինը սպանուեցին Աղէքսանդրի մօր, Ոլիմպիայի հրամանով, որը ինքն էլ շուտով կորաւ, իսկ յետոյ Կասանդր զօրապետը հրամայեց սպանել Թոկոսանցին ու փաքրահասակ Աղէքսանդրին։ Մինչ այս մինչ մէջ բերուեց Բարգինայի որդու, Հերակլէի իրաւունքը

գահի վերաբերութեամբ, բայց երկուսն էլ՝ մայր և որդի, ըռնի մահուամբ վերջ տուին իրանց կեանքին։ Այդպիսով, վերջացաւ Աղէքսանդրի ցեղը։

Բայց նրա ցեղի շարունակութեան մէջ չէր նրա ստեղծած կայսերութեան պահպանման յօյսը, նա չափազանց երիտասարդ մեռաւ. այլ ամբողջ ոյժը զօրքի մէջ էր ամփոփուած. ուստի կայսերութեան գոյութիւնը կարող էր ապահովուել միայն զօրապետներից մէկի կամ միւսի տիրապետութեամբ։ Սկզբում կարծւում էր թէ, իշխելու է Պերգիկը, յետոյ Անդիքոնը և, վերջապէս, Սելևկիոսը, բայց դրանք բոլորն էլ միմեանց խորտակեցին և 301 թուին Աղէքսանդրի կայսերութիւնը բաժանուեց 4 թագաւորութեան. Սելևկիացոցը՝ Սիրիայում և Բաբելոնում, Պողոմեանցը՝ Եգիպտոսում, Լիբիաքինը՝ Թրակիայում և Փոքր Ասիայում, և Կասանդրինը՝ Մակեդոնիայում ու Յունաստանում։ Լիսիմաքի թագաւորութիւնը 25 տարի յետոյ, Կելտերի հարուածների տակ անյայտացաւ. իսկ երեք թագաւորութիւնները պահպանուեցին մինչեւ որ հումէական լեգէսնները նորից միացրին համաշխարհային կայսերութիւնը։

Եթէ միայն արտաքին կազմակերպութեանը նայենք՝ այն ժամանակ Աղէքսանդրի կայսերութիւնը նրա հետ միասին չընկաւ։ Նրա պատկերը դրամւում էր դրամների վերայ, իսկ նրա անունն ու յիշատակը յարգանքով էին յիշւում։ Բայց նրա մահից 10 տարի յետոյ անյայտացաւ նրա կայսերութիւնը վերականգնելու ամեն յօյսը։ Այդ տեսակէտից դատելով, Աղէքսանդրի դործը անյաջող պէտք էր համարել։ Նա ոչնչացրեց այն, ինչ որ գոյութիւն ունէր մինչեւ ինքը, իսկ ինքը չը ստեղծեց ոչ մի կայուն քան։ Արևմտքի և արեւելքի միացման նրա հոգածութիւնները չը ձեւակերպուեցին։ Յունաստանը, Եգիպտոսն ու արևելքը շարունակեցին առանձնակի գոյութիւն ունենալ։

Բայց եթէ գատենք Աղէքսանդրի մասին բարձր պատմական տեսակէտով, այն ժամանակ չէ կարելի ը խոս-

տովանել, որ այն ժամանակ յայտնի ամբողջ աշխարհը
մինչև Աղէքսանդր բաժանուած էր երկու քաղաքականթու-
թեան աշխելեան երկու կենդրուներով՝ որոնք են. Մի-
ջագետքն ու Եղիպտոսը և յունականը, որը արտայայտուամ
էր քաղաքային ինքնավարութեամբ: Խոկ Աղէքսանդրի
ժամանակ քաղաքակարթութեան բաժանող այդ անջրպետը
հեռացուեց և այլ ևս չը վերականգնեց: Միայն կոյրը
կարող է Աղէքսանդրի մէջ չը տեսնել գաղափարական
մարդ, որը ձգտում էր յունաց քաղաքային հաստակու-
թիւնների նեղ եռասիրութիւնը փոխարինել համամրդ-
կային գաղափարներով: Մինչ Աղէքսանդրը՝ գտաւուական
մանր հաստրակութեան քաղաքացիների մասին միայն
հասկացողութիւն կար, իսկ նրանից յետոյ զարդացաւ
ամբողջ աշխարհի քաղաքացիների մասին գաղափարը,
թէե դրա հետ միասին նա արևելքում ազատութեան,
ինքնավարութեան և մարդկային անհատական անկախու-
թեան մասին յունական հասկացողութիւններ էր տարա-
ծում: Յունական կուլտուրան երբէք չէր ունեցել այդպիսի
համաշխարհային աղդեցութիւն, ինչպէս էր Ասիայում և
Աֆրիկայում Աղէքսանդրի հիմնած յունական գաղթակա-
նութիւններից յետոյ, որոնք գլուխ ունենալով Աղէք-
սանդրիան՝ Հռովմի ձեռքով այդ կուլտուրան նոր ժամա-
նակի աշխարհին էին ընծեռում: Աղէքսանդրից յետոյ
Հռոմը ձգտում էր հասնել բոլոր աշխարհի միացմանը
համաշխարհային կայսերութիւն կազմակերպելու միջոցով:
բայց քրիստոնէութիւնը հառաւ նրան համեղբայրական
ներքին գաղափարով:

ՑԱՆԿ.

ՑԱՆԿ.		
Ա. Մանկութիւն և պատանեկութիւն		5 — 20
Բ. Աղէքսանդրի գահ բարձրանալը. — Առաջին ար- շաւանքները. —Պարսից գէմ պատերազմի պատ- րաստութիւնը		20 — 35
Գ. Պարսիկները. —Գրանիկի մօտի կռիւը		36 — 48
Դ. Փոքը Ասիայի նուաճումն		48 — 58
Ե. Խոսի մօտի յաղթութիւնը		58 — 71
Զ. Տիւրոսի պաշարումը		72 — 86
Է. Աղէքսանդրը նեղոսի և Եփրատի ափերում		86 — 102
Ը. Աղէքսանդրի ամենամեծ յաղթութիւնը. վրէժ- իլընդութիւն Գարեհի համար		102 — 116
Թ. Աղէքսանդրի զարոյթն ու սէքը. — Հնդկաստանի արշաւանքը		116 — 136
Ժ. Գիդասպի ճակատամարտը. — Բաբելոն վերադառ- նալը		136 — 151
ԺԱ. Աղէքսանդրի մահը		151 — 166







47

